



ԶԱՄԻԱԾԻՆ





ԽԶ

ՏԱՐԻ




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՌՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Օգոստոս

1989





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սեմատոր Ռոբերտ Դոլը Մայր Աթոռում	3
Աշակերտները շնորհավորում են Վեհափառ ուսուցչին	7
Քառամյակյան ձեռնադրություն Ս. Հովսիսիմե վանքում	12
Տ. Մկրտիչ քահանա թովմասյան	14
ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ—Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի անունը գտնում է իր արժանի տեղը	15
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	18
ԱՐԳԱՄ ԴՈՎԼԱԹՅԱՆ—Խրիմյան Հայրիկի հուշանվերը	19
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆ—Հոգևորականը, հայրենասերը	22
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան նշատաշրջանը	30
Խաղաղության Միջազգային երկրորդ հանդիպումը	32
ԱՎԵՏԻՍ ՀԱՌՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Էջմիածնի գաղթականական համագումարը և նրա պատճառական նշանակությունը	33
Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ—Նալբանդյանի անծանոթ ինքնագիրը	38
ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ—Ուշագրավ մի վավերագիր «Դավիթ-Դագիեյան» վեճի վերաբերյալ	48
Հ. Հ. ԲՅՈՍԵՅԱՆ—Խորհրդանշանը Եղիշեի մեկնաբանական և ճառագրական երկերում	52
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикоста	61
«Etchmiadzin» official monthly of Hoiy Etchmiadzin	62
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzin», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 6.10.1989 թ.: Ստորագրված է տպագրության 9.11.1989 թ.:
Տպագրական 4 մամուլ+3 ներդիր, թուղթ 80×80/6, պատվեր 1889

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1989 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՍԵՆԱՏՈՐ ՌՈՐԵՐՏ ԴՈԼԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ

1989 թվականի օգոստոսի 23-ին և 24-ին պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում ԱՄՆ-ի սենատի գործունյա և հեղինակավոր անդամներից սենատոր Ռորերտ Դոլը: Նա բարձր մակարդակի հանդիպումներ ունեցավ Հայաստանի Հանրապետության ղեկավարության հետ՝ քննելու աղետի հետևանքները, վերականգնման ընթացքը և մանավանդ իրականացվելիք ծրագրերում ԱՄՆ-ի մասնակցության հարցը:

Օգոստոսի 24-ին սենատոր Ռորերտ Դոլը այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ամձամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Նորին Սրբությանը հանձնելու ԱՄՆ-ի նախագահ տիար Զորջ Բուշի հետեյալ նամակը.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայաստան, Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Հանույ՜ով է, որ Ձեզ ներկայացնում եմ սենատոր Ռորերտ Դոլին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատի փոխամասնության ղեկավարին և իր տիկնոջը՝ էլիզաբեթին, որը Աշխատանքի և Նախաժամանակներին է: ԱՄՆ-ի արտաքին գաղափարականությունը զարգացնելու և կիրառելու գործում մեծապես հիմնվում եմ սենատոր Դոլի վրա: Նախաժամանակի տիկին Դոլը իմ գրասենյակի գնահատված անդամներից է և մասնագետ աշխատանքային բոլոր հարցերում:

Դուք անկասկած արդեն գիտեք սենատոր Դոլի կատարած աշխատանքի մասին՝ ի պաշտպանություն աշխարհով մեկ մարդկային իրավունքների: Նա հատուկ հետաքրքրություն է ցուցաբերել հայ ժողովրդի պատմական և ժա-

մանակից խնդիրների նկատմամբ: Իր ղեկավարությունը վնասակար էր Հայաստանի երկրաշարժի սգնության ամերիկյան աշակցությունը կազմակերպելու գործում:

Մեծապես ուրախ եմ, որ 'Իոլ ամուսինները այս նախապահություններ հանձն են առնում: Ձեր առջև կանգնած հարցերի հետ նրանց անմիջական ծանոթությունը պիտի սատարի՝ ուղղություն տալու ԱՄՆ-ի էմբեզիոսին և ինձ խորհուրդ հայթայթելու գործում: Հուսով եմ, որ 'Իոլի նրանց լրիվ պիտի ծանոթացնեմ Ձեզ հուզող խնդիրներին և ձեր ժողովրդի ձգտումներին՝ բարեփոխության բարեպատեն այս ժամանակներում: Նրանք անձնապես և բաղափականորեն շատ մոտիկ են ինձ, և ես խնդրել եմ նրանց, որ վերադառնալիս ինձ զեկուցեն իրենց անձնական կարծիքները՝ իրավիճակի մասին:

Անկեղծորեն՝

ՋՈՐՋ ՐՈՒՇ

Վաշինգտոն, Մայիսի 10-ին,
16 օգոստոս 1989 թ.

Վեհափառ Հայրապետը շքեղ ընդունարանում ընդունեց պրն. սենատորին և նրա շքախմբին: Նորին Սրբությունը բարի գալուստ մաղթելով մեծարգո սենատորին՝ ասաց.

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍԵՆԱՏՈՐ ՌՈԲԵՐՏ ԴՈՒԼԻՆ

Ես այս պահուն շատ հուզված եմ: Իմ խորին գոհունակությունն եմ հայտնում, որ հարգալից սենատոր Դոլ, իր նախարարների տիկինը և իր շքախումբը այցելության են գալիս Խորհրդային Հայաստան և հիմա՝ Սուրբ Էջմիածին: Բարի գալուստ եմ մաղթում: Իմ առաջին զգացումն է և մտածումը շնորհակալություն հայտնել Ամերիկային, որ այնքան տաք սրտով, ջերմությամբ վերաբերվեց Հայաստանին այս երկրաշարժի աղետի առիթով: Ես այդ զգացի ինքս անձամբ, երբ անցյալ փետրվարին գտնվեցի Նյու Յորքում մահ մեր այցելության առիթով պրեզիդենտ Բուշի մոտ: Հետո այն հուզիչ պահին, երբ օդակայան զնացի՞նք, թուր Հայաստանից վերադառնալիս երեսններ բերվեցին և այնտեղ ներկա էր մահ պրեզիդենտ Բուշի տիկինը: Եվս բազում արտահայտություններ՝ ցավակցության և օգնության, որոնք գալիս են Միացյալ Նահանգներից: Վստահ եմ, որ նույն զգացումներով դուք եկած եք այսօր: Գոհություն և շնորհակալություն: Աստված օրհնե Ամերիկան, որպեսզի ընդհանրապես աշխարհում կայուն հաստատվի խաղաղությունը և ժողովուրդների բարեկամությունը: Այստեղ դուք գտնվում եք Սուրբ Էջմիածնում պատմական կենտրոնը հայ քրիստոնյա ժողովրդի: Ինչպես գիտեք, հայ ժողովուրդը առաջիններից եղավ, որ իր սիրտը բացեց Քրիստոսի Ավետարանին և պաշտոնապես քրիստոնեական կրոնը պետականորեն ընդունեց 801 թվականին: Այն ժամանակ Հայաստանը շատ ավելի մեծ էր, պատմական Հայաստանը: Այսօրվա խորհրդային Հայաստանը պատմական Հայաստանի մեկ ութերորդ կամ մեկ իններորդ մասն է: Բայց մեր ճակատագիրը այդպես եղավ պատմության ընթացքին. այդպես



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԵՆԱՏՈՐ ՌՈԲԵՐՏ ԴՈՒԼԻ ՀԵՏ

(24 օգոստոսի 1989 թ.)



ՄԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԵՆԱՏՈՐ ՌՈԲԵՐՏ ԴՈՒԼԻ ԵՎ ՆՐԱ
ԾԳԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

(24 օգոստոսի 1989 թ.)

եթե քիչ-շատ բնականոն կյանք ունենար հայ ժողովուրդը իր պատմական հողամասի վրա, այսօր պիտի լինե՞ր 40 կամ գուցե 50 միլիոնանոց մի ժողովուրդ մեծ մի երկրի մեջ: Մեր ճակատագիրը այդպես եղավ, հետևաբար մեր պարտականությունն է պահպանել ազգը կենդանի այս փոքրիկ հողամասի վրա, որ կոչվում է այսօր Խորհրդային Հայաստան, ուր ապրում են շուրջ երեք և կես միլիոն հայեր: Խորհրդային միությանն այլ հանրապետությունների մեջ կան ավելի քան մեկ և կես միլիոն հայեր, իսկ արտասահմանում շուրջ երկու միլիոն. եթե չեմ սխալվում շուրջ ութ հարյուր հազար Հյուսիսային Ամերիկայում և Կանադայում, ուրեմն ընդամենը շուրջ յոթ միլիոն ժողովուրդ ենք: Եվ հպարտ ենք պահպանելով մեր քրիստոնեական հավատքը: Անցյալում դժվար պայմանների մեջ գտնվելուց հետո այսօր մենք շատ ավելի նպաստավոր պայմանների մեջ կազմակերպում ենք մեր կրոնական կյանքը Հայաստանում: Վերջին ամիսներին մենք մեր 10—15 եկեղեցիներ բացեցինք և՛ Հայաստանի մեջ, և՛ Ղարաբաղում, և՛ Ռուսաստանում: Ծրագրած ենք մոտ ամիսներին ևս շուրջ 15 վանքեր և եկեղեցիներ բացել: Անշուշտ մեր կրոնական կապերը, հարաբերությունները շատ սերտ են արտասահմանի մեր հայկական եկեղեցիների հետ: Արտասահմանի հայկական եկեղեցիները կազմակերպված են իրենց տեղական օրենքների և կանոնադրությունների համաձայն: Այսպես. օրինակի համար արտասահմանի եկեղեցիների հոգևորականները կամ եպիսկոպոսները կենտրոնից չեն մշակվում, այլ ընտրվում են տեղի հավատացյալների կողմից. Կաթողիկոսը այստեղից իր օրհնությունն է տալիս, սա մեր ավանդական սիստեմն է՝ դեմոկրատական: Եվ փառք Աստուծո, նաև մեր խորհրդային պետական իշխանությանց բարյացակամությամբ, մենք հետզհետե ավելի ամուր հիմքերի վրա ենք դնում և զարգացնում կրոնական կյանքը Հայաստանում: Պետք է ասեմ, որ մեր ժողովուրդը հետզհետե ավելի խանդավառությամբ է դիմում դեպի եկեղեցի: Եվ մի քիչ գուցե շատ բացատրելի չլինի, բայց այս երկրաշարժից հետո մեր ժողովրդի կրոնական զգացումը ավելի գորացավ: Եկեղեցուն դիմում են իբրև հույսի և մխիթարության աղբյուր: Մեր Եկեղեցին շատ սերտ հարաբերությունների մեջ է նաև մյուս քույր քրիստոնյա Եկեղեցիների հետ. օրթոդոքս Եկեղեցու, կաթոլիկ Եկեղեցու, բողոքական Եկեղեցու, անգլիկան և այլն: Մեր Եկեղեցին անդամ է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և իր ակտիվ մասնակցությունն է բերում էկումենիկ շարժմանը: Ահա մի քանի խոսքով պատկերը մեր այսօրվա կյանքի: Կրկին բարի գալուստ ենք մաղթում: Եվ Աստուծո օրհնությունը Ձեզ և Ձեր ընտանիքին:

Պատասխան խոսք ասաց պրն. սենատորը՝ շնորհակալություն հայտնելով իրեն ընծայված այս մեծ պատվի համար, և արտահայտեց Միացյալ Նահանգների կառավարության և ժողովրդի հաստատակամությունը՝ հետ այսու ևս օգնելու հայ ժողովրդին՝ բուժելու սարսափելի աղետի վերքերը:

Ապա պրն. սենատորին ուղեկցող՝ նախագահ Ջ. Բուշի աշխատանքի գրասենյակի քարտուղար տիկին Էլիզաբեթ Դոլը հուշագրության մատյանում արձանագրեց.

Ձերդ Սրբություն, խորապիսի երախտապարտ եմք Ձեզ այցելելու պատեհության համար, մի մարդու, որու հանդեպ տածում եմք մեծագույն հարգանք և հիացում: Դա իսկական առանձնաշնորհ է մեզ՝ հավատակից քրիստոնյաներիս համար, այցելելու այս հնագույն Տանաբը:

Սրտաբուխ շնորհակալությամբ՝

ԷԼԻԶԱԲԵԹ ԴՈՒԼ
ԲՈՒՐ (ՌՈՒՐԵՐՏ) ԴՈՒԼ

Հյուրերը մեկնեցին՝ ամերիկյան ժողովուրդին տանելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնություններն ու քարեմաղթությունները:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ վերադարձից հետո սեմատոր Ռոբերտ Դոլը իր տիկկնոջ հետ Վեհափառ Հայրապետին հղեցին հետևյալ շնորհակալական նամակը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա.
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայաստան, Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Մենք անկեղծորեն գնահատեցինք Ձեր հոծարակամությունը ընդունելու մեզ և տրամադրելու Ձեր այնքան քանկ ժամանակից՝ Հայաստան վերջերս մեր կատարած այցելության ընթացքին:

Բոլոր հայցելուների նման, մենք տխրեցինք հայ ժողովրդի կրած անավար խղիճի նամար: Սակայն, միևնույն ժամանակ, մենք ոգեշնչվեցինք նրանց քաջությամբ և վհականությամբ՝ քարգավանելու և վերականգնելու իրենց անձնական և հասարակական կյանքը:

Ձեր հույսի և հավատքի խոսքերը հուզեցին քույրիս, և մենք կիսում եմք Ձեզ հետ այն հույսը, որ համեն անգամ քաջ կամքի տեր ժողովուրդներ պիտի շարունակեն հոգալ հայ ժողովրդի կարիքները՝ ըմբռնողությամբ և առատաձեռնությամբ: Իհարկե մենք ուխտել ենք անել այն ամենը, ինչ կարող ենք, որպեսզի վկայենք, թե մեր երկիրը և ժողովուրդը շարունակում են օգնել՝ հոգ տանելու աղետյալներին և նպաստելու վերականգնման ջանքերին:

Մեկ անգամ ևս, Ձերդ Սրբություն, մեր շնորհակալություններն ու գնահատանքը Ձեր ջերմ հյուրընկալության համար և այն պատեհության համար, որ Դուք ընծայեցիք մեզ՝ այցելելու Ս. Էջմիածին:

Անկեղծորեն Ձեր՝

ՌՈՒՐԵՐՏ ԴՈՒԼ

ԷԼԻԶԱԲԵԹ ԴՈՒԼ

Վաշինգտոն,

28 օգոստոսի 1989 թ.



ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԾՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՎԵՀԱՓԱՌ ՈՒՍՈՒՑՉԻՆ

Գեղեցիկ է, երբ երկար տարիների հեռավորությունից աշակերտները համախմբվում են իրենց ուսուցչի շուրջ՝ հայտնելու իրենց երախտագիտությունը, ցույց տալու վաստակաշատ ուսուցչին, որ գուր չի վատնվել բարի շունչը, որ թափված ջանքերը պտղավորվել են՝ ժողովրդին պարգևելով արժանավոր զավակներ:

Այդ օրը հավաքվել էին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ումիմահայ աշակերտները՝ բոլորն էլ այսօր հասուն մարդիկ, Մայր Հայաստանում իրենց դիրքն ու պատիվը վաքելող անձինք: Եկել էին շնորհավորելու Վեհափառ Հայրապետին՝ իրենց սիրելի ուսուցչին, իր տարիների վաստակի և Հայաստանյայց Եկեղեցուն ու հայ ժողովրդին մատուցած բազմարդյուն ծառայությունների համար:

Վեհափառի բանասեր և պատմաբան աշակերտ Սուրեն Քոլանջյանը խոսք առնելով, ասաց.

«Ձերդ Սրբությունը, հակառակ իր բազմազբաղ վիճակին, միշտ էլ սիրով է ընդունել իր ավագ աշակերտներին: Արդեն հինգերորդ անգամն է, որ ընդունում եք մեզ, որի համար ի խորոց սրտի հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը: Սակայն, հազար ներողություն Ձեզ, որ հագիվ այսօր շատ մեծ ուշացումով է, որ կուգանք շնորհավորել Ձերդ Սրբության ծննդյան փառապանծ 80-ամյակը, մեր ժողովրդի համար 1988 թ. ընթացքում տիրող անբարենպաստ պայմանների հետևանքով:

Բացեցիք Ձեր աչքերը Ռումինիայի մայրաքաղաք Պուրբեշի հյուրընկալ հողում, ուր մեր նախնիները դարեր շարունակ խաղաղ ապաստան էին գտել: Ձեր երջանկահիշատակ Մայրիկը՝ մեր անմոռանալի Տիրամայրը, 1915 թ. Մեծ եղեռնի օրերին Ձեր վեց տարեկանի լուսանկարին Ձեր բերանից գրել էր մարգարեաշունչ տողեր.

«Անունս է Լևոնիկ
Բոլորած եմ վեց տարիք,
Մաղթեցեք դուք ի սրտե
Աստված ինձ անփորձ պահե
Որպեսզի ըլլամ քաջ արի,
Զինվոր Մայր Հայաստանի. Լևոն Պալճյան»:

Այո՛, անմոռանալի Տիրամայր, Աստված անփորձ պահեց Ձեր միևնույն օրդուն, որպեսզի Նա զինվորագրվի Մայր Հայաստանին և համայն հայությանը իբրև ուսուցիչ և իբրև հոգևոր գործիչ:

Սկսած Ձեր երիտասարդական տարիներից, Դուք չունեցաք Ձեր անձնական կյանքը, այլ այն առանց մնացորդի մվիրաբերեցիք հայ մոր սերունդների դաստիարակման գործին, հայ գրին ու Հայ Եկեղեցիին: Պուրքեշի երբեմնի Միսաքյան-Քեսիմյան ազգային վարժարանի գրասեղանների վրա մեզ սովորեցրիք սիրել ճշմարտությունն ու ուսումը, աշխատասեր լինել, ամբողջ հոգով սիրել հայ ազգն ու հայ մշակույթը, մեր Հայրենիքը:

Մի երջանիկ օր Սուշավայի Հաճկատարի Ս. Աստվածածին եկեղեցուց հասաք մինչև Միածնաէջ Ս. Էջմիածնի Լուսավորչահաստատ գահը՝ իբրև 130-րդ ազգընտիր գահակալ Ամենայն Հայոց: Նոր կյանքի կոչեցիք Մայր Աթոռը և արդարորեն արժանացաք Ծինարար Հայրապետի պատվանունին: Հաճախակի Հայրապետական այցելություն տալով Ձեր հոտին, ոսկե կամուրջ ստեղծեցիք Ս. Էջմիածնի ու Հայրենիքի՝ ի սփյուռս ցրված հայության միջև: Ձուլման եզրին հասած մոր սերունդներին մոր կյանք պարզեցիք Մայր Աթոռի ու Հայրենիքի սրբազան տեսիլքով, մեկ Եկեղեցի, մեկ ազգ, մեկ Հայրենիք նշանաբանով: Ձեր վերջին իրագործումները եղան վերստեղծումը Սյունիքի թեմի, մանավանդ կյանքի կոչեցիք Արցախի մոր թեմը:

Այսօր Ձեր ավագ աշակերտները ամբողջ սրտով Ձեզ մաղթում են, որ Խորհրդային Միության ժողովրդական պատգամավորի Ձեր բարձր աթոռից կարողանաք տեսնել Արցախի արդար հարցի լուծումը, նրա միացումը Մայր Հայաստանի հետ, դրանով սրբագործելով մեր բյուրավոր նահատակների իղձերը:

Թանկագին ուսուցիչ, այսօր թե՛ Հայրենիքում, թե՛ Սփյուռքում Ձեր աշակերտները, Ձեր մեծ օրինակից ներշնչված, իրենց ուժերի ներածին չափով լծված են ազգանվեր ու հայրենաճակեր աշխատանքների: Մեծ պատիվ է մեզ համար նշել, որ Ձեր աշակերտությանից Վարդուհի Վարդերեսյանը արժանի կերպով ստացավ Խորհրդային Միության ժողովրդական դերասանուհու բարձր կոչումը: Ձեր աշակերտներից է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ազգագրության, հնագիտության ինստիտուտի տնօրենը, կան բարձր ուսումնական հաստատությունների ամբիոնի վարիչներ, գիտության դոկտորներ, թեկնածուներ, մկարչուհի, ինժեներներ, ուսուցիչներ, արհեստավոր վարպետներ և այլն:

Աշխարհում ցրված Ձեր բոլոր աշակերտների անունից Ձեզ ի խորոց սրտի ցանկանում ենք արևշատություն՝ հայ ժողովրդի իղձերի պսակումը տեսնելու համար: Դուք դարձյալ պետք է կոչվեք մեր ամենաներջանիկ Հայրապետը: Հարգանք, պատիվ Ձեզ»:

Ապա սրտագին խոսք ասաց Խորհրդային Միության ժողովրդական արտիստ, դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանը:



ՍԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐ ԱՇԽԱՏԱՆԵՐԻ ՀԵՏ

«Անթիվ են մարդկային սրտում հույզերը և, ավա՛ղ, սահմանափակ մարդկային լեզվի հնարավորությունները՝ ընդհանուր զգացումները արտահայտելու համար: Եվ հիմա դժվար է գտնել բառեր՝ Վեհափառի անձն ու գործը գեթ մոտավոր չափով դրվատելու համար: Ինձ համար առավել դժվար է և այն պատճառով, որ ես մանկությանս անուրախ, անարե տարիներին բախտ եմ ունեցել աշակերտը լինելու մեր Սրբազնագույն Հոր, և աշակերտի առ ուսուցիչն ունեցած ակնածանքը նույնպես կաշկանդում է գրիչս: Սոսկ ուսուցիչ չի եղել Վեհափառը ինձ համար սովորական իմաստով, եղել է խավարը ցրող լուսավոր մի ջահ, լուսավորել իմ և ինձ մեզն որբուկների ճամփան, և ես իմացել եմ մի մեծ ճշմարտություն, թե ով եմ, որտեղից եմ գալիս և դեպի ուր պիտի գնամ:

Այսօր էլ այս դառն ու դժգի ժամանակներում, երբ վիշտն ու ցավը սպառնում է շնչահեղձ անել մեր աղետավոր ժողովրդին, շտապում եմ Վեհափառին տեսնելու... Որպիսի՜ անդորր, որպիսի՜ խաղաղություն կա նրա դեմքին, որքա՛ն իմաստություն խոսքի ու խորհուրդների մեջ, գոյատևումի որքա՛ն հավատք աստվածահմա նրա անձի մեջ: Այս է, որ Վեհափառից փոխանցվում է հայ քրիստոնյա մարդկանց, պահում հայության անկոտրում ոգին:

Մի կատարյալ քառս կլիներ աշխարհը, եթե ժամանակի մեծ հատվածների սահմանազիխն չհայտնվեին ժողովրդի ճանապարհը լուսավորող ջահերը, իմաստուն այրերը: Ահա այսպիսին է հայոց Հովվապետը, որի օրհնյալ ծնունդի առիթով աղոթք են մրմնջում շուրթերս. «Հայր մեր, որ յերկինս ես...»:

Երկա՛ր արև Վեհափառին մեր, երկա՛ր արև Հայաստան աշխարհին, հավերժություն ժողովրդին հայոց»:

Հետո ձայն խնդրեց Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական ինստիտուտի ամբիոնի վարիչ Հակոբ Առաքելյանը.

«Ձերդ Սրբություն, սիրելի Ուսուցիչ,

Այսօր հինգերորդ անգամն է, որ հայրենաբնակ Ձեր նախնին աշակերտները եկել են ողջունելու Ձեզ: Այսօր, ինչպես ամեն անգամ ասելու՝ նոր խոսք ունենք, քանզի Ձեզ քնորոշ երիտասարդական ավյունով Դուք ծավալում եք բեղմնավոր և բազմակողմանի գործունեություն: Միայն վերջին մեկ և կես տարում շարունակելով և զարգացնելով մեր Հայ Առաքելական Լուսավորչական Եկեղեցու պատմական ավանդույթները, Դուք, որպես ժողովրդի հոգևոր Հովիվ, Ձեր ձայնը միացրիք մեր ժողովրդի արդար պահանջին՝ Արցախը Մայր Հայաստանին միավորելու, սարսափելի արհավիրքի օրերին եղաք ժողովրդի հետ, կիսեցիք նրա ողբը, գոտեպնդեցիք, հույս ներշնչեցիք հարյուր հազարավոր սգավորներին ու աղետյալներին: Մեր ժողովրդի համար այս ճակատագրական օրերին Ձերդ Սրբությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, և Մեծի Տանն Կիլիկիո Ս.Ս. Կաթողիկոս Գարեգին Բ-ը իմաստությամբ և խոհեմությամբ հաշտության ուղին հարթեցիք և երկու Հայրապետներդ հովվական առաքելություն ձեռնարկեցիք Սփյուռքի հայաշատ գաղութները...

Ձերդ Սրբության բազմակողմանի և բեղմնավոր գործունեության շնորհիվ մեր երկրի և արտասահմանի ժողովուրդները ավելի լավ են ճանաչում

Բայ ժողովրդին, նրա հնադարյա Եկեղեցին, պատմությունը, մշակույթը, նրա իղձերը:

Ամեն անգամ, երբ մեր հանրապետությունում կամ նրա սահմաններից դուրս Ձեր մասին հարգանքով և պատկառանքով են խոսում, այսօրվա հավաքին ներկաներից յուրաքանչյուրն անպայման հպարտությամբ ասում ենք, որ եղել ենք Ձեր աշակերտները և զգում ենք, որ մեր նկատմամբ վերաբերմունքն ավելի հարգալի է դառնում...»:

Ապա սրտառույ խոսքով հանդես եկավ երկար տարիներ Արխագիայում հայ սերունդների դաստիարակությամբ իր կյանքը անկրած Մադեն Սանթուրջյանը.

«Սիրելի Ուսուցիչ,

Ծանկանում եմ Ձեզ երկար կյանք ու բեղմնավոր գործունեություն: Դուք համաշխարհային համբավ ունեցող հոգևոր ու ազգային գործիչ եք: Ձեր դերը մեծ է աշխարհում խաղաղության պահպանման գործում, սփյուռքահայության հետ հոգևոր կապերի ստեղծման ու խորացման հարցում:

Ես հպարտ եմ, որ Ձեր աշակերտութիւնն եմ եղել և սովորել եմ այն վարժարանում, որտեղ և դուք եք սովորել ու ապա դասավանդել: Հոգուս մոտ զգալով Ձեզ, համարձակվում եմ հայտնել իմ մտորումները և ինձ հուզող մի շարք կարևոր և նուրբ հարցեր...

Երկար ժամանակ ընտանեկան պայմաններից ելնելով, բացակայել եմ Հայաստանից, համարյա 30 տարի լուսավորչական աշխատանք եմ կատարել Արխագիայի հայկական դպրոցներում (Գագրայում և նրա շրջանի դըսրոցներում), շփվել եմ տեղի հայության հետ:

Արխագիայում ապրում եմ 100.000-ից ավելի հայրենասեր հայեր, որոնց պատմությունը գալիս է դեռևս վաղ միջնադարից և որոնք հայկական բնօրրանից հեռու՝ պահպանել են իրենց լեզուն ու սովորությունները: Գոյություն ունեն հայկական դպրոցներ, սակայն աշակերտության քանակը տարեց-տարի նվազում է, Հայաստանը ուղարկում է դասագրքեր և ... վերջ: Հայության հոգևոր կապը Մայր Հայաստանի հետ անբավարար է:

Ես գտնում եմ, որ չպետք է բավարարվել միայն արտասահմանյան Սփյուռքի հարցերը որոշելով, այլ ուշադրություն պետք է դարձնել նաև մեր ներքին Սփյուռքի վրա, այն հսկայական գաղթօջախների վրա, որոնք այժմ, ավելի քան երբևիցե, հոգևոր սննդի կարիք ունեն, մշակութային նշանավոր մտավորականների և հասարակական գործիչների հետ հանդիպումների, հայ մշակույթի պահպանմանը և տարածմանը, հայապահպանությանը և Հայրենիք—«Սփյուռք» կապերի ամրապնդմանը: Այո, դա մեր «ներքին Սփյուռք»-ն է և օգնության կարիք ունի, քանի որ այդտեղ ժամանակին գործել են հայկական եկեղեցիները, հայկական թատրոնը, աշխատել և թերթ է լույս ընծայել հայկական տպարանը, սակայն անհատի պաշտամունքի տարիներին փակվել են և այդպես էլ մնացել են մինչև օրս:

Թիֆլիսում հրատարակվող «Սովետական Վրաստան» թերթը համարյա չի արտացոլում Արխագիայում ապրող 100.000 հայերի կյանքն ու հուզող հարցերը: Արխագիայում ապրող հայերը չգիտեն իրենց ժողովրդի պատմությունը, քանի որ այն դպրոցներում չի դասավանդվում: Հայերին միացնող մի ընդհանուր կապ գոյություն չունի, հայկական դպրոցների աշակերտության քանակը նվազում է: Պետք է բացահայտել ու կանխել այն

բոլոր հանգամանքները, որոնք այդ խոշոր հայկական «ներքին Սփյուռք»-ի ծերացման, նորացման ու քայքայման պատճառն են հանդիսանում:

Եվ վերջապես՝ չէ՞ որ Միության մեջ սփռված հայկական օջախների պատմությունն ու գոյությունը հայ ժողովրդի պատմությունն ամբողջացնող և հայապահպանման բաղադրյալ մասերից մեկն է, որը խիստ կարիք ունի ուղղորդության:

Վեհափառ Տեր, ինչպես հայտնի է, հայկական Եկեղեցին իր ժողովրդի հարատևության, պահպանման հարցում ունի դարավոր փորձ և, այժմ ևս, մեծ է նրա դերը»:

Վերջում ջերմ շնորհակալության խոսք ասաց և իր աշակերտներին նույն եռանդով ոգևորեց Ուսուցիչը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:





ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 2-ին, կիրակի օրը, Պայծառակերպության տոնին, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, կատարվեց Աշոտ սրկ. Թովմասյանի քահանայական ձեռնադրությունը:

Քահանայական ձեռնադրությունը տեղի ունեցավ Ս. Հռիփսիմե վանքում՝ ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Պարզև եպս. Մարտիրոսյանի:

Հուլիսի 1-ին կատարվեց նորընծայի «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը, ըստ Ձեռնադրության Մաշտոցի՝ խարտավիլակությամբ Ս. Միքայել արղ. Աջապահյանի:

Հուլիսի 2-ին, ս. պատարագից առաջ, նորընծան ծնկաչոք բարձրանում է խորան և, ձեռքերը բարձրացրած դառնալով դեպի ժողովուրդը, հրաժարվում է աշխարհից՝ կոչվելու համար «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն սուրբ եկեղեցւոյ»: Հնչում է «Աստուածաբն և երկնային շնորհ» շարականը: Ապա նորընծան մոտենում է Ս. Պարզև եպիսկոպոսին, որը և ձեռքը դնե-

լով նրա գլխին՝ հանդիսավոր կերպով արտասանում է ձեռնադրության աղոթքը. «Եւ դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

«Ողջոյն»-ից առաջ նորընծան ստանում է քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ:

Ձեռնադրության խորհրդավոր պահն է: Ձեռնադրող սրբազան հայրը օծում է նորընծայի ճակատը և վերանվանում Ս. Մըկըրտիչ քահանա:

Նորընծա Ս. Մկրտիչ քահանան տալիս է իր առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Հավարտ պատարագի հոգևորականաց, սարկավագաց ու դպրաց դասը, ինչպես նաև ներկա հավատացյալ ժողովուրդը շնորհավորում են նորընծա քահանային՝ սրտագին քարենաղթություններով:



Օծման պահ



Տ. ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ծնվել է 1951 թ. հուլիսի 17-ին ՀԽՍՀ Մարտունու շրջանի Զոլաքար գյուղում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1969—70 թթ. աշխատել է Արփա-Սևան ջրատարի հմր. 3 տեղամասում:

1971 թ. ընդունվել է Երևանի իս. Արտվյանի անվան մանկավարժական ինստիտուտ:

1974—76 թթ. ծառայել է սովետական բանակում:

1976 թ. շարունակել է ուսումը մանկավարժական ինստիտուտում և ավարտել 1979 թ.:

1979 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից դասարան և ավարտել 1981 թ.:


1981 թ. դեկտեմբերի 26-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ գերաշնորհ Տ. Արսեն եպս. Բերբերյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1981—84 թթ. ծառայել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցում որպես սարկավագ:

1984—88 թթ. աշխատել է հոգևոր ճեմարանում որպես վերակացու:


1988—89 թթ. ծառայել է Ս. Հռիփսիմե վանքում որպես սարկավագ:

Քահանայական ձեռնադրությունից հետո, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, աշխատանքի է նշանակվել Արցախի նորաբաց թեմում:



«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա Տ. Մկրտիչ քահանային և մաղթում եկեղեցանվեր ու ազգօգուտ ծառայություն Արցախի հայոց թեմում:





ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԱԾՅՈՒՆԸ ԳՏՆՈՒՄ Է ԻՐ ԱՐԺԱՆԻ ՏԵՂԸ

19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին կեսի հայ հոգևոր կյանքի մեծագույն դեմքերից է Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որի եկեղեցական անձնվեր ծառայությունն ու գիտական վաստակը բացահայտում են իր կոչմանը ամբողջապես ընծայաբերված հոգևորականի օրինակելի կերպարը: Վաստակաշատ եկեղեցականը իր մահկանացուն կնքեց ծերունագարդ տարիքում և թաղվեց անփառունակ, Երևանի քաղաքային գերեզմանատանը: 1939 թվականին շատ եկեղեցականներ նույնիսկ անգերեզման մնացին:

Եվ ահա, ընդառաջելով հանգուցյալի հարազատների խնդրանքին, ինչպես նաև տիպար հոգևորականի անյունը եկեղեցական հարազատ միջավայրում պարփակելու համար, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կարգադրեց հանգուցյալի անյունը տեղափոխել Ս. Գայանե եկեղեցու միաբանական գերեզմանոց:

Մայր Աթոռի միաբանությունը, Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի գլխավորությամբ, ջերմեռանդ աղոթքով և հանդիսավորությամբ կատարեց այդ սուրբ պարտականությունը:

«Յաւերժական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ

Մեսրոպ (ավագանի անունը՝ Փարսադան) Վարդանի Տեր-Մովսիսյանը ծնվել է 1865 թ. մայիսի 7-ին Տաթևի վիճակի Ծիկահող գյուղում: 1882 թ. ավարտել է Ծուշու թեմական, 1885-ին՝ Թիֆլիսի Ներ-

սիսյան դպրոցները: 1887 թ. Ռևելում հանձնել է գիմնազիայի ծրագրով նախատեսված քննությունները, ավարտական վկայական ստացել և նույն թվականին ընդունվել Դորպատի համալսարանի դասական բանասիրության բաժանմունք: 1891 թ. համալսարանն ավարտել է գերազանց գնահատականներով: Խոնական հնագիտությանը վերաբերող նրա ավարտական շարադրությունն արժանացել է բարձր գնահատականի: Դորպատից գնացել է Վիեննա, աշխատակցել Միխայիլանների «Հանդես ամսօրեայ» պարբերականին, հայերեն և գերմաներեն լեզուներով հրատարակել «Հայ գյուղական տունը» ազգագրական աշխատությունը: 1892 թ. սկզբներին անցել է Փարիզ, մի քանի ամիս հետո, որպես հայագիտության դասատու, հրավիրվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան:

1893 թ. ապրիլի 24-ին ձեռնադրվել է արքեպիսկոպոս Մեսրոպ անունը, նույն տարվա հունիսի 10-ին հրաժարվել է ճեմարանի դասատուի պաշտոնից, նույն ամսվա 21-ին նշանակվել նորընտիր կաթողիկոսին Երուսաղեմից Էջմիածին ուղեկցող պատգամավորության անդամ, ուղիղ մեկ ամիս անց էլ՝ ստացել վարդապետի հոգևոր աստիճան:

1894 թ. ամռանը մասնակցել է Ինսբրուկի մարդաբանների և Ժնևի՝ արևելագետների ժողովներին: 1895 թ. դեկտեմբերի 16-ին նշանակվել է Երևանի թեմական դպրոցների տեսուչ, 1896 թ. սեպտեմբերի 4-ին՝ Ծուշու թեմական դպրոցի տեսուչ, 1898 թ. հոկտեմբերի 3-ին՝ Ծուշու կոնսիստորիայի նախանդամ:

1899 թ. դեկտեմբերին մեկնել է Պետերբուրգ, նախապատրաստվել մագիստրոսի





Մեսրոպ սրբեպա. Տեր-Մովսիսյան

(թեկնածուական) թեզի պաշտպանության, ուսումնասիրության թեման էր «Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը»։ պաշտպանությունը եղավ 1902 թ. դեկտեմբերի 15-ին, հեղինակն ստացավ հայ բանասիրության մագիստրոսի (այստեղից էլ նրա Մագիստրոս մականունը) աստիճան։

1908 թ. փետրվարին վերադարձել է Էջմիածին, նշանակվել «Մանյուն ուսումնական հանձնաժողովի անդամ»։ 1905 թ. փետրվարին սկսված բանակցությունների ընթացքում նաև նրա ջանքերի շնորհիվ նույն տարվա օգոստոսին վերաբացվում են հայկական դպրոցները և վերադարձվում եկեղեցական կալվածները։

1910 թ. հունիսին նշանակվել է Գևորգյան ճեմարանի տեսուչ։ մի տարի անց՝ հրաժարվել պաշտոնից։ 1908 թ. սեպտեմբերին նշանակվել էր Էջմիածնի Սինդի անդամ, 1909 թ. գարնանը Պոլսից Էջմիածին է ուղեկցել նորընտիր կաթողիկոս Մատթեոս Բ Իգմիրյանին, հոկտեմբերին՝ ստացել ծայրագույն վարդապետի աստիճան և ձեռնադրվել եպիսկոպոս։ 1908 թ. հոկտեմբերի 31-ից ի վեր վարում էր նաև մատենադարանապետի պաշտոնը։ 1908—1911 թվականների ընթացքում նրա ջանքերով կառուցվում է մատենադարանի նոր հատուկ այդ նպատակի համար նախագրծված շենքը, 1912 թ. ձեռագրերը փոխադրվեցին այդ շենք։

1913 թ. հունվարի 18-ից մինչև 1916 թ. կեսերը վարել է Վրաստանի և Իմերեթիայի հայոց, 1916 թ. մինչև 1917 թ. վերջը՝ Աստրախանի հայոց թեմերի առաջնորդության պաշտոնները։ 1918—1920 թթ. կրկին վարել է մատենադարանապետի պաշտոնը։ 1922 թ. աշնանից մինչև 1931 թ. աշուն վարել է Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմակալ առաջնորդի պաշտոնը։

Վախճանվել է 1939 թ. հունիսի 3-ին, Երևանում։

Ունի 130-ից ավելի ծավալուն կամ փոքրածավալ աշխատություն, որոնցից կարեւորագույններն են.

1. Ընդհանուր ցուցակ հայերեն ձեռագրաց—Պարունակում է 23500 հայերեն ձեռագրի մանրամասն նկարագրություն (անտիպ. պահպանվում է Մաշտոցի անունի Մատենադարանում)։

2. Աստուածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը, Ս. Պետերբուրգ, 1902 (ռուսերեն)։

3. Հայ գիղական տունը, Վիեննա, 1894. գերմաներեն՝ Վիեննա, 1892.

4. Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմություն..., Վաղարշապատ, 1897.

5. Նկարագրություն հոգևոր վարուց Յովսափու, որդւոյ թագաւորին Հնդկաց, Վաղարշապատ, 1897.

6. Հատուածք երկաթագիր Հին Կտակարանի՝ հանդերձ հնագրական պատկերաւ. Պետրոգրադ, 1915 (ռուսերեն)։

7. Պատմութիւն Ծապհոյ Բագրատունւոյ (Գ. Տէր-Մկրտչեանի հեղինակակցութեամբ), Էջմիածին, 1921.

8. Պատմական տեղեկութիւններ Հայաստանի հողերի ոռոգման մասին, Երուսաղէմ, 1936.

9. Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938.

10. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանուց (անտիպ. գտնում է Մատենադարանում)։

11. Ձեռագիրք Պարսկաստանի գիղերի, Թեհրանի, Հնդկաստանի (անտիպ. գտնվում է Մատենադարանում)։

12. (թարգմ.) Լեման Հաուպտ, Հայաստան երբեմն և այժմ—կորած և այլն։

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, իր անդրանիկ պատարագը մատուցեց Տ. Մակար արդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Այլ դու Աստուած, ի նախընթաց չոս աստիճանաց օթևանացս պատրաստութեան... շնորհեա կատարել ի քոյդ հաճութեան օրհնեալ կամաց...» (Գ. Նարեկացի, «Մատենան ողբերգութեան», րան Բ) քնարանով:

Օգոստոսի 18-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսպալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Դու հողանիւք սրովքէ ես» (շարական) քնարանով:

Օգոստոսի 14-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ավետիք արդ. Սողոմոնյանը:

Օգոստոսի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Մայր սուրբ, քարեխօսեա» (շարական) քնարանով:

Օգոստոսի 27-ին, կիրակի.—Տօն գիւտի գօտույ Սրբուհույ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց Տ. Սուքիաս արդ. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀՈՒՇԱՆՎԵՐԸ

(Ըստ ականատեսներ Եմոք Կարապետյանի, Արշակ Ավագյանի, Լևոն Հարությունյանի, Մինաս Տեր-Առաքելյանի, Մարիամ Մկրտչյանի և այլոց պատմածի):

Այդ օրը մեծ ուրախություն էր Վայոց ձորում: Ժողովուրդը սրտատրոփ սպասում էր արժանավոր հյուրին: Ժամանելու էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցի (Խրիմյան Հայրիկը):

1905 թվականն էր:

Մեծ բազմություն էր հավաքվել Եղեգնաձորի եկեղեցու մոտ՝ հոգևորականներ, գյուղերի ղեկավարներ, ծերունիներ, երիտասարդներ, կանայք, երեխաներ:

Եղեգնաձորի ավագանին հանձնարարել էր գյուղի նշանավոր դեմքերից մեկին՝ Իսախան Ավագյանին, որ նա ըստ արժանվույն հյուրընկալի Վեհափառին: Իսախանը սիրով հանձն էր առել, այն համարելով իր համար մեծ պատիվ:

Ահա կաթողիկոսին բերող կառքը կանգ է առնում եկեղեցու մոտ: Հանդիսավորությամբ կառքից իջնում է Վեհափառը և աջը վեր պարզած ողջունում դիմավորողներին: Ժողովուրդը հնազանդորեն խոնարհվում է հյուրի առաջ:

Ծառ կանայք ուրախությունից արտասվում են ու չոքում հովվապետի առջև, իսկ Մալիշկեցի գեղջկուհի Ոսկեհատ Ծափազյանը կամենում է կատարել իր վաղեմի ուխտը՝ համբուրել նրա ոտը, սակայն կաթողիկոսը կանխում է և համբուրելու է մեկնում իր աջը...

Մինչ եկեղեցու մոտ տեղի է ունենում հանդիպման այդ ջերմ արարողությունը, գյուղացիները գորգերով ծածկում են եկեղեցուց մինչև Իսախանի տուն տանող փողոցը, իսկ հյուրընկալողն իր խանութից բերել է տալիս կապերով կանաչ թավիշ ու փռել տալիս գորգերի վրա: Հանդիպման արարողությունից հետո Իսախանը պանծալի հյուրին ու նրա շքախմբին այն Թավշյա ուղեգորգի վրայով առաջնորդում է իր տունը:



Վեհափառի հուշանվերից մնացած
արծաթյա բաժակը, որը պահվում է Եղեգնաձորի
երկրագիտական թանգարանում

Կաթողիկոսի այցի հիմնական նպատակն է եղել ծանոթանալ Վայոց ձորին, նրա ժողովրդին, նրանց հոգսերին, հոգևոր ու կրթական գործի դրվածքին, գավառի եկեղեցիների գործունեությանը: Այդ նպատակով հաջորդ օրվանից այցելել է մի շարք գյուղեր՝ Մալիշկա, Վերնաշեն, Գլաձոր, Արենի, Գնդեվազ և այլն, զրուցել է գյուղացիների հետ, մտել անմխիթար վիճակում գտնվող եկեղեցիները, հորդորանքով դիմել է գյուղացիներին՝ եկեղեցիներին օգնելու համար, դպրոցներ բացելու հոգսերով զբաղվելու համար...


Քանի որ է շրջագայել գավառում, հայտնի չէ: Գավառից մեկնելուց առաջ Իսախան Ավագյանի հարկի տակ, հրաժեշտի սեղանի շուրջ Խրիմյան հայրիկը դրվատանքի ջերմ խոսքեր է ասում Մալիշկայի քահանա Խաչատուր Տեր-Աստվածատրյանի, Վերնաշենի քահանա Գրիգոր Տեր-Աբրահամյանի և այլոց մասին, ապա հյուրընկալության համար, ի նշան շնորհակալության, հանդիսավորությամբ Իսախան Ավագյանին է հանձնում մի գողտրիկ հուշանվեր՝ արծաթյա փոքրիկ մատուցարան, արծաթե փոքրիկ գրաֆին և արծաթյա 12 փոքրիկ բաժակներ:

Հուշանվերից պահպանվել է միայն մի բաժակ, որը Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը ձեռք է բերել Իսախանի թոռ՝ Արարատ Ավագյանից և որպես Խրիմյանից մնացած սուրբ հիշատակ, պահվում և ցուցադրվում է թանգարանում:

Թանգարանում է գտնվում նաև այն գորգը, որի վրա այդ օրերին բազմել է Վեհափառը:

ԱՐԳԱՄ ԴՈՎԼԱԹՅԱՆ





ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ, ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

(Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի ծննդյան
հարյուրամյակի առթիվ)

1988 թվականի հոկտեմբերի 16-ին եգիպտահայ գաղութը հողին էր հանձնում թեմի երկարամյա առաջնորդ գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի աճյունը:

Երուսաղեմի Պատրիարքարանի դիվանապետ Տ. Շահե եպիսկոպոս Աճեմյանն իր դամբանականում մասնավորապես ասաց. «Այսօր մեզի տըխուր պարտականությունը կը տրուի թաղելու մեծ դպրոցի մը՝ Արմաշի վերջին բարձրաստիճան եկեղեցականը: Իր թաղումով կարծեք մեր առջև անգամ մը եւս կը յառնեն այդ նոյն դպրոցին դոթողային դէմքերը՝ Եղիշե արքեպս. Դուրեան, Թորգոմ արքեպս. Գուշակեան, Գարեգին արքեպս. Խաչատուրեան եւ ուրիշներ: Մեր այդ մեծ եկեղեցականները երկու հիմնական նշանախօսքեր ունէին, որոնց հետեւեցաւ նաեւ Մամբրե արքեպս. Սիրունեան. անոնք իրենց հոգիին լոյսը առին հայրենասիրութենէն եւ Արարատի կատարէն եւ իրենց հաւատքին ճրագը վառեցին Ա. Էջմիածինէն, եւ իրենց հօտը առաջնորդեցին հայրենասիրութեան եւ Էջմիածնասիրութեան զոյգ դրօշներուն ներքեւ»¹:

Ուղիղ կէս դար ձվիրաբերեց Մամբրե արքեպս. Սիրունյանը հայ ժողովրդին ու Մայր Եկեղեցուն: 1916 թվականին կուսակրոն քահանա ձեռնադրվելով ծառայեց՝ այրվելով հայրենյաց սիրով, իր ժողովրդին, Հայ Առաքելական Մայր Եկեղեցուն օգտակար լինելու վճռակամությամբ:

Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը (ավագանի անունով՝ Արշամ) ծնվել է Կսրիմում 1889 թվականին²: Նախնական կրթությանը զուգահեռ, որը նա ստանում է տեղի Արծնյան վարժարանում, եկեղեցասեր պատանին մանկուց անխափան մասնակցել է եկեղեցական արարողություններին

¹ «Ջահակիր», 1988 թ. 20 հոկտ., № 150, էջ 1:

² Եգիպտահայ «Ջահակիր» թերթը 1988 թվականի հոկտեմբերի 13-ի հ. 149-ում տպած մահախոսականում սրբազան հոր ծննդյան թիվը նշում է 1891 թ.: Սակայն 1927 թ. մարտի 4-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գևորգ Ե կաթողիկոսին ուղղված Թորգոմ արքեպս. Գուշակյանի գրության մեջ Տ. Մամբրե արքեպս. Սիրունյանի ծննդյան թիվը նշված է 1889 թվականը (տես՝ ՀԽՍՀ Պետական Կենտրոնական պատմական արխիվ. 409 ֆոնդ. 1 ցուցակ. 4 մաս. 4786 գործ. թերթ 1—հետախույ՝ ՀՊՊԿԱ գործ № — և այլն): Հնգվելով արխիվային այս փաստաթղթի վրա, ստույգը նկատեցինք հիշյալ թվականը, մանավանդ որ լրագրային նշված նյութում հանդիպում են այլ անճշտություններ ևս:



Մամբրե արքեպս. Սիրունյան

Ս. Աստվածածին եկեղեցում իբրև դպիր՝ խրախուսվելով բարեպաշտ ծնողների՝ Սուրենի և Վարդուհու կողմից: Մի փոքր անց ուսմանն ու դպրական պարտականություններին ավելանում է վարժապետական աշխատանքը մոտակա Զիթող գյուղում: Ուշիմ և եկեղեցասեր Արշամը չի վրիպում Կսրնո հոգևոր առաջնորդների աչքից: Տ. Սմբատ եպս. Սահադեթյանի կարգադրությամբ 1910 թվականին նա ուսանելու է ուղարկվում Արշամի հայրենի դպրեվանք, որտեղ, ի դեպ, ժամանակին ուսանել էր նաև ինքը՝ Սմբատ եպիսկոպոսը:

Արմաշի դպրեվանքը համրաճանաչ էր իր շրջանավարտներով: Այդ տարիներին դպրեվանքի վանահայր-վերատեսուչն էր Տ. Մեսրոպ Ծ. վրդ. Նարոյանը (հետագայում՝ եպիսկոպոս) իսկ տեսուչը՝ Գարեգին Ծ. վրդ. Խաչատուրյանը (հետագայում՝ արքեպիսկոպոս): 1913 թվականի դեկտեմբերին Արմաշի համրահայտ Զարախափան Ս. Աստվածածին մենաստանի տաճարում Արշամն արժանանում է ավագ սարկավագի աստիճանի: 1915 թվականի Մեծ եղեռնի օրերին Արմաշի վանքն ու դպրանոցը ևս զերծ չեն մնում արհավիրքից:

Թեոդիկը նկարագրում է Արմաշի վանքի փոխվանահայր և վերատեսուչ Տ. Մեսրոպ եպս. Նարոյանի և վանականների անլուր տառապանքները՝ Ի շարս այլոց Թեոդիկը հիշատակում է նաև Արշամ սրկ. Միրունյանին, որը «իր հոգևոր ծնողքեն՝ բանտէն ազատ արձակուող Նարոյեան սրբազանէ ձեռնադրուած ի Պոլիս»⁴:

Սակայն մինչև Կ. Պոլիս հասնելն ու ձեռնադրվելն Արշամ սարկավագը Նարոյան եպիսկոպոսի և Արմաշի վանքի հինգ այլ վանականների հետ անցնում է տառապալից մի ճանապարհ՝ զրկանքներով, կտտանքներով ու մահասարսուռ մղձավանջներով լի: Նրանց աքսորում են նախ Էսքիշեհիր, ապա՝ Գոնիա: Արշամը Գոնիայից ծախված փախչում է դեպի Կ. Պոլիս և ապաստանում Պատրիարքարանում՝ Տ. Զավեն Պատրիարք Եղիսյանի մոտ: Ծուռով Գոնիայից Կ. Պոլիս է թերվում նաև Մեսրոպ եպիսկոպոսը և, «Գըտը Սիասի» քանտում 40 օր պահվելուց հետո, ազատ է արձակվում: 1916 թվականի հոկտեմբերի 17-ին Պոլսի Մայր եկեղեցում Արշամ սարկավագը ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ Մամբրե անունով: Նույն օրն էլ տեղի է ունենում վեղարի տվչությունը:

Սակայն արհավիրքը չէր անցել: 1916 թվականի օգոստոսին այլ արմաշցիների հետ Երուսաղեմ է աքսորվում նաև Մամբրե արեղան: Այստեղ նա ստանձնում է Ժառանգավորաց վարժարանի տնօրինությունը: Այստեղ ևս, Երուսաղեմի սրբազան հողի վրա, թուրքական ջարդարար վայրագ միտքը նախահր էր որոճում: 1917 թվականի ապրիլին Ժառանգավորացը փակվում է և աշակերտական կազմի կեսից ավելին վերցվում թուրքական բանակ՝ «ծառայության»: Այս անգամ, սակայն, աղետը կանխվում է: 1917 թվականի աշնանը անգլիական զորքերը մտնում են Երուսաղեմ: Եվ հայերը, որոնց գլխին կախվել էր նոր Տեր-Զորի սպառնալիքը՝ շունչ են առնում:

Մամբրե արեղան, որն այդ ընթացքում նշանակվել էր քաղաքային վարժարանում հայերենի և կրոնի ուսուցիչ, ստանում է նոր նշանակում: Մեծ հայագետ, թարգմանիչ և եկեղեցական գործիչ Թորգոմ եպիսկոպոս

³ Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականության, Նյու Յորք, 1985 թ., էջ 358—362:

⁴ Ամդ, էջ 860:

Գուշակյանը այդ ժամանակ եգիպտահայոց հոգևոր առաջնորդն էր: Նկատելով ուշիմ արեղայի ջանադիր գործունեությունը, նրան քերում է Կահիրե՝ իբրև առաջնորդական փոխանորդ: Դա 1918 թվականի հուլիսի 12-ին էր: Առաջին հանդիպումը այն գաղթօջախի հետ, որին, անհշան ընդհատումներով, շուրջ կես դար հովվել է Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը: Սեպտեմբերին Ալեքսանդրիայի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում Թորգոմ սրբազանը նրան շնորհում է գավազանի մասնավոր իշխանություն, իսկ դեկտեմբերին նա արդեն Պորտ-Սալիդում էր: Այստեղ մի հսկա վրանաքաղաք էր ստեղծված շուրջ 18 հազար գաղթական հայերի համար: Սարսափներից մազապուրծ հայերին աֆրիկյան կիզիչ արևը չէր տաքացնում: Օտար էր այն: Օտար էին Պորտ-Սալիդի ավազները, որոնց վրա հայ որբուկները ձողիկները ձեռքներն առած Ս. Մեսրոպի այբուբենն էին գրում... Հայեցի ջերմություն էր պետք նրանց, հայրենի ոգի: Եվ երիտասարդ առաջնորդական փոխանորդը, ինքն էլ եղեռնից մազապուրծ՝ սատար ու ապավեն եղավ այդ տնանկներին, միաժամանակ վարելով հայ բարեգործական ընդ. միության գաղթականային տեսուչի և վրանաքաղաքի բարեգործականի պատվիրակի պաշտոնները:

1919 թվականին գաղթականների ու որբերի մի մասը հույներով լեցուն վերադառնում է Կիլիկիա՝ Մերսին: Նրանց հետ էր նաև Մամբրե վարդապետը: Հենց Մերսինում էլ Սահակ կաթողիկոսից ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան: Խաթկանքն, ավաղ, կարճ տևեց: Դարձյալ գաղթ, դարձյալ տեղահանություն: Շուրջ 650 որբուհիների հետ Մամբրե ծ. վարդապետը տեղափոխվում է Լիբանան: Դա հրաժեշտն էր: Նա այլևս երբեք չէր տեսնելու Արևմտյան Հայաստանը...

1923 թվականի հունիսին Ալեքսանդրիայի ազգային իշխանությունը հրավիրում է նրան առաջնորդական փոխանորդի պաշտոնին: 1925 թվականին Հունաստանից Եգիպտոս են փոխադրվում հայ որբուհիներ: Երկու տարի Մամբրե ծ. վարդապետը մեծ ջանքեր է գործադրում հիշյալ որբուհիների խնամակալության գործում: Ալեքսանդրիայի Որբապաշտպան միության առաջարկով Թորգոմ արքեպիսկոպոսը բարեխոսական ճամակ է գրում Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ առաջարկելով «Բարեխօսել Ն. Ս. Օծուրին Ս. Հայրապետին մօտ, շնորհել նմին իրաւունք վարդապետական ադամանդակուտ լանջախաչի, յատուկ օրհնութեան կոնդակաւ, ի վարձատրութիւն իր ծառայութեանց եւ ի քաջալերութիւն ապագայ գործունեութեան»⁵:

1927 թվականի ապրիլի 26-ի հմբ. 410 կոնդակով Գևորգ Ե կաթողիկոսը պարգևատրում է Մամբրե ծայրագույն վարդապետին ադամանդակուտ խաչով: Ծնորհակալական ճամակում (22/6—1927 թ.) Մամբրե վարդապետը գրել է. «Պահեցից Սուրբ Հայրապետ, ի սրտի իմում եւ ի հոգւոջ ընդ մշանի սրբոյ խաչիդ եւ զտիպ սիրոյ Հօրդ եւ Տեառնդ հոգւորի եւ գուն եդից զամենայն աւուրս կենաց իմոց կացուցանել զանձն իմ արժանի սիրոյ հովուապետիդ Առաքելական Սրբոյ Եկեղեցւոյն»⁶:

1931 թ. Թորգոմ արքեպիսկոպոսը ընտրվում է Երուսաղեմի պատրիարք: Կահիրեի և Ալեքսանդրիայի միացյալ թեմական ժողովով Եգիպտահայոց առաջնորդական փոխանորդ է ընտրվում Մամբրե ծ. վարդա-

⁵ ՀՊԳԿԱ—409—1—4—4786—1:

⁶ Անդ, էջ 6:

պետը: 1952 թվականի հունվարի 8-ին Խորեն արքեպիսկոպոս Մուրադ-բեկյանի կողմից նրան շնորհվում է եպիսկոպոսական աստիճան⁷: Խորեն արքեպիսկոպոսը 1933 թվականի հունվարին ընտրվում է կաթողիկոս, և Մամբրե եպիսկոպոսը առաջին անգամ գալիս է Մայր Հայրենիք: Վերածնված հայրենիքը հուզում և ոգեշնչում է հայրենասեր եպիսկոպոսին: Ետդարձի ճանապարհին գրած նամակում նա մասնավորապես ասում է. «Երեւանէ միջէն Ռուսական սահմանագլուխ ոչ մէկ դժվարութիւն ունեցայ շնորհիւ մեր Կառավարութեան, որուն հանդեպ երախտագիտութեամբ լեցուած է հոգիս»⁸:

Մամբրե եպիսկոպոսը Եգիպտոս է վերադառնում մոր լիցք ատած: Նրա գործունեությունը մոր թափ է ստանում: Այդ են վկայում ադ տարիներին եգիպտահայ «Սրեն» լրագրում տպագրված Ս. Էջմիածնին և մայր հայրենիքին նվիրված ամենաբազմազան նյութերը, բազմաթիվ հանգսնակություններն ու նվիրատվությունները հոգուտ Հաստատանի և Ս. Էջմիածնի⁹:

Մամբրե եպիսկոպոսի եկեղեցասիրական, մարդասիրական և մշակութային-կրթական բեղմնավոր գործունեությունը ստանում է իր արժանի գնահատանքը: 1936 թվականին նա արժանանում է Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանին, իսկ 1937-ին՝ ֆրանսիական կառավարության «Օֆիսի դ'Ակադեմի» շքանշանին: 1937 թվականի սեպտեմբերին Սուդանում ստեղծվում է թեմ և որոշվում է Խարթումում կառուցել հայկական եկեղեցի և դպրոց: Խորեն Ա կաթողիկոսը 1937 թ. սեպտեմբերի 18-ի հմբ. 509 կոնդակով օրհնում է այս գործը և Եթովպիայի ու Սուդանի թեմերի տնօրինությունը հանձնարարում Մամբրե եպիսկոպոսին:

1930—40-ական թվականներին եգիպտահայ գաղութը հիրավի եկեղեցական-ազգային, մշակութային լիարյուն կյանքով էր ապրում:

Հեղինակության քաղաքում այս ընթացքում կառուցված եկեղեցին, Կահիրեում հայոց գերեզմանոցի տեղի գնումը, Գալստյան և Նուբարյան վարժարանների բեղմնավոր գործունեությունը (առաջինում 39 ուսուցիչ, 790 աշակերտ, երկրորդում՝ 18 ուսուցիչ, 251 աշակերտ), ազգային ամենատարբեր կազմակերպությունների ջանադիր գործունեությունը Եգիպտոսի տարբեր բնակավայրերում՝ հիացմունք են առաջացնում: Ի լրացումն ասվածի բերենք 1935 թվականի ապրիլի 8-ին գրված նամակը, ուր Մամբրե սրբազանը նշում է «...այժմ ամեն բան կ'ընթանայ խաղաղությամբ և անդորրությամբ ճամբով: Փառք Աստծոյ, ժողովուրդը գոհ, առաջնորդարանցիս միշտ աշխատության վրայ, վարժարանները բացուած հայ մանուկներով, եկեղեցիցիս շէն ու պայծառ եւ լեցուն հաւատացելոց բազմութեամբ Եգիպտոսի հայ գաղութը նախանձելի կը դարձնեն յաչս օտարաց»¹⁰:

Լայնածավալ էր սրբազանի գործունեության շրջանակը: Իր նամակներից մեկում նա Խորեն կաթողիկոսին դիմում է միջնորդությամբ, ասելով, որ դոկտոր Ա. Ս. Պարոնիկյանը Գերմանիայում եղած 30 հազարանոց հայ գաղութի համար ուզում է բանալ «Խրիմյան ճեմարան»՝ կուսակրոններ կրթելու համար: Մամբրե սրբազանը նշում էր, որ գերմանահայերը պատ-

⁷ Աճդ, գործ 4804, էջ 1:

⁸ Աճդ, գործ 4805, էջ 8:

⁹ Աճդ, գործ 4822, էջ 1, 4839, էջ 2:

¹⁰ Աճդ, գործ 4826, էջ 84:

րաստ են հանգանակություն կատարելու սույն ճեմարանը բանալու օգտին¹¹:

Ծաղկում էր եգիպտահայ գաղութը՝ աչքը հառած Մայր Հայրենիքին, որը մույնպես վերելքի ճամփան էր բռնել: Սակայն աշխարհի վրա դարձյալ ամպեր էին կուտակվում մոտավուտ էր Երկրորդ համաշխարհային պատերազմը: Առաջին իսկ օրվանից եգիպտահայ գաղութը ևս ոտքի ելավ բարոյապես ու մյուսապես սատար լինելու արհավիրքի մեջ գտնվող Մայր Հայաստանին: Հանգանակության դրամները, հանդերձանքը և այլն հայրենիք էին ուղարկվում հիմնականում Թեհրանի վրայով: Այդ ճանապարհով հետո ևս՝ 1945 թվականի սեպտեմբերին, հայրենիք է ուղարկվում, օրինակ, 10 հազար գույգ կոշիկ¹²:

Պատերազմի ողջ ընթացքում չի թուլանում գաղութի հոգևոր և մշակութային կյանքը: 1944 թվականին Եթովպիայում Մամբրե սրբազանը օծում է հայոց մորաբաց եկեղեցիները, կազմակերպում թեմն ու մրա ժողովները, կատարում հանգանակություն՝ անգլիական 8000 ֆ. ստերլինգի չափով:

1945 թվականին պատերազմի հաղթական ավարտը հայ ժողովրդին սուրգեում է մի ուրախություն ևս: Նույն տարին կաթողիկոս է ընտրվում Գևորգ Զ Չորեքշյանը: Մամբրե սրբազանը մասնակցում է կաթողիկոսի օծմանը և մրա ձեռքից էլ հուլիսի 1-ին ստանում արքայության տիտղոս:

Դարձյալ խաղաղ աշխատանքի երգն էր թևածում Հայրենիքում, իսկ Սփյուռքում՝ մոր ներգաղթի ոգին: 1930-ական թվականների ներգաղթը չէր անցել եգիպտահայ գաղութով: Այլ էին 1940-ականները: Մայր Աթոռի Դիվանի արխիվում պահվում է Մամբրե արքեպիսկոպոսի սրտառույշ և խիստ բնութագրական նամակը՝ ուղղված Գևորգ Զ կաթողիկոսին՝ թվագրված 20/9—1046 թ., լիովին միմյանց ներգաղթի խնդիրներին: «Ուրախությամբ սարսուռ մըն է, որ կ'անցնի այժմ գաղութներու կեանքէն մերս՝ մեկ ծայրէն միւսը: Ոտքի ելած է գաղութաշխարհը պատասխանելու համար Հայրենիքէն, իր Կառավարութենէն եկած կոչին:

Դեպի Հայրենիք՝ այս է օրուան կարգախօսը ամենուրեք:

....Կենտրոնական Կոմիտէն 1946 թ. օգոստոսի 12-ին պաշտօնապես կոչ ուղղեց եւ հրաւիրեց եգիպտահայութիւնը արձանագրուիլ այս նպատակով հաստատուած հինգ գրասենեակներուն մօտ:

Վեհափառ Տէր, ցարդ արձանագրուողներուն թիւը հասած է 13 հազարի եւ եթէ մեկ քանի դժուարին հարցեր գտնեն բարոյք լուծումը, այս թիւը շատ դիրութեամբ պիտի բարձրանայ 15 հազարի, չ'ըսելու համար մինչև 20 հազարի:

Կը կազմակերպենք Հայաստանեան երեկոներ, հանդէսներ, դասախօսութիւններ՝ հայրենադարձի արժէքն ու մշակութիւնը ըստ արժանոյն բացատրելու, հասկացնելու համար մեր ժողովրդին: Մենք ոգեւորութիւն եւ խանդավառութիւն կը տիրէ մեր գաղութին ամէն դասակարգերէն մերս:

Բացարձակ հաւատք ունինք եւ համոզուած ենք, որ մեր ձեռնարկը պիտի պսակուի փայլուն յաջողութեամբ եւ մեր սիրելի ժողովուրդը ժպիտը իր դէմքին, գոհ եւ երջանիկ, պիտի թողու Եգիպտոսը յառաջիկայ տարուայ գարնան՝ ուղղուելու համար դեպի հայրենի աշխարհ, որուն կարօտով լեցուն եղած է իր սիրտը միշտ:

¹¹ Ամդ, գործ 5178:

¹² Ամդ, գործ 4882, Լջ 1:

Կը վստահեցնեն Ձեր Վեհափառությունը, որ պիտի աշխատիմ ամեն գնով եւ ամեն միջոցներով իրագործել Վեհափառ Հայրապետի հայրենանուէր եւ ազգանուէր ջանքերն ու բաղձանքները կատարած ըլլալու համար իմ վրայ դրուած պարտականությունները եւ խղճի կատարեալ համդարտութեամբ եւ բաց ճակատ ներկայանալ Վեհափառ Հայրապետի եւ ստանալ Ն. Ս. Օծութեան օրհնութիւնը»¹³:

Ներգաղթը կայացավ: Մայր Հայրենիք եկան տասնյակ հազարավոր եգիպտահայեր: Իսկ գաղութի կյանքը շարունակվում էր: Ծարունակվում էր նաև սրբազան հոր հայրենանվեր գործունեությունը: Նույն՝ 1948 թվականին կաթողիկոսին գրած մի նամակով նա խնդրում է, որպէսզի հնարավորություն ստեղծվի Հայաստանում բանալ գաղութահայ (իմա՝ Սփյուռքի—Հ. Թ.) թանգարան, որի նախաձեռնությունն իրենց վրա էին վերցնելու եգիպտահայ Նասիպ և Թորգոմ Կարապետյան եղբայրները: 1947 թվականին արդեն պատրաստ էին Առաքել Պատրիկի նախագիծ-ծրագիրն ու յուրահատուկ ցուցադրական պլան-բացատրականը: Այս նախաձեռնությունը հետաքրքրում է նաև Հայաստանի կառավարությանը, որը կաթողիկոսական դիմումին պատասխանել է, որ Հայաստանի «Կառավարությունը սկզբունքորեն չի առարկում առաջադրված գաղափարի դեմ: Հայտնում է նաև, որ թանգարանի շենքի կառուցման հետ կապված խնդիրները քննության կառնվեն միայն այն ժամանակ, երբ բոլոր թեմերում կենտրոնացված գյուղերը Ձեր (կաթողիկոսի—Հ. Թ.) միջոցով կուղարկվեն կառավարական համապատասխան կազմակերպության»¹⁴:

Սա մի ծրագիր էր, որը, թերևս, ցայսօր չի կորցրել իր արդիական հնչելությունը, կարևորությունը և իրագործման անհրաժեշտությունը:

1951 թվականին Մամբրե արքեպիսկոպոսին է վստահվում նաև Հունահայ թեմի տնօրինությունը, իսկ 1952 թվականին նա կատարում է եկեղեցու հիմնադրման արարողությունը Սուդանի մայրաքաղաք Խարթումում:

Բարգավաճում էր նաև Եգիպտոսի գաղութը: 1953—1963 թթ. տարբեր բարերարների նվիրատվություններով կառուցվում են Հելիոպոլիսի Հայկական գերեզմանոցի Ամենայն Սրբոց մատուռը, Առաջնորդարանին կից «Աբգարյան Դարմանատունը»՝ Կահիրեում, Մարմինայի գերեզմանատան Ս. Գևորգ մատուռը, վերանորոգվում է Ալեքսանդրիայի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, հիմնվում Թորգոմյան ազգային մատենադարանը և այլն:

1963 թ. նոյեմբերին Երուսաղեմից վերադարձի ճանապարհին եգիպտահայ գաղութին հովվական այցելություն է տալիս Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինը:

Նոյեմբերի 7-ին Վեհափառ Հայրապետի ներկայությամբ Կահիրեի ամենաաջքեղ սրահներից մեկում արժանավորապես նշվում է Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի կրոնական, ազգային և կրթական բնագավառներում կատարած գործունեության քառասնամյակը: Հրատարակվում է «Քառասնամեայ Յոթելեան» պրակը, որ մանրամասն լուսաբանված է սրբազան հոր կյանքն ու գործը:

1965 թվականի հունվարին Վազգեն Առաջինի հետ Մամբրե սրբազանը մեկնում է Ադիս Աբեբա՝ մասնակցելու Արևելքի Ուղղափառ Եկեղեցիների համաժողովին: Ապրիլի 25-ին՝ Մեծ Եղեռնի կեսդարյա տարելի-

¹³ Աճ, գործ 4868, էջ 3—4:

¹⁴ Աճ, գործ 4854, էջ 1:

ցին, Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում նա կատարում է Նահատակաց հուշարձանի բացումը:

1966 թվական, հուլիսի 17: Կահիրեի առաջնորդարանի դահլիճը լեփ-լեցուն է խանդավառությամբ: Նշվում էր Մամբրե արքեպիսկոպոսի կուսակրոն քահանայության օծման կենդարյա հոբելյանը:

Բոլորը գիտեին, որ նախապատրաստություններ են արվում այս հիսնամյակն առավել մեծ շուքով նշելու համար: Սակայն ոչ մեկի մտքով չէր անցնում, որ ընդամենը մի քանի ամիս անց՝ հոկտեմբերի 13-ին, պիտի լսեին նրա մահվան բոթը...

Մամբրե արքեպիսկոպոսի մահվան առիթով Վեհափառ Հայրապետի լիողնից տրված հեռագրում ասված էր.

«Խորը կսկիծով ստացանք Ձեր հեռագիրը, Մամբրե արք.՝ մահը մեծ կորուստ մըն է մեր Եկեղեցիին:

Կ'աղոթենք իմ հոգւոյն խաղաղութեան եւ փրկութեան համար Յանւր-ժաւան լոյսին մէջ»¹⁵:

Թաղումը հիշարժան էր: Գաղութը հրաժեշտ էր տալիս մի հայրենասեր գործչի, որն իր կենդարյա գործունեության ընթացքում ձեռնադրել էր շուրջ երկու տասնյակ հոգևորականներ, գրել ամենատարբեր բնույթի հոդվածներ, քարոզներ ու դասախոսություններ՝ մշակութային, հոգևոր և ազգապահպանման խնդիրների շուրջ, ծավալել կազմակերպչական ու լուսավորչական լայն գործունեություն:


Եղեռնից մազապուրծ, օտար ափերում, աչքը հայրենյաց լեռներից ծագող արևին ու Մայր Էջմիածնից բխող հավերժ կենդանի Լույսին Մամբրե արքեպիսկոպոսն իր եռանդով, խոսքով ու գործով պահեց ու ծավալեց ոչ միայն եգիպտահայ, այլև Միջին Արևելքի այլևայլ շրջաններում գործող հայ Սփյուռքն ու Եկեղեցին: Ու թեև դյուրին չէր ավ նրա ուղին: Թեև Սփյուռքին բաժին ընկնող դառնություններից շատերը ճաշակեց նա իր հոտի հետ միասին, բայց չդավաճանեց իր հավատամքին, որը հենց ինքը հրաշալիորեն ձևակերպել է Խորեն Ա. կաթողիկոսին ուղղված 8/4—1935 թվակիր մի նամակում, «Հայ եկեղեցականը, մանաւանդ անոնք, որ կուսակրոն ուխտով մը նուիրուած են Ազգիս ու Եկեղեցիս ծառայութեան՝ միշտ պէտք է զգան քաջութիւն իրենց մէջ դիմագրաւելու համար այն բոլոր չարամիտ ու չարահմար յարձակմանց, որոնք կ'ուղղուին իրենց»¹⁶:

Այսպիսի քաջ ոգով դաստիարակվելով Արմաշի դպրեվանքում և կոփվելով Եղեռնի դաժան ճամփաներին՝ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանն այսպիսին էլ մնաց միշտ...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆ

¹⁵ «Զառակիր», 19 հոկտ. 1966 թ., № 149, էջ 1:

¹⁶ ՀՊՊԿԱ—409—1—4—4828. էջ 1:



43 Uf

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱԾՐՋԱՆԸ

Սույն թվականի հուլիսի 16—27 օրերին Մոսկվայում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան նստաքոջանը, որը առաջին անգամ լինելով գումարվեց խորհրդային Միության մայրաքաղաքում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հրավերով։

Նստաշրջանին Մայր Աթոռի կողմից, որպես ԵՀՆ-ի Կենտրոնական Կոմիտեի անդամներ, մասնակցեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողասյալյանը և Ժնևի հայոց հոգևոր հովիվ Ս. Վիգեն վարդապետ Ալքազյանը, իսկ որպես խորհրդակցական՝ Տ. Խաթալ վարդապետ Պարսամյանը:

Նստաշրջանի առաջին օրը հաշվետու գեկուցումներով հանդես եկան ԵՀՆ-ի Կենտրոնական Կոմիտեի ատենապետ դոկտ. Ժուսկիմ Հելդը և գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոն: Ժողովի ընթացքում ներկայացվեցին մաս հարակից գեկուցումներ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի հազելում կայացած համագումարի, ինչպես մաս ԵՀՆ-ի «Առաքելություն և ավետարանչություն» բաժանմունքի համաժողովի մասին:

Ժողովը, բացի իր հերթական աշխատանքներից, նաև լսեց առանձին գեկուցումներ աշխարհում արտեխնոլոգիայի

Ավաճումների մասին: Նստաշրջանի մասնակիցները ուշադրության առանձնակից առաջադիմություններ, որոնք վերաբերում էին ԵՆՏ-ի մեջ երիտասարդության առավել մեծ մասնակցությանը:

Հենց առաջին օրերից նստաշրջանի աշխատանքները առաջ տարվեցին աշխատանքային հետևյալ չորս խմբերով. ա) Ընդհանուր քարտուղարություն, բ) Եկեղեցի և հասարակություն, գ) Արդարություն, խաղաղություն և ուղղամտություն, դ) Կրթություն և դաստիարակություն:

Առաջին խումբը գրավվեց գլխավոր քարտուղարության գործունեության շրջանակների մեջ մտնող մի շարք գործնական հարցերով, մասնավորապես 1991 թվականին Կանքերայում անցկացվելիք ԵՀՆ-ի 7-րդ համագումարի նախապատրաստման ծրագրով։ Երկրորդ խմբի աշխատանքները նվիրված էին համատեղ և վկայության վերաբերյալ հարցերին և մեն մասամբ ԵՀՆ-ի կազմում, ինչպես նաև անդամ Եկեղեցիների կյանքում կանանց դերին՝ այն տեսանկյունից, որ կանայք Եկեղեցու մեջ գործնական ծառայության առավել մեծ արտոնություններ և հնարավորություններ ստանան։ Երրորդ խմբում քննարկվեցին մարդկային իրավանց վերաբերող հարցեր, հիմնականում ցեղային խտրականության և

աշխարհի տարբեր շրջաններում դրսևորվող անարդարության հետ առնչվող քաղաքական հարցեր: Չորրորդ խմբի աշխատանքները կենտրոնացվեցին կանանց աստվածաբանական կրթության և ժամանակակից երիտասարդության կրոնաքարոյական դաստիարակության հարցերի վրա:

Այս հիմնական հարցերի քննարկումից բացի, նստաշրջանում տեղի ունեցան մի շարք հանդիպումներ, որոնցից առաջինը հուլիսի 18-ին Ջագորսկում ԵՀԽ-ի անդամ Խորհրդային Միության Եկեղեցիների ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումն էր, որի ընթացքում, ի շարք խոսք առնող այլ անձանց, ելույթ ունեցավ նաև Տ. Ներսես արքեպիսկոպոսը՝ նախ անդրադառնալով Հայաստանի երկրաշարժի աղթիվ ԵՀԽ-ի և կրոնական ու քարեսիրական այլ կազմակերպությունների ցուցաբերած օժանդակությանը և Հայ Եկեղեցու անունից ջնորհակալություն հայտնելով ներկաներին, ապա համառոտակի տեղեկություններ հաղորդեց Հայ Եկեղեցու պատմության ե այսօրվա վիճակի մասին՝ նշելով միաժամանակ նրա բերած կարևոր նպաստը աղետյալների օգնության գործին: Այս աղթիվ ցուցադրվեց Հայաստանից տարված երկմասանի մի կինոժապավեն երկրաշարժի և մյուռոնոթոհնության մասին, որ ներկաները դիտեցին մեծ հետաքրքրությամբ:

Երկրորդ հանդիպումը հուլիսի 19-ին տեղի ունեցած ֆորումն էր, որտեղ բարձրաստիճան հոգևորականներ, պետական իշխանությանց ներկայացուցիչներ և հասարակական հայտնի գործիչներ հանգամանալից ելույթներ ունեցան ներկայումս

Խորհրդային Միությունում լայնորեն ծավալվող սոցիալ-տնտեսական, մշակութային և կրոնական կյանքի վերափոխումների մասին:

Հուլիսի 21-ին Կրեմլի Գեորգիևյան դահլիճում ԽՍՀՄ Միգիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Իվանովիչ Ռիժկովն ընդունեց ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի անդամներին: Այստեղ ողջույնի խոսքով հանդես եկավ դոկտ. Էմիլիո Կաստրոն՝ իր խոսքի սկզբին ԵՀԽ-ի անդամ բոլոր Եկեղեցիների անունից ջնորհակալություն հայտնելով Հայաստանում տեղի ունեցած տարերային աղետի աղթիվ անձնապես նրա ցուցաբերած հետաքրքրության և մեծ օգնության համար:


Հուլիսի 23-ին, կիրակի օրը, նստաշրջանին մասնակցող ԵՀԽ-ի շուրջ 30 պատասխանատու աշխատակիցներ այցելեցին Մոսկվայի հայոց Սուրբ Հարություն եկեղեցի՝ ներկա լինելու հայկական պատարագի սրբազան արարողությանը:

Հուլիսի 26-ին և 27-ին նստաշրջանն ավտիփեց իր աշխատանքները՝ վերջում հրապարակելով համապատասխան մի հաղորդագրություն, որ հետ քննարկման հաստատվեց ժողովականների կողմից:

Նստաշրջանի ավարտից հետո ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի մի խումբ անդամներ, որպես Մայր Աթոռի հյուրեր, այցելեցին Հայաստան և ծանոթացան հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային կյանքին: Նրանք եղան Հայաստանի աղետյալ շրջաններում և սեփական աչքերով հաստատեցին ամենուրեք ծավալվող վերականգնման աշխատանքները:

ԹՂԹԱԿԻՑ





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

1988 թվականի հոկտեմբերի 28-են մինչև 29-ը Հոռմի Ս. Էջիտիո հիմնարկի կազմակերպությամբ տեղի ունեցավ Խաղաղության Միջազգային Բ համաժողովում՝ «Աղոթքի մարդիկ խաղաղության փնտռողների մեջ» ընդհանուր թեմայով:

Քրիստոնեական Եկեղեցիներու քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական ընտանիքները, բողոքական եկեղեցական համայնքները իրենց գրեթե բոլոր ճյուղավորումներով կմասնակցեին համաժողովին: Ներկայացուցիչներ ղրկեցին էին նաև այլ գլխավոր հաստատություններ՝ ԵՀԽ, ԵԵԽ և ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Բազում պետություններ քարձր մակարդակի վրա կմասնակցեին համաժողովին՝ գլխավորությամբ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի Հոռմի ավագ դեսպաններուն:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ներկա էր Կ. Պոլսո հայոց Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությանց վարիչ և Իշխանաց կղզիներու տեսուչ գերազնորի Ս. Մեսրոպ եպս. Մութաֆյան:

Հստ հայտագրի, տեղի ունեցան ինը գիտաժողովներ, որոնց ընթացքին կարդացվեցան երեսուներկու զեկուցումներ: «Արեւելյան Եկեղեցիներու խաղաղության ուսուցումը» կոչված միստին Ս. Մեսրոպ եպս. Մութաֆյան զեկուցեց Ս. Գրիգոր Նարեկացիի գրականության մեջ ներքին խաղաղության դրսևորումներուն մասին պատշաճ մեջբերումներով Նարեկ Աղոթամատյանն:

Խաղաղության Միջազգային Բ համաժողովի մասնակիցները առիթը ունեցան պաշտոնական քարձրաստիճան համաժողովումներու:

Հոկտեմբերի 28-ին, երեկոյան ժամը 19-ին, Սանթու Մարիա տի Թրաստեվերե բազիլիկայի մեջ տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք, որուն հաջորդեց միջկրոնական տպավորիչ բացօթյա արարողություն Սանթու Մարիա հրապարակին մեջ, ուր ավելի քան 7.000 հոգինոց բազմություն մը մասնակից դարձավ աղոթքներուն:

Միջազգային համաժողովումը վերջ գտավ 29 հոկտեմբերի կիրակամուտին, երբ համաժողովի մասնակիցները ընդունվեցան Հոռմի Եպիսկոպոս Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի կողմե: Հանուն համաժողովի ներկայացուցիչներուն ողջույնի ուղերձը արտասանեց Ս. Մեսրոպ եպիսկոպոսը:

30 հոկտեմբեր կիրակի կեսօրին միջազգային համաժողովի մասին ընդարձակ տեղեկություններ տալե ետք, Հոռմի հեռուստատեսությունը գերշ. Ս. Մեսրոպ եպս. Մութաֆյանի հետ երեսուն վայրկյան տևող բովանդակայից ասուլիս մը ունեցավ, որուն ընթացքին սրբազանը հակիրճ պատմական ըրավ Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցվո, քննական ակնարկ մը նետեց Վատիկանի Բ ժողովի էկումենիկ արտահայտությանց՝ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսի և Պողոս Բ Պապի միջև 1970 թ. ստորագրված զեկուցագրին վրա: Հայտագիրը ավարտվեցավ Ն. Ս. Օ. Ս. Ս. Վագեն Ա. կաթողիկոսի խաղաղասիրության մարզի մեջ տարած միջեկեղեցական և միջկրոնական հաստատուն աշխատանքներու վրա նետված ակնարկով:

ԹՂԹԱԿԻՑ



ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԷԶՄԻԱԾՆԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսական զորքերի ժամանակավոր նահանջը Կովկասյան ռազմաճակատում 1914 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին պատճառ հանդիսացավ առաջին աշխարհամարտի տարիներին հայ գաղթականության քույրզքնավորմանը: Քեովրի-Քեոյի և Սարիղամիշի հայտնի իրադարձություններից հետո ռուսական տիրապետության սահմանամերձ շրջաններ գաղթեցին Սարիղամիշի, Արդահանի, Արդվիհի, Կարսի, Օլթիի, Դիահիհի, Ալաշկերտի, Ղարաքիլիսայի, Բալազետի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի, Դիլմանի, Թավրիզի, Բաշկալեի և Սարայի շրջանների հայությունը¹:

Ճակատագրական այդ ծանր օրերին Բասենի և Ալաշկերտի գաղթականական մարմինները փրկարար մեծ աշխատանք կատարեցին գաղթող ժողովրդին ազատագրելու ուղղությամբ: Սակայն վերջիններիս բազմակողմանի և լիարժեք օժանդակություն ցույց տալու նպատակով անհրաժեշտ էր միավորել գաղթականների օգտին գործող բոլոր կազմակերպությունների և մարմինների ուժերը: Ինչպես իրավացիորեն հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանն էր գշում, «Պետք է ուժեղացնել քաղաքացիական գործիչների ու օգնողների փոքրիկ ու թույլ բանակը և նպատակահարմար կազմակերպել օգնության գործը»²:

Կազմակերպչական այդ աշխատանքն իր վրա ստանձնեց Էջմիածնի նորաստեղծ եղբայրական օգնության կոմիտեն, որն իբրև հեղինակավոր և ձեռնահաս մարմին իր վրա բևեռեց հայ հասարակության ուշադրությունը: Նրա անմիջական ղեկավարությամբ և Գևորգ Ե Կաթողիկոսի տնօրինությամբ 1915 թ. մարտի 1—2-ը Էջմիածնի վանքի Մատենադարանի դահլիճում տեղի ունեցան նախօրոք նշանակված գաղթականական առաջին համագումարի նիստերը³:

Հետագայում կաթողիկոսը 1915 թ. մարտի 21-ի իր կոնդակում կնշեր, որ «... Ի նկատի առեալ զօգուտն փախստական-գաղթական զավակսց մերոց և ցանկացեալ մեր կանոնավորել զգործ օգնության ի գյուղորայս և ի քաղաքս Կովկասու՝ համաչափ բաշխմամբ նպաստից, կազմակերպել հատկապես զվերադարձ փախստական-գաղթականց ի Հայաստան և բարվոքել զտնտեսություն և զերկրագործություն ի բնակավայրս նոցա, մենք անհրաժեշտ վարկաք հրավիրել զպատգամավորս հանձնաժողովոց և Միությանց, Ընկերությանց և Հաստատությանց ի Ս. Էջմիածին, ի 1-ն մարտ ամսոյս, վասն խորհրդակցելո աստ՝ ընդ հովանավորությամբ և անմիջական հսկողությամբ մերով՝ հաղագս հիշյալ կարևոր խնդրոց»⁴:

¹ ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 192, թ. 29:

² Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959, էջ 214:

³ ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 27, ց. 1, գ. 228, թ. 33, նաև «Մշակ», 1915 թ. № 51—52:

⁴ Նույն տեղում, ֆ. 55, ց. 1, գ. 115, թ. 2:

Համագումարը հանդիսավորությամբ բացվեց կաթողիկոսի կոնդակի ընթերցանությամբ, որից հետո համագումարի նախագահ ընտրված Հուսիկ արքեպիսկոպոսը ներկայացրեց համագումարի օրակարգը. այն է՝ 1) համերաշխ գործունեություն հաստատել գաղթականների օգտին գործող բոլոր հանձնաժողովների և ընկերությունների միջև, 2) Կովկասի քաղաքներում և գյուղերում կազմակերպել գաղթականների օգնության գործը, 3) լսել այլ վայրերում գոյություն ունեցող հանձնաժողովների հաշիվներն ու զեկուցումները, 4) հոգալ գաղթականների վերադարձի և նրանց՝ իրենց նախկին բնակավայրերում բարվոք վերահաստատելու և Հայաստանի վերաշինության մասին, ինչպես նաև այլ հարցեր⁵:

Համագումարի աշխատանքներին ձայնի իրավունքով մասնակցում էին Էջմիածնի, Երևանի, Նախիջևանի և Իգդիրի Եղբայրական օգնության հանձնաժողովների, Թիֆլիսի Կենտրոնական միության, ԿՀԲԸ, Կենտրոնական կոմիտեի և Ծխական հոգատարության, Կարսի գաղթականական մասնաժողովի, Հայկական գյուղատնտեսական և նպաստամատույց ընկերությունների, Բաքվի Ազգային բյուրոյի գաղթականական մասնաճյուղի, Կուլտուրական միության և Մարդասիրական ընկերության, Մոսկվայի, Սիմֆերոպոլի և Ալեքսանդրոպոլի հայկական կոմիտեների, Նոր Նախիջևանի հայկական բյուրոյի ներկայացուցիչները:

Խորհրդակցական ձայնի իրավունքով համագումարին ներկա էին՝ Թիֆլիսի քաղաքային հանձնաժողովի, Պարսկահայ փախըստականական հանձնաժողովի, Դրիմի քաղաքների և Թիֆլիսի Կենտրոնական բյուրոյի մի շարք ներկայացուցիչներ⁶:

Համագումարն իր երկրորդ նիստում ըզբաղվեց Էջմիածնի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Իգդիրի, Նախիջևանի, Թիֆլիսի, Նոր Նախիջևանի, Սիմֆերոպոլի գաղթականական կոմիտեների, ինչպես նաև Կենտրոնական կոմիտեի, Բարեգործական ընկերության, Նպատակամատույց ընկերության, Բաքվի Հայկական բյուրոյի և Պարսկահայների հանձնաժողովի զեկուցումները լսելով: Ամփոփելով և ընդհանրացնելով վերոհիշյալ զեկուցումները, համագումարի մասնակիցները եկան այն եզրակացությանը, որ ա) 60000 փախստականների պատսպարման և կերակրման համար՝ յուրաքանչյուրին հաշվելով օրական 15 կոպեկ նպաստ, երեք

ամսում (հունվար, փետրվար, մարտ) ծախսվել էր 800000 ռ., բ) այդ գումարից հայ հասարակական և բարեգործական ընկերությունները ծախսել էին 200000 ռ., իսկ պատերազմից վնասվածների օգնող Կովկասյան գլխավոր կոմիտեն՝ աջակցությամբ Պետրոգրադի Տատյանա Նիկոլանուսյի կոմիտեի՝ 100000 ռ.: Ընդամենը՝ 800000 ռ.: Նշանակում է մնացած 500000 ռ., կամ ծախսված գումարի 5/8-ը, հոգացել էր գյուղական հայ ժողովուրդը, գ) հարկավոր էր մտածել օգնության նոր միջոցների մասին, քանի որ հայ գյուղացիությունը գտնվում էր աննպաստ տնտեսական պայմաններում և նրա տնտեսությունը քայքայված էր և դ) անհրաժեշտ էր բոլոր զեկուցագրերը խլով՝ բազրել և առանձին հրատարակել:

Համագումարի երրորդ նիստում ընտրվեց մի հանձնաժողով, որի նպատակն էր ճշտել բոլոր արձանագրությունների թիվը, որոշել հասարակական և բարեգործական ընկերությունների և գյուղացիության հարաբերական օգնության չափը, կազմակերպել փախստականների պաշտպանության և վերադարձի նախահաշիվը և այդ բոլորը ներկայացնել համագումարին:

Ապա համագումարը քննության առավ՝ ա) գաղթականների տեղավորման հարցը, բ) նրանց օգնության քանակն ու չափերը, գ) բժշկական օգնության կազմակերպումը, դ) շորերի բաշխման ձևը, ե) աշխատանքի հարցը և որոշեց հետևյալը. գաղթականներին տեղավորել հիմնականում գյուղերում՝ հաշվի առնելով կլիմայական պայմանները և վերադարձի հարմարությունները, նախապատվություն տալ նյութական օգնությանը՝ դրամական օգնության փոխարեն, նշանակել նպաստ՝ յուրաքանչյուր շնչին 15 կոպեկի չափով չհաշվելով բնակարանի և վառելիքի վարձը, բացել այլուրի, օճառի և աղի պահեստներ, օգնություն կազմակերպել ամենքին, հիմնել բժշկական կենտրոնական վայրեր, դեղատներ, հրավիրել ֆելդշերներ, սանիտարներ, շորերի համար բացել կենտրոնական պահեստ, ցուցակագրել աշխատանքի ընդունակ փախստականներին և նրանց համար գործ գտնել, իսկ աշխատանքից խուսափողներին և բավարար աշխատավարձ ստացողներին նպաստից զրկել: Որոշվեց նաև բացել որբանոցներ, ուր որբերի հետ միասին նախատես-

⁵ Նույն տեղում, ֆ. 382, ց. 1, գ. 1023, թ. 2:

⁶ Նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 40, նաև «Հորիզոն», 1915 թ. մարտի 17, № 60:

⁷ ЦГИА Гр. ССР, ф. 520, оп. I, д. 204, л. 8.

⁸ ՀԽՍՀ ՊԴԿԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 40, նաև «Փայլակ», 1915 թ. մարտի 15, № 3:

վում էր խնամել նաև ժամանակավորապես ծնողակորույս երեխաներին⁹:

Համագումարի չորրորդ գիստը զբաղվեց օրակարգի առաջին կետի քննությամբ, որը նախատեսում էր համերաշխ և միատարր գործունեություն հաստատել գաղթականների հարցով զբաղվող բոլոր ընկերությունների և կազմակերպությունների միջև: Այդ էր պատճառը, որ կարծիքների փոխանակությունից հետո համագումարն ընդունեց կարևոր բանաձև, որի մեջ նշվում էր, որ «... անհրաժեշտ է հիմնել մի կենտրոնական ղեկավարիչ և տեղեկատու մարմին՝ փախստականներին օգնելու համար»: Հետագայում հիմնվելիք այդ մարմնի նստավայր համագումարը ճանաչեց Էջմիածինը: Համագումարի որոշման համաձայն ղեկավար այդ մարմինը պետք է բաղկացած լիներ 12 անդամներից, այն է՝ Էջմիածնի և Երևանի 4-ական, Թիֆլիսի 2-ական, Բաքվի և Մոսկվայի 1-ական ներկայացուցիչներից՝ հիշատակված տեղերի ընտրությամբ, թույլ տալով նաև վճռական ձայնի իրավունքով այդ մարմնի նիստերին մասնակցել նաև բոլոր այն մասնակիցներին, որոնք զբաղվում էին փախստականների հոգածությամբ և խնամատարությամբ¹⁰:

Համագումարի 5-րդ գիստը քննության ենթարկեց օրակարգի չորրորդ կետը, այն է՝ միջնորդություն հարուցել արևմտահայ գաղթականներին ռուսական հպատակություն շնորհելու մասին, գաղթականների վերադարձի և նրանց՝ իրենց նախկին վայրերում վերահաստատվելու վերաբերյալ, թուրքական գերության մեջ գտնվող հայ կանանց և երեխաների ազատագրումը, դիմել Անտանտի տերություններին ազատագրելու համար հայ ժողովրդին թուրքական լծից և բոլոր հայերի միավորումը, ռուսական ցարին խնդրել ներում շնորհել բոլոր այն հայ քաղբանտարկյալներին, որոնք պատկանում էին դաշնակցություն կուսակցությանը¹¹:

Թիֆլիսի կենտրոնական բյուրոյի ներկայացուցիչ Ս. Տիգրանյանի զեկուցումից պարզվեց, որ հայ գաղթականներին Բալագետ-Ալաշկերտի շրջանները վերադարձնելու և նրանց կենցաղային կարիքները

հոգալու համար, անհրաժեշտ էր հաստատել 2 մարմին՝ մեկը Իզդիրում, մյուսը՝ բուն երկրում, ունենալ շրջիկ գործակալներ և մի հատուկ պահակախումբ՝ 100—150 հոգուց բաղկացած, որի նպատակն էր հսկել գաղթականներին և նրանց դաշտային աշխատանքներին: Այդ բոլորի համար զեկուցողը պահանջում էր 50000—55000 ռ.:

Ապա համագումարը երկար խորհրդակցելով օրակարգի 4-րդ կետի շուրջը, փորձեց որոշել համագումարի մասնակիցների սկզբունքային և գործնական տեսակետները գաղթականների վերադարձի նկատմամբ: Այդ առիթով ընդունվեց բանաձև, որի մեջ նշվում էր, որ «Համագումարը գաղթականների կենսական շահի տեսակետով անհրաժեշտ է գտնում նրանց վերադարձը իրենց վայրերը առաջին իսկ հնարավոր դեպքում»¹²:

Հաջորդ գիստի ժամանակ համագումարը քննության առավ Բալագետի շրջանի հրմուտ գիտակ Ռ. Դրամիյանի բովանդակից զեկուցումը, որից հետո ձեռնամուխ եղավ գաղթականների առաջիկա 6 ամիսների խնամատարության և նրանց վերադարձի մոտավոր նախահաշվի կազմությանը: Այդ առիթով համագումարը ծրագրեց հետևյալ հայեցակետերը. ա) որոշել բոլոր փախստականների ընդհանուր թիվը, բ) որոշել առաջիկա 6 ամիսների համար նրանց պահպանության ծախսը, գ) որոշել գաղթականների վերադարձի ծախսը՝ հաշվելով մարդագլուխը 3 ռ., դ) կազմել յուրաքանչյուր ընտանիքի միջակ տնտեսության վերականգնման ընդհանուր ծախսը, ե) որոշել գաղթականներին տեղում ապահովելու, ապահով վերադարձի հարցը և լիցենզիա ծախսի չափը: Սույն նպատակները իրականացնելու համար ընտրվեց մի հանձնաժողով՝ բաղկացած Ե. Թադիանոսյանից, Ավագյանից, Ա. Ծարաֆյանից և Ռ. Դրամիյանից, որին հանձնարարվեց կազմել փախստականների պահպանման և վերադարձի նախահաշվի մոտավոր պատկերը: Հանձնաժողովը քննելով հարցը, ներկայացրեց այդ նախահաշիվը, որի համաձայն 82382 փախստականների¹³ հոգածությունը բաղկացած էր 2 մասից՝ ա) գաղթականների 6 ամսվա պահպանման և բ) հայրենիք վերադարձնելու և տնտեսությունը վերականգնելու ծախսերից:

⁹ Նույն տեղում, նաև «Հորիզոն», 1915 թ. մարտի 17, № 80:

¹⁰ ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 40, նաև ֆ. 55, ց. 1, գ. 115, թ. 2:

¹¹ ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 27, д. 3686, л. 9. *Լաև* III. И. Баспая. Заканказы в годы первой мировой войны, Сухуми, 1968, стр. 110—111.

¹² ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 40, նաև «Հորիզոն», 1915 թ. մարտի 17, № 80:

¹³ Նույն տեղում:

1. Գաղթականների 6 ամսվա պահպանության ծախսեր.

1. 80000 հոգու սնունդը 6 ամսում՝ շնչին օրը 15 կոպ. = 1620000 ռ.
2. Բժշկական օգնություն = 123200 ռ., որից
 - ա) 7 հիվանդանոցների ծախսը 6 ամսում՝ ամիսը 2000 ռ. = 84000 ռ.:
 - բ) Շրջիկ բժիշկների, ֆելդշերների և դեղերի համար նախատեսված ծախս = 16000 ռ.:
 - գ) Շրջիկներ կազմակերպչական, 20 հոգու համար՝ օրը 100 ռ. = 12000 ռ.:
 - դ) Չնախատեսված ծախսեր, 10 տոկոս = 11000 ռ.:

Ընդամենը՝ 1743200 ռ.

2. Գաղթականներին հայրենիք վերադարձնելու և տնտեսությունը վերականգնելու ծախսեր.

1. 80000 հոգու համար, յուրաքանչյուրին՝ 3-ական ռ. = 180000 ռ.
2. Ծինությունների վերաշինություն՝ 8900 ռ. 50 կ. = 445000 ռ.:
3. Սերմացուի մատակարարում. 80000 հոգու համար ցորեն և գարի, յուրաքանչյուրին 3-ական փութ 1 ռ. 50 կոպ. — 4 ռ. 50 կոպ. = 540000 ռ.:
4. Անասունների ծախս. 8900 ընտանիքի մի գույզ եզ՝ գույզը 100 ռ. = 890000 ռ., 8900 ընտանիքի մեկական կովը՝ հատը 30 ռ. = 267000 ռ.:
5. Գյուղատնտեսական գույք.
 - ա) 8900 հատ սայլ՝ հատը 5 ռ. = 445000 ռ.:
 - բ) 8900 հատ արոր՝ հատը 3 ռ. = 267000 ռ.:
 - գ) 8900 հատ մանգաղ՝ հատը 1 ռ. 50 կ. = 13350 ռ.:
 - դ) 8900 հատ լուծ՝ հատը 2 ռ. = 17800 ռ.:
 - ե) 17800 հատ գերանդի և մանգաղ՝ հատը 80 կ. = 10680 ռ.:
 - զ) չվալ, թոկ, բահ, կացի, ուրագ՝ հատը 3 ռ. = 26700 ռ.:

Ընդամենը՝ 3102530 ռ.

Եվ այսպես՝ 1) գաղթականների 6 ամսվա պահպանության համար նախատեսվում էր՝ 1743000 ռ., 2) հայրենիք վերադառնալու և տնտեսության վերականգնման համար՝ 3102530 ռ., 3) կյանքի և գույքի ապահովության համար՝ 4555230 ռ., ընդամենը՝ 4995530 ռ.¹⁴:

¹⁴ Նույն տեղում, նաև «Հորիզոն», 1915 թ. մայիսի 6, № 51, նաև «Արեգ», 1915 թ. ապրիլի 4, № 11:

Հաշվի առնելով հիշյալ գումարի մեծության չափը և հասարակական ու մասնավոր ուժերով կարիքը բավարարելու անհնարինությունը, համագումարը սիստեմատիկորեն կայացրեց խնդրել կաթողիկոսին, որ վերջինս էլ իր հերթին միջնորդի կառավարությանը՝ մեծ մասշտաբով օժանդակություն կազմակերպելու նպատակով:

Համագումարը գիտակցելով, որ հարկավոր է մի ընդհանուր կապ ստեղծել բոլոր այն հայկական հաստատությունների միջև, որոնք զբաղվում էին գաղթականների օգնության գործով, ընդունեց նախկին հանձնաժողովի կազմած բանաձևը՝ Էջմիածնի կենտրոնական հանձնաժողովի գործելակերպի մասին, այն է՝ 1) Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր հովանավորության և հսկողության ներքո գտնվող Եղբայրական օգնության կոմիտեի գլխավոր կարգադրիչ հանձնաժողովն ընդհանուր ղեկավար օրգան էր հանդիսանում բոլոր այն հանձնաժողովների և կազմակերպությունների համար, որոնք զբաղվում էին փախստական գաղթականների օգնության գործով, 2) կոմիտեն էր վարում պաշտոնական բոլոր դիմումները և հարաբերությունները կառավարության հետ, 3) կոմիտեն հավաքում և կենտրոնացնում էր գաղթականների վիճակի և կարիքների հետ կապված բոլոր տեղեկությունները, 4) հրապարակում էր համազգային կոչեր ժողովավարության համար, 5) որպես ի գիտություն ստանում էր գաղթականներին օգնող բոլոր հաստատությունների հաշիվները, 6) գոյություն ունեցող հաստատությունները պահում էին իրենց անունը և շարունակում իրենց ինքնավար գործունեությունը¹⁵:


Էջմիածնի համագումարը պատմական մեծ նշանակություն ունեցավ հայ գաղթականության կյանքում: Այն առաջին համագումարն էր, որ քննության ենթարկեց գաղթականների օգնության, նրանց պահպանման, տեղավորման և հայրենիք վերադառնալու հարցերը: Համագումարը տեղի ունեցավ մի աշնանիսի ժամանակաշրջանում, երբ ավարտվել էր 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան գաղթը և դեռ չէր սկսվել 1915 թ. Վասպուրականի հուլիսյան աղետալի գաղթը: 1915 թ. գարնանը մեծ թվով գաղթականներ վերադարձան իրենց բնակության նախկին վայրերը և ձեռնամուխ եղան Հայաստանի վերաշինության գոր-

¹⁵ ЦГАОРСС СССР, ф. ДПОО, оп. 245¹ (1915 г.), л. 168 (1), лл. 35—36, 38, նաև ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 40, նաև «Հորիզոն», 1915 թ. մարտի 8, № 58:

ծին: Այդ առումով մեծ նշանակություն ունեցան հատկապես Էջմիածնի համագումարի պատմական որոշումները: Համագումարում առաջին անգամ փորձ կատարվեց կենտրոնացնելու հայ գաղթականության հարցով զբաղվող բոլոր հասարակական և բարեգործական հաստատությունների ուժերը: Մինչ այդ բացակայում էր բնդհանուր ղեկավարությունը, գործունեության ընդհանուր, միաբան և համերաշխ համակարգը, դրամական և նյութեղեն նպաստների բաշխման միասնությունը: Բազմաթիվ հաստատություններ, ընկերություններ, հանձ-

նաժողովներ, կոմիտեներ զանազան քաղաքներում, գործում էին իրարից անկախ և ազատ, առանց որևէ համաձայնության: Միավորման պահանջը ավելի հրամայողական ձևով հրապարակի վրա դրվեց գաղթականներին հայրենիք վերադարձնելու և նրանց քայքայված տնտեսությունը վերականգնելու հացի քննարկման ժամանակ: Միևնույն ժամանակ համագումարը մեծ փորձ կուտակեց Պետրոգրադի գաղթական և Արևմտահայերի համագումարների համար:





Պ. Հ. ՀԱԿՈՐՑԱՆ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆԾԱՆՈԹ ԻՆՔՆԱԳԻՐԸ

(ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ)

Դեռ 50-ական թթ. վերջերին, բանասիրական թարթափումների ընթացքում, որոնց հիմնական նպատակը հայ հին մատենագրությունն և դասական հայերենի ծագման ու զարգացման խնդիրների նորովի լուսաբանությունն էր, նյութի թելադրանքով անդրադառնալով Աստվածաշնչի հայերեն հին թարգմանությանը, որ հինգերորդ դարում Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը և նրանց աշակերտները կատարել էին նախ՝ ասորերեն տարբերակից, իսկ հետո՝ խմբագրել ըստ հունարեն, այսպես կոչված՝ յոթանասնից թարգմանության, Մ. Նալբանդյանը հայերեն բնագրի մեջ նկատում է բազում թերիմներ ու անհամապատասխանություններ, որոնց պատճառներն ամենին էլ հայկական գետնի վրա չպիտի որոնվեն։ «Այս թերությունքը,—գրել է նա,—մեր թարգմանիչների հանցանքը չէ, այլ հունական բնագրին, ըստ որում այդ բնագիրը 72 թարգմանչաց գործը չէ, այլ կցկտուր հավաքածո ասորական կամ այլ հունական թարգմանությունների, որ Որոգինեսը III դարում քարշելով այս ու այն տեղից՝ բան է շինել, և մերայինք թարգմանել են հինգ տարում» (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. V, Երևան, 1984, էջ 101)։ Ծատ չանցած՝ «Հյուսիսսափայլ» ամսագրում (1880, № 2) տղպագրվում է Ստ. Նազարյանցի «Հայոց ազգի լուսավորության կամ սուրբ թարգմանիչների դարը» խորագրով հոդվածը (շարունակությունը լույս է տեսել մեծ ուշացումով, № 9-ում)։ Մանրաթանալով այդ հոդվածին, ուր Նազարյանցը հանգամանորեն անդրադառնում էր նաև Աստվածաշնչի հայ թարգմանության պատմությանը, ինչպես երևում է, Նալբանդյանը դժգոհ է մնում նրա եզրահանգումներից, ու հիացական խոսքերից։ «Հայոց Աստվածա-

շուկն գրքի թարգմանությունը,—գրում էր Նազարյանը,—մի մարդու աշխատության վաստակ չէ... բայց թե ո՞րը ո՞ր հեղինակին է պատկանում, դժվար է վճռել այս բանը, մինչև եղած չէ գիտնապես հիմնավոր քննություն և համեմատություն... Ո՛չ մի լեզու այնպիսի խորին հավատարմությամբ կարողացել չէ առնուլ յուր վերա յոթանասուն թարգմանիչների հելլենիստս Հին կտակարանի և ավելի նոր, հունախոս Նոր կտակարանի կնիքը, ինչպես հայկականը... Հայոց թարգմանիչը ամենայն կարելի ճշտությամբ փոխադրել են հունական գաղափարը՝ բառ առ բառ թարգմանելով ամենայն բան... Սահակ Պարթևացին և նորա աշակերտները թարգմանել են միայն եբրայական սկզբնագրի մեջ գտնված գրքերը Հին կտակարանի... Անհայտք ասած գրքերը Հին կտակարանի, զոր օրինակ՝ Հուդիթի, Տոբիայի, Մակկաբայեցոց երեք գիրքը և Բարուքի թուղթը փոխադրված են ավելի ազատորեն... գուցե ոչ հառաջ, քան թե 13 կամ 14 դարու մեջ, երբ հայերը ծանոթացան լատինական եկեղեցու մատենագրության հետ» և այլն («Հյուսիսափայլ», 1860, № 2, էջ 140—141):

Նազարյանի այս ու մյուս նկատողություններն էլ դրդում են Նալբանդյանին նույն խնդիրների մասին իր եզրահանգումները հրապարակով ծանուցելու հանրությանը: —«Դրում են մի հոդված՝ քննելով մեր Աստվածաշնչի թերությունը»,—հաղորդում է նա 1860 թ. մայիսի 1-ին, Պետերբուրգից Մոսկվա, Մելքոն Փանյանին. «Դուք հուշենք այս բաների ապացույցքը և նկատողությունքը յուր ժամանակին»,—երկրորդում է նույն նամակում (տե՛ս Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. V, էջ 101):

Իր հետազոտությունները ծավալելու, Ս. Գրքի հայերեն հին թարգմանության մասին թյուր տեսակետները ցրելու և հոդվածը ժամանակին ավարտելու համար Նալբանդյանը եռանդով փնտրում է 1857 թ. Կ. Պոլսում լույս տեսած՝ Աստվածաշնչի աշխարհաբար (արևմտահայերեն) թարգմանությունը, որ կատարված էր եբրայերեն բնագրից, անգլիական և ամերիկյան միսիոներներ Զ. Էջերի, Հ. Դվայտի, Հ. Հոմսի և Է. Ռիգսի ու նրանց հայ օգնականների ջանքերով:

Ամենայն հավանականությամբ, փնտրած գիրքը ժամանակին ստանալով հանդերձ՝ Մ. Նալբանդյանը չի հասցնում օգտվել, որովհետև շուտով հայրենակիցների հանձնարարությամբ ստանձնելով հնդկահայ կտակների գումարները ձեռք բերելու դժվարին գործը, մեկնեց նախ՝ Էջմիածին ու Թիֆլիս, ապա՝ Արևմտյան Եվրոպա ու Հնդկաստան, իսկ վերադարձից հետո, դեռ հաշվետվություն չներկայացրած՝ անակնկալ ձերբակալվեց ու նետվեց Պետրոպոլիսյան ամրոց:

Բանտը, սակայն, չմեղցրեց Նալբանդյանի տարիների բաղձանքը: Այստեղ Աստվածաշունչ կարդալու և ուսումնասիրելու ազատ ու անսպառ հնարավորություններ կային: Բանտում նա հիմնավորապես ծանոթանում է Աստվածաշնչի ո՛չ միայն հայերեն հին ու նոր թարգմանությունների, այլև եբրայական բնագրի հետ, խորամուխ լինում նրա խմբագրությունների մեջ, բաղդատում այս վերջինները հունարեն և հայերեն հին թարգմանությունների հետ: 1863 թ. սկզբներին, առայժմ մեզ անծանոթ անձանցից, Նալբանդյանն աղոտ տեղեկություններ է ստանում Սինայի սուրբ Եկատերինա վանքում կատարված հայտնագործությունների մասին, որի հեղինակներից մեկը ոռու հնախոյզ Պորֆիրի Ուսպենսկին էր (1850-ին), և հետևորդը՝ Ռուսիայի հանրային կրթության նախկին մինիստր Ավրաամ Սերգենիչ Նոբոլի աջակցությունը վայելող՝ գերմանացի արևելագետ Տիշենդորֆը: Խոսքը

Աստվածաշնչի հումարեն թարգմանության՝ առ այսօր գիտությանը հայտնի հնագույն ձեռագրի մասին է (IV թե V դարու գրչագիր), որը պարունակում էր Հիմ կտակարանի մեծ մասը և Նոր կտակարանն ամբողջությամբ (Ս. Եկատերինայի վանքի միաբանությունը 1859-ին հիշյալ ձեռագիրը նվիրաբերել էր Ռուսաստանի միապետին, և 1862-ին ռուս տերության միջոցներով իրականացվեց նրա լուսատիպ հրատարակությունը 4 ստվար հատորով (այդ ձեռագիրը, որ ամբողջ 75 տարի պահվում էր Էրմիտաժում, 1934-ին վաճառվեց Բրիտանական թանգարանին)։

Հիմք ունենալով Աստվածաշնչի հումարեն թարգմանության բնագիրն ամփոփող այս հնագույն գրչագրի առավելությունների մասին շրջող չափազանցված ու հակասական լուրերը, 1863 թ. փետրվարին Նալբանդյանը նամակով հանձնարարում է Անանիս Սուլթանշահին՝ հավաստի տեղեկություններ հասցնել իրեն։ «Վերջերս ինձ ասացին, —գրում էր նա,—որ պ. Նորովը... Սինայում հայտնաբերել է Աստվածաշնչի ամենահին հունական մի ձեռագիր, միայն չկարողացան ինձ ասել, թե ո՞ր դարին է վերաբերում... Ինձ համար շատ հետաքրքրական է այդ մասին, որքան կարելի է, ավելի բան իմանալ։ Եթե սա գրված է Քրիստոսի ծննդից մի քանի դար առաջ, ապա այդ իսկական գանձ է՝ ստուգելու հրեական Նազարեթյան տեքստը և Քրիստոսի ծննդից հետո, 3-րդ դարում Որոգինեսի հավաքած հունական թարգմանությունը, որը համարվում է 72 մեկնիչների իսկական թարգմանությունը և որից 5-րդ դարում կատարված է մեր թարգմանությունը» (տե՛ս նույն տեղում, էջ 213)։

Ի՞նչ հաղորդեց Սուլթանշահը Նալբանդյանին, չգիտեմք, բայց Աստվածաշնչի հայերեն թարգմանության քննությունը նա չի ընդհատում, եռամսհով համեմատում է եբրայական բնագրի հետ և նկատած ակնառու շեղումները նշում հատուկ թերթիկների վրա, իր հետևություններն ու նկատողությունները հավելագրում դրանց։ Արդյունքը, սակայն, ո՛չ թե ամբողջական հետազոտություն էր, այլ հատվածական նկատողությունների շարք։

Այդ պատառիկները Նալբանդյանի մահից հետո անցնում են նրա առաջին կենսագրի՝ Մ. Տեր-Գրիգորյանցի ձեռքը, որն իր ասելով, նպատակ ուներ մոտ ապագայում դրանք հանձնել տպագրության՝ նախապես ծանուցելով հանրությանը։ Նա գրում էր. «Այդ միջոցին (այսինքն՝ բանտում անցկացրած տարիներին—Պ. Հ.) նա ուսումնասիրեց նաև եբրայեցոց և հունաց լեզուները և համեմատեց մեր Աստվածաշունչը եբրայեցոց և հունաց Աստվածաշնչի հետ։ Այս աշխատության արդյունքը, որ կտոր-կտոր թղթերի վրա է գրված և մի ամբողջ շարադրություն չէ, կաշխատենք, եթե հանգամանքները ներեն, տպել նորա մյուս գրվածքների հետ միասին» (տե՛ս «Ղազար Փարպեցու գրած Թուղթը՝ Մեղադրության ստախոս արեղաներին», թարգմանություն և բացատրությունք Մ. Նալբանդյանց, Ս. Պետերբուրգ, 1868, հրատարակչի առաջաբանը, էջ XVIII)։

Մ. Տեր-Գրիգորյանցը Նալբանդյանի պատառիկները հրատարակելու հնարավորություն չունեցավ, որովհետև շուտով ինքն էլ վախճանվեց։ Ո՛ր կորան նրա հավաքած նյութերը, չկարողացանք պարզել։ Եվ այնուհանդերձ՝ մեր տեական որոնումների ընթացքում ի հայտ եկան Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը վերաբերող պատառիկներից երկուսը, որոնցից մեկը և հրատարակում ենք ստորև։

Այն կատարված պետք է լինի 1863—1866 թթ. միջև, Նալբանդյանի կյանքի վերջին տարիներին։

Բայց նախ՝ մի քանի խոսք բուն ձեռագրի մասին։ Ծարդ անտեսված այս

թարգմանության ձեռագիրը (ինքնագիր, մաքրագիր) պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Մ. Նալբանդյանի թողոններում՝ № 35—I (11): Առ այսօր ուսումնասիրված և հրատարակված չէ: Խորագրված է՝ «Մարգարեություն Եսայեայ»: Լեզուն գրաբար է: Ձեռագրի վերին լուսանցքում կա մակագրություն. «Նվեր Ե. Ծ-ից»: Թե ե՞րբ և ո՞ւմից է ստացել Ե. Ծահալզը Մ. Նալբանդյանի այս հետաքրքրական ինքնագիրը և հետո նվիրել թանգարանին, հայտնի չէ:

Նալբանդյանի թարգմանությունն, ըստ էության համերաշխ է Հիմ կտակարանի եբրայական բնագրից ամերիկացի միսիոներների կատարած արևմտահայ թարգմանության հետ (Պոլիս, 1857), թեպետ վերջինս աշխարհաբար է, իսկ Նալբանդյանինը՝ գրաբար: Նկատվում է այնուհետև, որ երկու թարգմանությունների մեջ էլ եբրայերեն բնագրում պակասող բառերը, որոնց հավելումն անհրաժեշտ է եղել այս կամ այն մախադասության իմաստը ճիշտ մակաբերելու համար, շարված են շղատառով: Ամերիկացի միսիոներներն ավելորդ չեն համարել այդ առթիվ հատուկ ծանուցում անել. «Այս թարգմանության մեջ՝ տեղ-տեղ բանին իմաստը բացատրելու համար բառեր ավելցված են, որոնց բնագրին մեջ չգտնվիլը իմացրնելու համար մոտր գրով պահված են» («Աստվածաշունչ գիրք Հիմ և Նոր կտակարանաց», եբրայական և հունական բնագրերեն թարգմանված, Կոստանդնուպոլիս, ի տպարանի Մ. Յոհաննու, 1857, էջ Դ): Նալբանդյանի ներկա թարգմանության մեջ մամօրինակ ծանոթությունը բացակայում է, որ, երևի թե, եղել է Աստվածաշունչի հին հայերեն թարգմանության քննությանը վերաբերող մյուս պատահիկների մեջ, որոնք, ինչպես մշել ենք մախաբանում, մեզ չեն հասել:

Այս ակնհայտ մամությունները չեն մշանակում սակայն, թե Նալբանդյանը արևմտահայ թարգմանությունը պարզապես վերածել է գրաբարի: Ընդհակառակը, նրա թարգմանությունը ինքնուրույն գործ է և կատարված է անմիջականորեն եբրայական բնագրից, որի ապացույցը առկա տարբերություններն են: Միայն մի օրինակ:

Սահակ Պարթևն ու իր աշակերտները Եսայի մարգարեության ԿԱ, 1 բանաստեղծական տողը V դարում թարգմանել են.

«Հոգի տեառն ի վերայ իմ»:

Բողոքական քարոզիչները՝ XIX դարում.

«Տեր Եհովային հոգին իմ վրաս է»:

Իսկ Մ. Նալբանդյանը թարգմանել է.

«Հոգի Ադովմայի Տեառն է ի վերայ իմ» (մախնական տարբերակը. «Հոգի Տեառն Աստուծոյ է ի վերայ իմ»):

Նշանակում է, Նալբանդյանը չի ստրկացել թարգմանություններից ոչ մեկին՝ աչքի առաջ ունենալով, սակայն, և՛ հին, և՛ նոր թարգմանությունները:

Որպեսզի ընթերցողը հնարավորություն ունենա անձամբ հավաստիանալու Նալբանդյանի առաջադրած դրույթի ճշտությանը՝ Աստվածաշունչի եբրայերեն բնագրի համեմատությամբ, հունարենից կատարված հայ հին թարգմանության շեղումների ու թերությունների վերաբերմամբ, ինչպես նաև առարկայական հիմք ունենա որոշելու Նալբանդյանի՝ հին լեզուների (եբրայերեն, գրաբար) իմացության աստիճանը, «Մարգարեություն Եսայեայ» պատահիկը հրատարակության պատրաստելիս՝ նպատակահարմար գտանք Նալբանդյանի թարգմանությունը տալ որպես հիմնական բնագիր, իսկ էջա-

տակերին, զուգահեռաբար, մեջ բերել նաև միևնույն գլուխների հին հայերեն (գրաբար) և արևմտահայ (նոր) թարգմանությունները: Գրաբար թարգմանությունը՝ ըստ Աստվածաշնչի Ջոհրուպյան հրատարակության (Վենետիկ, 1805), որի օրինակը Մ. Նալբանդյանն օգտագործել է իր հետագոտությունների ընթացքում, բանտում, իսկ արևմտահայերենը՝ Պոլսի 1857 թվականի:

Եսայի Մարգարեության երեք գլուխները Նալբանդյանը գիտակցաբար է գրաբար թարգմանել, որպեսզի դյուրին լինե՞ր բալդատումը հայ հին թարգմանության հետ և տարբերությունների երևան բերելը:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

Գլուխ Կ

- 1 Արի՛, լուսաւորեա՛ց, զի եհաւ լոյս քո, և փառք Տեառն ի վերայ քո
- 2 ծագեցաւ: Զի ահա խաւար ծածկեացէ զերկիր, և մատախուղ՝ զազգս,
- 3 քայց ի քեզ՝ Տէր ծագեցի, և փառք նորա ի քեզ երևեցին: Եւ եկեացեն
- 4 ազգք առ լոյս քո, և թագաւորք՝ առ պայծառութիւնն ծագեալ ի քեզ:
- 5 Համբա՛րձ գաչս քո և հայեաց շուրջ զքն. ամենեքեան ժողովին և առ
- 6 քեզ գան. մանկունք քո ի հեռաստանէ եկեացեն և դստերք քո ի գիրկս
- 7 քարձցին: Յայնժամ տեսցես և խնդացես, և սիրտ քո շարժեցի և
- 8 բացցի, զի փոխեցի ի քեզ մեծութիւն ծովու, և յփութիւն ազգս: ց առ
- 9 քեզ եկեացէ: Երամակք ուղտուց, տաճիկ ուղտք Սադիամու և Գեփայ
- 10 ծածկեացեն զքեզ՝ ամենեքեան ի Սարայ եկեացեն բերել ոսկի և կընդ-
- 11 րուկ, և աւետարանեցեն զօրհնութիւնս Տեառն: Եւ ամենայն խաշինքն
- 12 Կեդարու ժողովեցին առ քեզ, և խոյքն Նաբէովթայ սպասեցեն քեզ,
- 13 և ելցեն նոքա ի սեղան իմ պատարագ ընդունելի, և զտուն փառաց ի-
- 14 մոց փառաւորեցին:

Գլ. Կ

1 Լուսաւորեա՛ց՝ լուսաւորեա՛ց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեցեն: 2 Զի ահա խաւար՝ ծածկեաց զերկիր, և մատախուղ զհեթանոսս. քայց ի քեզ Տէ՛ր յայտնեցի, և փառք նորա ի քեզ երևեցին: 3 Եւ գնացեն թագաւորք ի լոյս քո, և հեթանոսք ի ծագել լուսոյ քոյ: 4 Համբարձ գաչս քո, և տե՛ս ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո. զի եկին հասին ի հեռաստանէ որդիք քո, և դստերք քո ի վերայ ուսոց նոցա քարձեալ բերիցին: 5 Թա՛յնժամ տեսցես և խնդացես. երկիցե՛ս և զարհուրեցիս ի սրտի քում. զի փոխեցի ի քեզ մեծութիւն ծովու, և ազգաց՝ և ժողովրդոց: 6 Եկեացեն ի քեզ երամակք ուղտուց, և ծածկեացեն զքեզ ուղտերամակքն Մադիամու և Գեփայ: Ամենեքեան ի Սարայ՝ եկեացեն, բերել ոսկի՝ և կընդրուկ՝ և ակամս պատուականս. և զփրկութիւն Տեառն առցեն զաւետիս: 7 Եւ ամենայն խաշինքն Կեդարու ժողովեցին առ քեզ, և խոյքն Նաբէովթայ ածցին և մատուցին ընդունելի պատարագ ի վերայ սեղանոյ իմոյ. և տուն աղօթից իմոց փառաւորեցին:

Գլ. Կ

1 Եղի՛ր լուսաւորուէ՛. քանզի քու լոյսդ եկաւ. ու Տէրոջը փառքը քու վրայ ծագեցաւ: 2 Վասն զի ահա՛ երկիրը՝ խաւար, ու ազգերը՝ մատախուղ պիտի ծածկէ. քայց քու վրայ Տէրը պիտի ծագի. և անոր փառքը քու վրայ պիտի երևայ: 3 Ու քու լոյսիդ ազգեր պիտի գան, և քու վրայ ծագած պայծառութեամբ՝ թագաւորներ: 4 Աչքերդ վերցո՛ւր. ու բոլորտիքդ նայէ՛, ամէնքը կը ժողովուին. ու քեզի կու գան. քու տղաքներդ հեռուէն պիտի գան, և քու աղջիկներդ գիրկի մէջ պիտի վերցուին: 5 Ան առնել պիտի տեսնես և ուրախանաս, ու սիրտդ պիտի շարժի ու բացուի, քանզի ծովուն առատութիւնը քեզի պիտի դառնայ. ազգաց հարստութիւնը քեզի պիտի գայ: 6 Քեզ ուղտերուն երամակը՝ Մադիամու ու Գեփայի տաճիկ ուղտերը պիտի ծածկեն. ամենը Սարայէն պիտի գան, ոսկի ու կընդրուկ պիտի բերեն, և Տէրոջը գովութիւնները պիտի աւետեն: 7 Կեդարին բոլոր հօտերը քու քովդ պիտի ժողովուին, ու Նաբէօթին խոյները քեզի պիտի ծառայեն. անոնք իմ սեղանիս վրայ պիտի ելլեն՝ ընդունելի զո՞ռ ըլլալու. և իմ փառացս տունը պիտի փառաւորեն:

- 8 Ո՛վ եմ սոքա, որ թոռուցեալ եմ իբրև զամպ և իբրև զաղամիս
 9 թոռուցեալս ի վանդակ իւրեանց: Քանզի կղզիք և մախառաջին մաւք
 Թարսսի պատրաստ եղիցին վասն իմ՝ ի հեռաստանէ ածել զմանկունս
 10 քո, ընդ մոսա՝ զարծաթ և զոսկի մոցա, վասն անուան Տեառն Աստուծոյ
 քոյ և վասն Սրբոյն Իսրայէլի, զի մա փառաւորէ զքեզ: Եւ շինեսցեն
 11 զի վասն բարկութեան իմոյ հարի զքեզ, բայց ողորմութեամբ իմով
 ողորմեցայց քեզ: Եւ բացցին դրունք քո հանապազորդ, ի տուէ և ի
 12 գիշերի մի՝ փակեսցին. կրել ի քեզ զմեծութիւնս ազգաց և ածել զթա-
 13 գաւորս մոցա: Զի կորիցին ազգ և թագաւորութիւն, որք քեզ ոչ ծառա-
 14 յեցեն, և ազգք կործանեսցին մինչ իսպառ: Առ քեզ եկեսցեն փառքն
 15 Լիբանանու մայրիւ, սօսիւ և սարդիւ՝ առհասարակ փառաւոր առնել
 16 զտեղի սրբութեան իմոյ, և զտեղի ոտից իմոց փառաւորեցից: Եւ եկես-
 ցեն առ քեզ որդիք մեղշաց քոց կորացեալք, և ամենայն անարգութ
 զքեզ երկիրպագցին զարշապարաց ոտից քոց և անուանեսցեն զքեզ
 քաղաք Տեառն, Սիովն Սրբոյն Իսրայէլի: Զքեզ, որ եղեր լքեալ և ա-
 տեցեալ, և ոչ ոք էր, որ զքն անցանէր, արարից փառք յաւիտեանական
 և ուրախութիւն ազգէ յազգ: Եւ դիեսցես զկաթն ազգաց և զստինս թա-
 գաւորաց ծծեսցես և ծանիցես, թէ ես եմ, Տէրս, Ազատեցուցիչ քո ե

8 Ո՛վ եմ սոքա, որ իբրև զամպս թոռուցեալ եմ, և իբրև զաղամիս ձազախա՛նմ երամովին զամ առիս: 9 Ի՛նչ ակն ունին կղզիք և մաւք Թարսսի, յառաջագոյն ածել զորդիս քո ի հեռաստանէ. զարծաթն և զոսկի ընդ իւրեանս վասն անուան Տեառն սրբոյն և վասն սրբոյն Իսրայէլի փառաւորելոյ: 10 Եւ շինեսցեն որդիք այլազգեաց զպարիսպ քո, և թագաւորք մոցա ընծայեսցին քեզ: Զի վասն բարկութեան իմոյ հարի զքեզ, և վասն ողորմութեան իմոյ սիրեցի՛ զքեզ: 11 Եւ բացցի՛ն դրունք քո հանապազորդք ի տուէ և ի գիշերի. և մի՛ փակեսցին, կրել ի քեզ զզօրութիւն ազգաց. և զթագաւորս իւրեանց ածիցեն առ քեզ: 12 Զի ազգք և թագաւորք, որ քեզ ո՛չ ծառայիցեն՝ կորիցեն, և ազգքն աւերելո՛ւմ աւերեսցին: 13 Եւ փա՛ռքն Լիբանանու առ քե՛զ եկեսցեն սարդին և սասիւ, և մոճով և մայրիւ՝ առհասարակ փառաւոր՝ առնել զտեղի սրբութեան իմոյ. և ըզտեղի ոտից իմոց փառաւորեցի՛ց: 14 Եւ եկեսցեն առ քեզ զարհուրեալք որդիք մեղշացն քոց՝ զայրացուցսց, երկի՛ր պագցեն հետոյ ոտից քոց, ամենւնքին որ զարհուրեցուցանէինն զքեզ. ե կոչեսցիր քաղա՛ք Տեառնն սրբոյն Իսրայէլի: 15 Վասն զի եղեր դու լքեալ և աւերեալ, և ոչ ոք էր, որ օգնէր քեզ: Եւ արարից զքեզ յուրախութիւն յաւիտեանական. ցնծութիւն ազգաց յազգս: 16 Եւ դիեսցես զկաթն հիւրանոսաց, և զմեծութիւն թագաւորաց կերիցես: Եւ ծանիցես, թէ ես եմ Տէր, որ ապրեցուցանւմ և

8 Ո՛վ եմ ասոք, որ կը թռչին ամպի պէս, ու դէպ ի իրենց վանդակը թռչող աղամիներու պէս: 9 Քանզի կղզիները՝ ու մախ Թարսիսի մաւերը ինծի համար պատրաստ պիտի ըլլան, որ հեռուէն քու տղաքներդ և անոնց հետ անոնց արծաթը ու ոսկին բերեն, քու Տէր Աստուծոյդ անուանը համար ու Իսրայէլի Սուրբին համար. քանզի անհկայ քեզ կը փառաւորէ: 10 Եւ օտարաց որդիքը քու պարիսպներդ պիտի շինեն, ու անոնց թագաւորները քեզի ծառայութիւն պիտի ընեն. քանզի իմ բարկութեամբս քեզ զարկի, բայց բարեհաճութեամբս քեզի պիտի ողորմիմ: 11 Եւ քու դռներդ միշտ բաց պիտի ըլլան, ցորկ ու գիշեր պիտի չգոցուին, որ քեզի ազգերուն ստացուածքը կրեն, և անոնց թագաւորները բերուին: 12 Քանզի քեզի ծառայութիւն չընող ազգը ու թագաւորութիւնը պիտի կորսուի, ու ազգերը բոլորովին պիտի կործանին: 13 Լիբանանին փառքը քեզի պիտի գայ, մայրը, սօսին ու տօսախը մէկտեղ, իմ սրբարանիս տեղը զարդարելու համար, ե իմ ոտքերուս տեղը պիտի փառաւորեմ: 14 Ու քեզի մեղութիւն սուղներուն տղաքները ծնելով քեզի պիտի զան, և քեզ անարգողներուն ամէնը քու ոտքերուդ զարշապարներուն երկրպագութիւն պիտի ընեն. ու քեզ՝ Տէրոջը քաղաքը, Իսրայէլի սուրբին Սիօնը պիտի անուանեն: 15 Դու որ երեսէ ձգուած ու ատելի եղար, և քեզմէ անցնող չեղաւ, քեզ յաւիտեանական փառք ու ազգէ ազգ տնող ուրախութիւն պիտի ընեմ: 16 Եւ ազգերուն կաթը պիտի ծծես, ու թագաւորներուն ստինքը պիտի ծծես. և պիտի գիտնաս որ ես Տէրս եմ քու Ազատիչդ, ու քու Փրկիչդ՝ Յակոբին

- 17 Փրկիչ քո, Հօրն Իսրայելի: Փոխանակ արձնոյն բերից ոսկի և փոխանակ երկաթոյն՝ արծաթ, և փոխանակ փայտից բերից պղինձ, և փոխանակ քարանց՝ երկաթ: Եւ արարից զայցելոս քո սիրողս զհասղադութեանց, և զիշխանս քո՝ պաշտօղս զարդարութիւն: Եւ ոչ ևս լուիցի յերկրի քում բռնութիւ, և ոչ յափշտակութիւն և բեկումն՝ ի սահմանս քո, այլ անուանեսցես զսարիսպս քո փրկութիւն, և զփութիւն զդրունս քո: Ո՛չ ևս եղիցի քեզ արեգակն ի լոյս տոռունջեան, և մի՛ լուսին պայծառութեամբ իրով տաւցէ քեզ լոյս ի գիշերի. այլ Տէր քեզ՝ լոյս յափտեմական, և Աստուած քո փառք քեզ եղիցի: Ո՛չ ևս մտցէ արև քո, և մի՛ պակասեսցի լուսին քո. զի եղիցի քեզ Տէր լոյս յափտեմական, և աւուրք սգոյ քո կատարեսցին: Եւ ամենայն ժողովուրդ քո եղիցին արդար և յափտեման ժառանգեսցեն զերկիր. տունկ արկեալ իմ, գործ ձեռաց իմոց՝ եղիցին ինձ ի փառս: Եղիցի կրտսերն հազարաւոր, և սակաւաւորն՝ յազգ մեծ. ես ընդ փոյթ կատարեցից զայս, Տէրս, ի ժամանակի իրում:

ԿԱ

- 1 Հոգի սղովնալի Տեառն է ի վերայ իմ. քանզի օծ զիս Տէր, ստետարանել աղքատաց առաքեաց զիս, թշկել զբեկեալս սրտիս, հրատարակել գերեաց զթողութիւն և զբացումն բանտի բանտարկեւեաց. քարո-

փրկեմ զքեզ Աստուած Իսրայելի: 17 Եւ փոխանակ պղնձոյն՝ բերից քեզ ոսկի. և փոխանակ երկաթոյն՝ բերից քեզ արծաթ, և փոխանակ փայտի՝ բերից քեզ պղինձ, և փոխանակ քարի՝ տա՛ց քեզ երկաթ: Եւ տաց զիշխանս քո ի խաղաղութիւն՝ և զայցելոս քո յարդարութիւն: 18 Եւ ո՛չ ևս լիցի ամիրաւութիւն յերկրի քում, և ո՛չ բեկումն և թշուառութիւն ի սահմանս քո. այլ կոչեսցին ի փրկութիւն պարիսպք քո և դրունք քո ցնծութիւն: 19 Եւ ո՛չ ևս եղիցի քեզ արեգակն ի լոյս տոռունջեան, և ո՛չ ծագումն լուսնի տաւցէ քեզ լոյս ի գիշերի. այլ եղիցի քեզ Տէր լոյս յափտեմական, և փառք քո Աստուած: 20 Ո՛չ մտցէ քեզ արեգակն, և լուսին ի քէն ո՛չ պակասեսցէ. զի եղիցի քեզ Տէր լոյս յափտեմական: Եւ կատարեսցին՝ աւուրք ոգոյ քոյ: 21 Եւ ժողովուրդ քո ամենին արդար, և յափտեման ժառանգեսցեն զերկիր: Եւ պահել զմորատունկ գործոց ձեռաց իրեանց ի փառքս: 22 Սակաւաւորն հազարաւոր եղիցի, և կրտսերն յազգ մեծ: Զի ես Տէր ընդ ժամանակս ժողովեցից զնոսա:

ԳԼ ԿԱ

1 Հոգի՛ Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օ՛ծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս. թշկել զբեկեալս սրտիւք. քարոզել գերեաց զթողութիւն, և կորաց տեսանել: 2 Կոչել ա՛մ Տեառն ընդունելի և օր հատուցման Աստուծոյ մերոյ: Միսի-

Հօրն: 17 Պղինձի տեղ՝ ոսկի պիտի բերեմ, ու երկաթի տեղ՝ արծաթ, և փայտերու տեղ՝ պղինձ, և քարերու տեղ՝ երկաթ պիտի բերեմ. և քու վերակացուներդ խաղաղութիւն սիրող, ու քու իշխաններդ արդարութիւն գործող պիտի ընեն: 18 Մէջմըն ալ քու երկրիդ մէջը բռնութիւն և քու սահմաններուդ մէջը յափշտակութիւն ու կոտորած պիտի չլսուի. հապա քու պարիսպներդ՝ Փրկութիւն, ու դռներդ՝ Գովութիւն պիտի անուանես: 19 Մէջմըն ալ ցորեկը քու լոյսդ արևը պիտի չըլլայ, ու գիշերը լուսինը իր պայծառութեամբը քեզի լոյս պիտի չըտայ. հապա Եփովան քեզի յափտեմական լոյս՝ և քու Աստուածդ քու փառքդ պիտի ըլլայ: 20 Զու արևդ մէջմըն ալ պիտի չմտնէ, ու քու լուսինդ պիտի չնուագի. հապա Եփովան քեզի յափտեմական լոյս պիտի ըլլայ, և սուգի օրերդ պիտի վերջանայ: 21 Ու քու ժողովուրդիդ ամենը արդար պիտի ըլլան, ու երկիրը յափտեման պիտի ժառանգեն. իմ տնկած տունկս՝ իմ ձեռքերուս գործքը՝ իմ փառքիս համար պիտի ըլլայ: 22 Պզտիկը հազարաւոր, ու քիչորը մեծ ազգ պիտի ըլլայ. ես Տէրս շուտով պիտի կատարեմ ասիկայ իր ժամանակին:

ԳԼ ԿԱ

1 Տէր Եփովային Հոգին իմ վրաս է. վասն զի Տէրը զիս օծեց, ու զիս խրկեց աղքատներուն աւետիս տալու, կոտորած սիրտ ունեցողները թշկելու, գերիներուն ազատութիւն և բանտարկելոց՝ բանտին յացուիլը հրատարակելու: 2 Տէրոջը ընդունելի տարին, ու մեր Աստուծոյն վրեժագրութեան օրը հրապ-

- 3 զել ամ Տեառն ընդունելի և օր վրիժուց Աստուծոյ մերոյ, միխթարել
զամենայն սգաւորս, մեկնել զսգաւորս Սիովնի, տալ նոցա փոխանակ
մոխրոյն զփառս, փոխանակ սգոյն՝ օծումն ուրախութեան, և փոխանակ
4 ոգւոյն վիատութեան՝ հանդերձ գովութեան. և անուանեսցեն զնոսա
բեկնիս արդարութեան, զոր տնկեաց Տէր ի փառս իւր: Եւ շինեսցեն
զաւերակսն յաւիտեանից, և զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն, և
5 զքաղաքս աւերեալս և զմնացեալս աւեր՝ ազգաց յազգս՝ նորոգեսցեն:
Եւ յարիցեն օտարք և հովուեսցեն զխաշինս ձեր, և յերկրագործս ե
6 յայգեգործս եղիցին ձեզ որդիք օտարաց: Բայց դուք քահանայք Տեա-
ռն կոչեսցիք, պաշտօնեայք Աստուծոյ մերոց անուանեսցիք, զմեծու-
7 թիւն ազգաց կերիչիք և ի փառս նոցա փառաւորեսցիք: Փոխանակ ա-
մօթոյն ձերոյ կրկին ուրախութիւն, և փոխանակ անարգանաց՝ ի ծառան-
գութեան իրեանց ցնծասցեն, վասն այսորիկ առցեն նոքա յերկրի իւ-
րեանց զկրկին ծառանգութիւն, և ունիցին նոքա ուրախութիւն յաւիտե-
8 նական: Զի ես, Տէրս, սիրեմ զարդարութիւն և ատեամ զանիրաւութիւն
և զյաւիշտակութիւն. այո՛, տաց վարձս գործոց նոցա և ուխտ յաւի-
9 տեանից ուխտեցից ընդ նոսա: Եւ ծանցի ի մէջ ազգաց զաւակ նո-
ցա, և որդիք նոցա՝ ի մէջ ժողովրդոց, ամենեքին, որ տեսանցեն
10 զնոսա, ճանաչեսցեն, թէ նոքա են զաւակ Տեառն օրհնեալ: Ես ի Տէր
ցնծացայց, և անձն իմ յԱստուած իմ ուրախացի, զի զգեցոյց ինձ հան-

թարել զամենայն սգաւորս: 3 Տա՛լ սգաւորաց Սիովնի փառս. փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան. եւ սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վիատութեան: Եւ կոչեսցին նոքա ազգք արդարու-
թեան՝ տունկ Տեառն ի փառս: 4 Եւ շինեսցեն զաւե-
րակսն յաւիտեանից, և զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն. և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս
ազգաց միմէ և յազգս: 5 Եւ եկեսցեն օտարածինք
հովիւք խաշանց քոց. և այլազգիք մաճակալք և այ-
գեգործք քո: 6 Բայց դուք քահանայք Տեառն կո-
չեսցիք. պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանե-
ցիք. զգորութիւն ազգաց կերիչիք, և մեծութեամբ
նոցա սքանչելի՛ լինիցիք: 7 Փոխանակ ամօթոյ ձե-
րոյ կրկին՝ ուրախութիւն, և փոխանակ անարգանաց
ձերոց ցնծութիւն. և ապա՝ զերկիրն յերկրորդում
ծառանգեսցեն. և ուրախութիւն յաւիտեանից ի վերայ
զլիսոց նոցա: 8 Զի ես եմ Տէր, որ սիրեմ զարդա-
րութիւն և ատեամ զյաւիշտակութիւն յանիրաւութե-
նէ. տա՛ց զվաստակս նոցա արդարոց, և ո՛ւխտ յա-
ւիտեանից ուխտեցից ընդ նոսա: 9 Եւ ծանցի՛ ի մէջ
ազգաց զաւակն նոցա, և ծնունդք նոցա ի մէջ ժո-
ղովրդոց: Ամենեքին որ տեսանցին՝ ճանաչիցեն
զնոսա՝ թէ սոքա են զաւակ օրհնեալ յԱստուծոյ. և
ուրախութեամբ ուրախ եղիցին ի Տէր: 10 Ցնծասցե՛
անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկու-
թեան և պատմութեան ուրախութեան. իբրև փեսայի

տարակելու, ամէն սգաւորները միխթարելու, 3 Սի-
ովնի սգաւորներուն որոշելու, ու անոնց՝ մոխիրի տեղ՝
փառք, սուգի տեղ՝ ուրախութեան իւր, կոտորած հո-
գիի տեղ՝ գովութեան պատմութեան տալու, և պիտի
անուանեն զանոնք՝ Արդարութեան բեկնիքներ, որ
Տէրը տնկեր է իր փառքին համար: 4 Եւ հին աւե-
րակները պիտի շինեն, ու առջի կործանածները
պիտի կանգնեն, և արւած քաղաքները, ու շատ
դարերէն ի վեր աւերակ մնացածները պիտի նորո-
գեն: 5 Եւ օտարականները պիտի ելլեն, ու ձեր հօ-
տերը պիտի հովուեն. ու օտարաց որդիքը՝ ձեր
երկրագործները և այգեգործները պիտի ըլլան:
6 Բայց դուք Տէրոջը քահանաները պիտի կոչուիք.
մեր Աստուծոյն պաշտօնեաները պիտի ըսուիք. ազ-
գաց հարստութիւնը պիտի ուտէք, ու անոց փառ-
քովը պիտի փառաւորուիք: 7 Ձեր ամօթին տեղը՝
կրկին ուրախութիւն, և անարգանաց տեղը՝ իրենց
ծառանգութեանը մէջ պիտի ցնծան, ուստի իրենց
կրկին մէջը կրկին ծառանգութիւն պիտի առնեն.
անոնք յաւիտեանական ուրախութիւն պիտի ունենան:
8 Քանզի ես Տէրս արդարութիւնը կը սիրեմ, անի-
րաւութիւնը ու յաւիշտակութիւնը կ'ատեմ. իրացընէ
անոնց գործքերուն վարձքը պիտի տամ ու անոց
հետ յաւիտեանական ուխտ պիտի ընեմ: 9 Եւ անոց
սերունդը ազգերուն մէջ՝ ու անոց տղաքները ժո-
ղովուրդներուն մէջ պիտի գիտցուին. զանոնք ամէն
տեսնողները պիտի ճանչնան, թէ անոնք Տէրոջը
օրհնած սերունդն են: 10 Ես Տէրոջմով պիտի ցն-
ծամ, ու իմ հոգիս իմ Աստուծովս պիտի ուրախա-
նայ. քանզի ինձի վրկութեան հանդերձներ հազ-
ցուց, զիս արդարութեան պատմութեամբ ծածկեց,

- 11 դերձ փրկութեան, վերարկեաց զիս պատմունճանաւ արդարութեան, իր-
րն զփեսայ, զի խոյր փառաւոր դնիցէ ինքեան, և իբրն զհարսս, որ
զարդութեամբ զարդարիցի իրովք: Զի որպէս երկիր, որ անեցուցանէ զտունկ
իւր, և պարտեզ բուսուցանէ զսերմանեալս յինքեան, այնպէս բուսուցէ
Տէր Աստուած զարդարութիւն և զգովութիւն սուսջի ամենայն ազգաց:

ԿԲ

- 1 Ի սէր Սիովմի ո՛չ լոնցից, ի սէր Երուսաղէմի ո՛չ հաւնդարտեցից,
մինչև արդարութիւն նորա իբրն զլոյս, և փրկութիւն նորա ըստ չափու
2 բոցավառելոյ ճառագայթեցէ: Եւ տեսցեն ազգք զարդարութիւն քո և
ամենայն թագաւորք՝ զփառս քո, և յանուն նոր կոչեցիս դու, զոր քե-
3 րան Տեառն անուանեցէ: Եւ եղիցես պսակ վայելչութեան ի ձեռին
4 Տեառն, և թագ արքայութեան՝ ի ձեռին Աստուծոյ քոյ: Ո՛չ ևս կոչեցիս
«լքեալ» և երկիր քո ո՛չ ևս կոչեցի «աւերակ»: այլ դու՝ «ընդ որ ես
5 հաճեցայ», և երկիր քո կոչեցի ամուսնացեալ, զի հաճեցի Տէր ընդ
քեզ և ընդ երկիր քո ամուսնացի: Զի զոր օրինակ երիտասարդ ա-
մուսնանայ ընդ կուսի, այնպէս ամուսնացին մանկունք քո ընդ քեզ և
զոր օրինակ ուրախ լինի փեսայ ընդ հարսնն, այնպէս ուրախ եղիցի
Աստուած քո ի քեզ:
- 6 Ի վերայ պարսպաց քոց, Երուսաղէմ, կացուցի պահապանս, զօրն
ողջոյն և զգիշերն ամենայն մի՛ լոնցեն նոքա. ո՛ր, որ զՏէր յիշէք, մի՛

ե՛դ ինձ պսակ, և իբրն հարսն զարդու զարդարեաց
զիս: 11 Եւ իբրն երկիր, որ անեցուցանէ զծաղիկս
իւր, և իբրեւ զպարտեզ, որ բուսուցանէ զսերմանիս
իւր. այնպէս ծագեցէ Տէր զարդարութիւն իւր, և
զցնծութիւն առաջի ամենայն ազգաց:

Գ. ԿԲ

1 Վասն Սիովմի ո՛չ լոնցից, և վասն Երուսաղէմի
ո՛չ ներեցից. մինչև ծագեցէ իբրն զլոյս արդարու-
թիւն նորա և փրկութիւն նորա իբրն փայլակն վա-
ռեցի: 2 Եւ տեսցեն ամենայն թագաւորք զարդա-
րութիւն քո, և թագաւորք զփառս քո, և կոչեցի
քեզ անուն նոր, զոր Տէր անուանեցէ: 3 Եւ եղիցես
պսակ վայելչութեան ի ձեռին Տեառն, և թագ ար-
քայութեան ի ձեռին Աստուծոյ քոյ: 4 Եւ ո՛չ ևս կո-
չեցիս լքեալ, և երկիրն քո ո՛չ ևս կոչեցի աւերակ:
Զի քեզ անուն կոչեցին կա՛մք իմ, և երկիրն քոմ
շինութիւն բնակութեան. զի հաճեցի Տէր ընդ քեզ,
և երկիրն քո խոնքի՛ ի բնակութիւն: 5 Զոր օրի-
նակ բնակեցէ երիտասարդ ընդ կուսի՝ այնպէս
բնակեցեն որդիք քո ի քեզ: Եւ եղիցի զոր օրինակ
ուրախ լինի փեսայ առ հարսին, այնպէս ուրախ
լիցի Տէր ի քեզ: 6 Եւ ի վերայ պարսպաց քոց,
Երուսաղէմ՝ պահապանս կացուցից, զօրն ողջոյն և
զգիշերն ամենայն. որ մինչև ցայգ՝ մի՛ դարձրեցեն

փեսայի պէս՝ որ իրեն փառաւոր խոյր կը դնէ, ու
հարսի պէս՝ որ իր զարդարովը կը զարդարուի:
11 Հաւնդի ինչպէս որ երկիրը իր տունը կ'անցնէ,
ու պարտեզը իր մէջը ցանուածները կը բուսցնէ,
այնպէս ալ Տէր Երուսաղէմ քաղաքը առջեւ
արդարութիւն ու գովութիւն պիտի բուսցնէ:

Գ. ԿԲ

1 Սիովմի սիրոյն համար պիտի չլոնմ, ու Երուսա-
ղէմի սիրոյն համար պիտի չհաւնդարտիմ, մինչև որ
անոր արդարութիւնը՝ լոյսի պէս, և անոր փրկութիւ-
նը՝ բոցավառ ջահի պէս ճառագայթէ: 2 Ու ազգերը
քու արդարութիւնը՝ և քոյոր թագաւորները քու փառ-
քըդ պիտի տեսնեն, ու դուն նոր անունով պիտի կո-
չուիս, որն որ Տէրոջը քերանը պիտի անուանէ: 3 Եւ
Տէրոջը ձեռքին մէջ վայելչութեան պսակ. ու քու Աս-
տուծոյ ձեռքին մէջ արքայական թագ պիտի ըլլաս:
4 Դուն մէջըն ալ Թողուած պիտի չկոչուիս, ու քու
երկիրդ մէջըն ալ Աւերակ պիտի չըսուի. հապա
դուն՝ իմ հաւնածս, ու քու երկիրդ՝ Ամուսնացեալ պի-
տի ըսուի քանզի Տէրը քեզի պիտի հաւնի, ու քու
երկիրդ պիտի ամուսնանայ: 5 Վասն զի ինչպէս որ
երիտասարդ մը կոյսի մը հետ կ'ամուսնանայ, այն-
պէս ալ քու տղաքներդ քեզի հետ պիտի ամուսնա-
նան. և ինչպէս որ փեսան հարսին վրայ կ'ուրախա-
նայ, այնպէս ալ քու Աստուծոյ քու վրադ պիտի
ուրախանայ:

6 Հու պարսպներուդ վրայ ո՛վ Երուսաղէմ՝ պա-
հապաններ դրի. անոնք քոյոր օրը ու քոյոր գիշերը
բնաւ պիտի չլոնեն. դուք ո՛վ Տէրը յիշողներ՝ լուտ մի՛

- 7 լոնք. և մի՛ տայք հանգիստ մմա, միմչև հաստատեսցէ մա և միմչև
8 գովելի զԵրուսաղէմ ընդ երկիր արասցէ: Երդուա՛ Տէր յաջ ձեռն իւր
և ի բազուկ զօրութեան իւրոյ, եթէ ոչ տաց զցորեան քո կերակուր թըշ-
9 մամեաց քոց. և ոչ արբցեն որդիք օտարաց զգինի քո, յորում դուն
վաստակեցիր. այլ կերիցեն զմա հնձողք և փառաւոր արասցեն զՏէր,
10 և այգէկութիւն ի սրահս սրբութեանց իմոց արբցեն զայն:
- Անցէ՛ք, անցէ՛ք ընդ դրունս, ճանապարհ արարէք ժողովրդեան.
11 ուղի՛դ, ուղի՛դ արարէք զշաւիղս, ի բաց ընկեցէք անտի զքարինս, համ-
բարձէ՛ք մշան ժողովրդոց: Աւասիկ Տէր լսելի արար միմչև ի ծագս
12 երկրի. Ասացէ՛ք դստեր Սիովնի, ահաւասիկ Փրկիչ քո հասեալ գայ, ա-
ւադիկ վարձք իւր ընդ մմա, և հատուցումն գործոց առաջի իւր: Եւ ժո-
ղովուրդ սուրբ փրկեալք Տեսուն կոչեսցին մոքա. և դու խնդրեալ և ո՛չ
լքեալ կոչեսցիս քաղաք:

յիշել զՏէր. 7 Զի ո՛չ գոյ մման քեզ, եթէ ուղղեսցէ՛
և արասցէ զԵրուսաղէմ ի պարծանս ի վերայ երկրի:
8 Երդուա՛ Տէր ի փառս իւր՝ և ի զօրութիւն բազ-
կի իւրոյ, եթէ ո՛չ տաց զցորեան քո և զկերակուր ի
ձեռս թշմամեաց քոց: Եւ ո՛չ արբցեն որդիք օտա-
րաց զգինի քո, յորում դուն վաստակեցեր: 9 Այլ
որ ամփոփեցինն կերիցեն զմա՝ և օրհնեսցեն զՏէր.
և իր ժողովցիմն զմա, արբցեն ի սրահս սրբու-
թեանց իմոց: 10 Երթայք մտէ՛ք ընդ դրունս իմ, կազ-
մեցէ՛ք զճանապարհս՝ հորդեցէ՛ք զշաւիղս: Գործե-
ցէ՛ք ճանապարհ ժողովրդեան իմոյ, և զքարինս ի
ճանապարհէ անտի ի բա՛ց ընկեցէք. առէք մշա՛ն
ի հեթանոսս: 11 Զի ա՛ւասիկ Տէր լսելի՛ արար միմչև
ի ծագս երկրի: Ասացէ՛ք դստեր Սիովնի, ահաւասիկ
Փրկիչ քո հասեալ գայ՝ և ունի զվարձս իւր ընդ
իւր. և գործք իւր առաջի երեսաց իւրոց: 12 Եւ կո-
չեսցէ զմա ժողովուրդ սուրբ՝ փրկեալ ի Տեսուն.
և դու կոչեսցիս խնդրեալ քաղաք և ո՛չ լքեալ:

կեմաք, 7 Ու անոր հանգստութիւն մի՛ տաք, միմչև
որ անիկայ հաստատէ, ու միմչև որ երկրի վրայ
Երուսաղէմը գովելի ընէ: 8 Տէրը իր աջ ձեռքին
վրայ ու իր զօրաւոր բազուկին վրայ այսպէս եր-
դում ըրաւ: Թէ քու ցորենդ մէյմըն ալ քու թշմամի-
նիրուդ կերակուր պիտի չտամ. և օտարաց որդիքը
պիտի չխմեն քու գինիդ, որուն համար դուն աշխա-
տեցար. 9 Հապա զանիկայ հնձողները պիտի ու-
տեն, ու Տէրոջը փառք պիտի տան. և զանիկայ քա-
ղղանիք՝ իմ սուրբ սրահներուս մէջը պիտի խմեն:

10 Անցէ՛ք, անցէ՛ք դռներէն. ժողովուրդին ճամ-
բա՛յ պատրաստեցէք, շիտկեցէ՛ք, շիտկեցէ՛ք շաւիղ-
ները. քարերը անկէ ժողվեցէ՛ք: Ժողովուրդներուն
դրօշակ վերցուցէ՛ք: 11 Ահա՛ Տէրը միմչև երկրիս
ծայրը լսել տուաւ. Սիօնի աղջկանը ըսէ՛ք. ահա՛
քու Փրկիչդ կու գայ. ահա՛ անոր վարձքը իր հետն
է, ու գործոց հատուցումը իր առջնն է: 12 Եւ ա-
նոնք Սուրբ ժողովուրդ՝ Տէրոջը փրկածները պիտի
ըսուին. ու դուն՝ Փնտռուած ու Զթողուած քաղաք
պիտի կոչուիս:





ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ «ԴԱՎԻԹ-ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղուկաս կաթողիկոսի մահվանից հետո (1799 թ. դեկտեմբերի 27) իր թեկնածուն առաջարկելով, ցարական Ռուսաստանը առաջին անգամ հետաքրքրություն ցուցաբերեց Էջմիածնի կաթողիկոսական ընտրությանն նկատմամբ¹: Այդ պահից էլ սկիզբ է առնում, պատմագրության մեջ հայտնի, «Դավիթ-Դանիելյան» վեճը:

Ղուկաս Կարնեցու մահվանից հետո առաջացած աթոռակալական վեճը առաջինը չէր հայոց եկեղեցական պատմության մեջ, և առաջին անգամ չէր, որ Էջմիածնում երկու անհատներ կամ հոսանքներ հակադրվում էին իրար²: Սակայն այն տարբերվում էր նախորդ նմանօրինակ վեճերից իր դրդապատճառներով:

Ղուկաս Կարնեցին, իր նախորդի՝ Սիմեոն Երևանցու նման, Աթոռ քարձրանալով որդեգրեց չսփյալոր քաղաքականություն: Նա ազատագրական ձգտումների նկատմամբ զգուշավոր վերաբերմունք ուներ: Թեև

Կարնեցին նույնպես ձգտում էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու օտար լծից, սակայն միևնույն ժամանակ ծանր հետևանքներից զերծ մնալու համար, աշխատում էր չքացահայտել իր ձգտումները իրանական տիրապետող շրջանների մոտ³:

Այդ իսկ պատճառով նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ Էջմիածնի միաբանները, հաշվի առնելով Ղուկաս Կարնեցու վարած քաղաքականությունը, և դեպքերի հետագա աննպաստ զարգացումից խուսափելու համար, Հովսեփ Արղությանի անունը չմտցրին թեկնածուների ցանկի մեջ, այլ կանգ առան Կ. Պոլսի պատրիարք Դանիելի վրա⁴:

Դա քացատրվում է նրանով, որ Հովսեփ Արղությանը, լինելով Ռուսաստանի հայության առաջնորդը, ընդունվում էր որպես ռուսական պետության պաշտոնյա: Նա տարիներ շարունակ ռուսական պաշտոնական

³ Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780—1800), Երևան, 1958 թ., էջ 108:

⁴ Արրահամ Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, Բ մաս, Նոր Նախիջևան, 1909 թ., էջ 141:

¹ Александр Аникий, История Армянской церкви до XIX века, Кппппнев, 1900, стр. 306.

² Լևո, Երկերի ժող. 4-րդ հատ., Երևան, 1984, էջ 118:

շրջաններում և,ր ապրել և ուսաց գործերի հետ շատ անգամ պատերազմի էր գնացել օսմանցիների և պարսիկների դեմ, ուստի և նրա ներկայությունը էջմիածնում, այն էլ որպես կաթողիկոս, անհամոզորժելի կլիներ թե Թուրքիայի և թե Իրանի համար:

Այդ հանգամանքը չէր մտահոգում Հովսեփ արքեպիսկոպոսին: Նա մեծ եռանդով գործի է անցնում և դիմելով իր քարեկամներին, կարողանում է ձեռք բերել ուսաց կայսեր հրովարտակը և սուլթանական բերաթը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս դառնալու համար: Նա մեծ հանդիսավորությամբ ճանապարհ է ընկնում դեպի Թիֆլիս, որտեղ նրան Մայր Աթոռ ուղեկցելու համար էջմիածնից դիմավորելու էին եկել չորս եպիսկոպոսներ: 1801 թ. փետրվարի 11-ին Արղությանն արդեն Թիֆլիսում էր:

Սակայն դեպքերն այլ ընթացք ունեցան: Հովսեփ Արղությանը մարտի 9-ին Թիֆլիսում մահացավ:

Արղությանը մահվանից առաջ չհասցրեց որևէ կտակ կազմել, սակայն էջմիածնից ժամանած նվիրակ Սիմեոն եպիսկոպոսին հասցրեց հայտնել, որ «իմ կայից դաթարովն Գրիգոր Վարդապետն գիտակ է, ի նմանէ տեղեկացեք»⁵:

Հովսեփի անձնվեր հետևորդներից էր Գրիգոր Աղքիրմանցի վարդապետը՝ նրա աշակերտն ու հավատարիմ անձը:

Սիմեոն եպիսկոպոսը, որը եղել է Հովսեփ կաթողիկոսի խոստովանահայրը, մի գրությամբ տեղեկացնում է, որ կաթողիկոսը կտակել է ինչ-որ մի արկղ հանձնել եղբոր որդուն՝ իշխան Սուլտեմին, «իսկ յայլ ամենայն կային իմ սուրբ Աթոռոյն...»⁶: Հովսեփ Արղությանը կտակել է նաև իր մարմինը թաղել Սիմեոն կաթողիկոսի մոտ՝ էջմիածնում⁷: Սակայն կաթողիկոսական գահը կրտակելու մասին ոչինչ չի ասել:

Հակառակ վերոհիշյալ փաստերին, Աղքիրմանցին Թիֆլիսում լուրեր է տարածում, թե իբր Հովսեփ Արղությանը կաթողիկոսական գահը կտակել է կամ Դավիթ Էմեգեթցի արքեպիսկոպոսին, կամ էլ Կ. Պոլսի նորընտիր պատրիարք Հովհաննեսին⁸:

Թիֆլիսի ուսական գործերի հրամանատար զեներալ-մայոր Լազարևը և լիազոր միևիստր Կովոլենսկին Հովսեփ Արղությանին դիմավորելու եկած նվիրակներին թույլ

չտվեցին սնմիջապես վերադառնալ էջմիածնին: Դա անհրաժեշտ էր այն քանի համար, որպեսզի էջմիածնում չտեղեկանան դեպքերի մասին և ինքնագլուխ ընտրություն չկատարեն:

Հակառակ դավիթականների սպասումների, նվիրակների մամակը ավելի շուտ է հասնում էջմիածին, քան Գրիգոր վարդապետի գրությունը Հովսեփի «կտակի» վերաբերյալ:

Կրկին ընտրություն է կատարվում և հաստատվում Դանիելի թեկնածությունը, 60 օրվա ընթացքում էջմիածին գալու պայմանով⁹:

Դրությունը փոխվում է սյն ժամանակ, երբ Դավիթն ստանում է Գրիգոր Աղքիրմանցու գրությունը, որը գալիս էր համոզելու, թե հզոր աշակիցներ կան իր թեկնածությունը հաջողացնելու համար¹⁰:

Դավիթի կողմնակիցները շտապում են հայտնել Երևանի սարդարին, որ Ներսես վարդապետ Աշտարակեցին ուսական կառավարության գործիք է և խոստացել է Ռուսաստանի կառավարող շրջաններին, Դանիելի կաթողիկոս դառնալուց հետո դյուրացնել նրանց մուտքը Երևան¹¹:

Ընտրության պահին Դանիելը գտնվում էր Եվդոկիայում (Թոքաթ) և տեղեկություն չունեցավ այդ խառը իրավիճակից, ուստի Ներսես վարդապետ Աշտարակեցին Դանիելին իր ընտրության մասին տեղյակ պահելու և էջմիածին ուղեկցելու համար մի պահ անգամ չհապաղեց, և մեծ շուքով ճանապարհ ընկավ դեպի Եվդոկիա:

Եվդոկիայից էջմիածին հասնելու համար շքախումբը պետք է անցներ Էրզրումով, ուստի Գրիգոր Աղքիրմանցին Դավիթ արքայազնի անունից մի գրություն է ուղարկում Էրզրումի վսպի Բաթթալ Հուսեյն փաշային, խնդրելով ձեռքակալել Դանիելին: Նպատակն այն էր, որ Դանիելը սահմանված ժամկետում չկարողանա հասնել էջմիածին:

Սակայն Դանիել արքեպիսկոպոսը, տեղեկանալով այդ խարդավանքի մասին, որոշում է շրջանցել Էրզրումը և էջմիածին հասնելու համար ընտրում է ավելի հեռավոր, սակայն անվտանգ ճանապարհ¹²:

Բաթթալ փաշային հղած մամակի վերաբերյալ Գրիգոր Աղքիրմանցին տեղեկացնում է Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոսին, նշելով, որ իր վաղեմի

⁵ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ հատոր, Գ գիրք, Պկրուք. 1960, էջ 3278:

⁶ Դիան հայոց պատմության, գիրք Ե, էջ 96:

⁷ Մատնադարան, կթղկ. դիվան, թղթ. 10, վավ. 72:

⁸ Ազգապատում, նշված աշխ., էջ 3280:

⁹ Ազգապատում, նշված աշխ., էջ 3282:

¹⁰ Լեո, նշված աշխ., էջ 122:

¹¹ Ազգապատում, նշված աշխ., էջ 3283:

¹² Դիան հայոց պատմության, գիրք Ե, էջ 104:

բարեկամ Բաթթալ Հուսեյն փաշային խրճորել է ձերբակալել Դանիելին¹³։ «Դիվան հայոց պատմության» մեջ կարդում ենք, որ Գրիգոր վարդապետը «Լազրովի ձեռամբն Բաթթալ փաշային մարդ է հղյալ զի ըմբռնեցեղ զԴանիել»¹⁴։

Թիֆլիսից Դավիթ քահանա Տեր-Օհանյանը հայտնում է Դավիթ արքեպիսկոպոսին, որ Դավիթ արքայորդին նամակ է ցրել Կարան Բաթթալ փաշային¹⁵։

Եվ իրոք, այդ գրությունն ուղարկել է Դավիթ արքայազնը, որի մասին է վկայում ոչ միայն Տեր-Օհանյանը, այլ նաև հենց նամակի կնիքն ու ստորագրությունը¹⁶։

Ըստ Դիան հայոց պատմության, նամակատարն այն ժամանակ է հասնում Էրզրում, երբ Բաթթալ Հուսեյն փաշան արդեն մահացած է լինում¹⁷։

Բաթթալ Հուսեյն փաշային գրված նամակում խոսքով կերպով շարադրված է վերը նշված դեպքերի նկարագրությունը։ Նամակից տեղեկանում ենք այն խառնաշփոթ իրավիճակի մասին, որը տիրում է Հովսեփ Արղության մահվանից հետո։ Վավերագիրը տեղեկություն է հաղորդում Հովսեփ Արղության մահվան և Գրիգոր վարդապետի կողմից միտումնավոր կերպով հորինված կտակի մասին, ըստ որի կաթողիկոսական գահը պետք է հանձնվեր կամ Դավթին, կամ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոսին, իսկ Ռուսաստանի հայոց առաջնորդության իրավունքը՝ Գրիգոր Աղքիրմանցուն։

Նամակը գրված է թուրքերեն, պարսկական շեքասթե գրելաձևով, որը քիչ է հանդիպում թուրքերեն վավերագրերում։

Վավերագիրը անթվակիր է, սակայն բովանդակությունը հուշում է, որ այն պետք է գրված լինի 1801 թ. ապրիլի սկզբին։ Նամակի վրա կա հայերեն համառոտ մակագրություն բովանդակության մասին։

Այս բովանդակալից և փաստական տրվյալներով հարուստ նամակը, ինչպես նաև նմանօրինակ պարսկերեն և թուրքերեն փաստաթղթերը, որոնց այլ աղբյուրների հետ զուգահեռ ուսումնասիրությունը մեծ չափով կարող է նպաստել պատմական այս

կարևոր ժամանակաշրջանի առավել քաղաքականի նետազոտմանը, մեծ մասամբ դուրս են մնացել պատմաբանների տեսադաշտից։

Փորձելով վերծանել նամակը, ստորև հետազոտողների ուշադրությանն ենք ներկայացնում նրա թարգմանությունը։

Մեծապատիվ, հարգարժան, փառապանծ և կատարելության աստիճանը հասած պարոն։

Հարգանքի տուրք մատուցելով և ամենայն բարիք մաղթելով, նշում եմ, որ ինչպես լրսել և տեղեկացել եք, մեծաշուք Հովսեփ Կաթողիկոսը երկու բարձր տերությունների ցանկությանը և մեծափառ հրամանի համաձայն արժանանալով Էջմիածնի վանքի կաթողիկոսության պատվին, նշանակվել է որպես ամենայն հայոց հայրապետ։

Վսեմափայլ կաթողիկոսը այստեղ գալով, ճակատագրի քերմամբ ինձօրյա անկողնային հիվանդությունից հետո տասներորդ օրը կատարյալ գիտակցությամբ կտակ թողնելով, լքելով անցողիկ կյանքը, շտապեց գնալ հանդերձյալ աշխարհ։ Հովսեփ Կաթողիկոսը հարգարժան Գրիգոր վարդապետին փոխանորդ դարձնելով նշանակեց Ռուսաստանի հայության առաջնորդ, իսկ Էջմիածնի վանքի կաթողիկոսությունը կտակեց հանձնել կամ Դավիթ արքեպիսկոպոսին, որն անցյալ տարի հանգուցյալ կաթողիկոսի համար հաստատման հրովարտակ էր ստացել, կամ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոսին։

Դավիթ արքեպիսկոպոսի Էջմիածնում գտնվելու առիթով նրա կաթողիկոսության հարցը բազմիցս քննարկվել է։ Այս միջոցիմ Էջմիածնից մի քանի հոգևորականներ մեզ մոտ են ուղարկել երկու վանականի, որոնք համառոտ են Դանիել արքեպիսկոպոսի Թոքաթից վերադառնալը և կաթողիկոս օծվելն են պահանջում։

Ձերդ վսեմափայլությունը լսել և տեղյակ է, որ վերոհիշյալ արքեպիսկոպոսը երկու տիեզերահոչակ թագավորների կողմից մերժված և աքսորված է եղել։ Չնայած դրան, հանգուցյալ կաթողիկոսը այստեղ գալով՝ մի գրությամբ Դանիել արքեպիսկոպոսին նշանակել է Թոքաթի հայոց առաջնորդ, որպեսզի մինչև իր կյանքի վերջը այնտեղ մնա։

Քանի որ երկու տիեզերահոչակ թագավորների կողմից վտարված և աքսորված անձին կաթողիկոս նշանակելը հակասում է երկու բարձրաշուք տերությունների կամքին, ուստի հանգուցյալ կաթողիկոսի կտակն ի կատար ածելու նպատակով այսու դիմելով

¹³ Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 11, վավ. 42 (հմմտ. Դիան հայոց պատմության, գիրք Ե, էջ 94)։

¹⁴ Դիան հայոց պատմության, գիրք Ե, էջ 104։

¹⁵ Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 11, վավ. 45։

¹⁶ Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 11, վավ. 51։

¹⁷ Դիան հայոց պատմության, գիրք Ե, էջ 104։

մեծապատիվ, հարգարժան և իմաստալիտ Բաթթալ Հուսեյն փաշային, աղերսագին խնդրում եմ մամակս ստանալուց անմիջապես հետո գրություններս գրաքերիս հետ ուղարկեք բարձրաստիճան փաշայի մոտ, և երբ Դանիել արքեպիսկոպոսը կգա Էրզրում, նրան ձերբակալեք և բանտարկեք: Եվ մինչև մեծափառ արքայից և բարձրաստիճան վեզիրից պատասխան տունալը թույլ չտաք, որ նա որևէ տեղ գնա: Խնդրում եմ այս հարցում Ձեր օգնությունն ու աջակցու-

թյունը չզլանալ: Վերոհիշյալ Դանիել արքեպիսկոպոսի գալը համարելով երկու մեծ տերությունների կամքին հակառակ, ձեռնամուխ եղա այս բարեկամական մամակի շարադրմանը: Աստծով Աղալո բեկի ժամանումով մեր գրությունների հավաստիությունը կհաստատվի: Մշտապես մաղթում եմք Ձեզ երջանկություն և առողջություն:

Վրաց թագաժառանգ՝ ԴԱՎԻԹ ԽԱՆ





Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՆԾԱՆԸ ԵՂԻՇԵԻ ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

Միջնադարի հասարակական մտքի դրսևորումներից է խորհրդանշանը կամ, ավելի ստույգ, խորհրդարանական մեկնությունը: Նրա ուսումնասիրությունն այսօր հնարավորություն է տալիս վեր հանելու միջնադարյան խորհրդանշանի աստվածաբանության և գեղագիտության մի շարք առանձնահատկությունները:

Մասնավորաբար առատ նյութ են պարունակում մեկնաբանական և ճառագրական երկերը, որոնք լայնորեն կենցաղավարել են ողջ միջնադարում: Նյութի պարզաբանման տեսակետից խիստ շահեկան են Ե դարի մատենագիր Եղիշեի մեկնաբանական և ճառագրական երկերը¹, որոնցում դրսևորվում է հեղինակի հակումը դե-

պի նորալատոնյան իմաստասիրությունը²: Վերջինս, ինչպես հայտնի է, աչքի է ընկնում այլաբանական քաղմաշերտ մտակառուցումներով: Եղիշեի այդ երկերը ուշագրավ են նախ խորհրդանշանին տրված որակումներով: Վերջիններիս քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու խորհրդանշանի վաղմիջնադարյան ընկալման մի խիստ կարևոր առանձնահատկությունը: «Յերեսումն Տեառն առ Տիրերեայ ծովուն» ճառում կարդում ենք. «Առ ձկունսն աղբալէս է. նախ զմեծամեծսն որսացաւ, զի խորհուրդ էր և ոչ ճշմարտութիւն (այս և հետագա ընդգծումները մերն են—Հ. Ք.), այլ առ ընտրութիւն առաքելոցն ոչ աղբալէս. նախ զմանունս և ապա՝ զմեծամեծսն» (336)³: Նույն ճառի մեկ այլ հատվածում

¹ Եղիշեի երկերի և նրանց մասին ուսումնասիրությունների՝ Հ. Ս. Անադյանի կազմած մատենագիտությունը տե՛ս «Եղիշեի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», աշխատությամբ Երվ. Տեր-Միգայան, Երևան, 1957, էջ 204—218: Երկերի պատմաբանասիրական, աղբյուրագիտական, փիլիսոփայական, գրականագիտական, ընկերաբանական, եկեղեցաբանական և երաժշտագեղագիտական քննությունը տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» աշխատությունը, Երևան, 1945 (ամսիպ): Ս. Ս. Արեւատյան, *Формирование философской науки в древней Армении (V—VI вв.)*, Е., 1973, с. 112—131: В. С. Нерсисян, *Литературные и эстетические взгляды армянских авторов Vв.—«Русская и армянская средневековые литературы» (Сборник статей)*, Л., 1982, с. 21—22:

B. L. Zekiyan, *Elise as Witness of the Ecclesiology of the Early Armenian Church.— „East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period“*, Washington, D. C., 1982, p. 187—197 (non vidt): Գ. Տ. Խորոպյան, Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Երևան, 1978, էջ 188—207: Հ. Քյոսեյան, Եղիշեի երաժշտության մասին, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» 1988, № 1, էջ 51—57:

² Այս մասին տե՛ս Ս. Արեւատյան, *Աշխ.*, 120—181:

³ Փակագծերում քերված այս հետագա էջահամարները հետևյալ սկզբնաղբյուրներին են. «Արքայ Ռոմն մերոյ Եղիշեի վարդապետի մատենագրությունը», Վենետիկ, 1859, «Մեկնութիւն Արարածոց», Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1287:

դարձյալ կարդում ենք. «Թեպետ ասացի փոքր ի շատե տարացոյց ճշմարիտ, որ ունի գնմանութիւն, այլ ոչ եթէ գէտութիւն...» (338): Մեկ այլ՝ «ՅԱլլակերպութիւն Քրիստոսի» ճառում գրված է. «Որպէս և ինքն՝ Աստուածութիւնն բազում մասամբ երևեցաւ մարգարէիցն, և մի ոք ի նոցանէ զԱստուած ոչ կարաց տեսանել՝ այլ՝ նմանութեամբքն, որով տեսին՝ բաւական համարեցան...» (227): «Քանզի նմանութիւն ասաց Տէրն մեր, — կարդում ենք մեկ այլ տեղ, — ոչ գորպիսութիւնն նմանութեան, որ ոչ բերէր զիսկութիւն ճշմարտութեան» (282): Եղիշէի այս դատողություններին համաբնութեան է Ը դարի մատենագիր Հովհան Օձնեցու հետևյալ մտքերը. «Զի անդ՝ խորհուրդ գուշակման և աստ՝ յայտնութիւն ճշմարտութեան», «Իսկ եթէ այն նմանութիւնք և օրինակք էին ճշմարտութեան, իսկ ա՛յ՝ նոյն ինքն ճշմարտութիւն և ոչ օրինակ...»: Այս նույն միտքն է շեշտվում Վարդան Արևելցու (ԺԳ դ.) Դանիելի մեկնության մեջ ևս. «Պատկերի նմանեցուցանէ զփառս թագաւորաց երկրի, զի պատկեր է և ոչ ճշմարտութիւն...»: Վկայաբաղված հատվածներում իրար հակադրվում են «խորհուրդն» ու «ճշմարտութիւնը», «նմանութիւնն» ու «էութիւնը», «Աստուածութիւնն» ու «նմանութիւնը»: Հակադրության մեջ համաբնութեան մի կողմից «ճշմարտութիւնն» ու «էութիւնը», մյուս կողմից «խորհուրդն» ու «նմանութիւնը»: Ինչպէս տեսնում ենք, Եղիշէն (և ոչ միայն նա) խստորեն սահմանազատում է այս երկու կարգի իրողությունները: Դատելով հակադրման բնույթից՝ առաջին գույգը երկրորդի համար՝ արտաքին, իսկ երկրորդը առաջինի համար՝ ներքին կարգի իրողություն է: «Ծշմարտության» և «խորհրդի» գատորոշումն ու տարբերակումը հատակվում է Եղիշէի «ՅԱլլակերպութիւն Քրիստոսի» ճառի հետևյալ հատվածի օգնությամբ. «... երկրապիշք միայն էին և անհաւատ լսելիք, զիմանալի յայտնութիւնն ոչ կարէին տեսանել և նոքա ի լերին անդ մարմնաւոր ինչ յայտնութիւն ոչ տեսին, այլ երկնաւոր զօրութիւն իմանալով զայն, որոյ ի յայտնութիւնն նա միայն գիտէ և ում կա-

մի ինքն յայտնէ ըստ մասանց և մտացն միայն ծոց բաւէ ժողովելով, այլ ոչ բանի պատմել և սփռել ի լսելիս ուրուք, զի որ բանի գծագրի ընդ մարմնաձևութեամբ անկանի երևումն նորա...» (231—232): Քաղվածքի միտքը ճշտորոշում ու դարձնում է առավել ամբողջական Օձնեցու վերոհիշյալ «յայտնութիւն ճշմարտութեան» արտահայտությունը: Ուրեմն Աստվածության հայտնությունը իր դրսևորումներով բազմակերպ է, սակայն Նրա գերբնական (տրանսցենդենտալ) ինքնությունն՝ անհայտ: Աստվածության հայտնության ամեն մի բառային նկարագրություն Նրան զետեղում է նյութական, եռաչափ տարածքի մեջ, մինչդեռ Աստծո «երկնաւոր փառքն յայսմանէ վերագոյն են և՛ ի մարդկանէ, և՛ ի հրեշտակաց» (232): Սա նշանակում է, որ հայտնության (այստեղ՝ Պայծառակերպման) պատկերագրումը ոչ թէ «ճշմարտության» համարժեքն է, այլ՝ Աստվածության պայմանական կամ խորհրդանշային դրսևորումը: «Ծշմարտութիւն»-ը, ի տարբերություն «խորհրդի», հայտնութեանական իրողության (Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն). Յովհ. ԺԴ Թ) աստվածաբանական հաստատագրումն և որակումն է: Վերջիններիս («ճշմարտութիւն», «խորհուրդ») հաճախադեպ օգտագործումը ցույց է տալիս, որ դրանք միջնադարում ունեցել են հոգևոր եզրի նշանակություն:

Այսպիսով, «խորհուրդը» և «նմանութիւն»-ը (խորհրդանշանը) «ճշմարտության», «էության» ոչ նույնական դրսևորումն է: Այսինքն՝ երբ «ճշմարտութիւն»-ը կամ «էութիւն»-ը դրսևորվում է, այն դառնում է «խորհուրդ» կամ «նմանութիւն», որ կրելով իր նախօրինակի դրոշմը, բնույթով, սակայն, տարբերվում է նրանից: Խորհրդը-

⁷ Ի դեպ, ինչպես Գրիգոր Աստվածաբանը (В. В. Бычков, Византийская эстетика. Теоретические проблемы, М., 1977, с. 95) այնպես էլ Եղիշէն («Ծալլակերպան ոչ այլ ինչ է իմանալ, այլ աստուածակերպ...» 227—228) գտնում են, որ Պայծառակերպության պահին դրսևորվում է Աստվածության տեսանելի կերպերից մեկը:

⁸ Խորհրդանշանի բնույթի մասին հանգամանալից տես՝ А. Ф. Лосев, Очерки античного символизма и мифологии, т. I, М., 1930: Նույնի՝ Проблема символа и реалистическое искусство, М., 1976: С. С. Аверинцев, Символ, БСЭ, т. 23, М., 1976, с. 385—386. Նույնի՝ Поэтика ранневизантийской литературы, М., 1978, с. 109—149: П. Флоренский, Иконогос, «Богословские труды», сб. 9, М., 1972; М. Иванов, К вопросу богословии символа, «Журн. Моск. Патр.», 1984, № 4: В. Бычков, Гзл. азлж., с. 108—143:

⁴ Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյն մարմնաւոր Բանին Քրիստոսի եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս», աշխատ. Կարապետ վարդապետ [Տէր-Մկրտչեան] Վաղարշապատ, 1898, էջ 19:

⁵ «Յովհաննու Իմաստասիրի Անձնեցոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1838, էջ 71:

⁶ Տե՛ս Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն երկուսամբ մարգարէից, Կ. Պոլիս, 1825, էջ 249:

դանշանի այսօրինակ ընկալումը խարըսխված էր Հայ Եկեղեցու որդեգրած ժխտողական (սպոֆատիկ) աստվածաբանության վրա, ըստ որի Աստված կամ Աստծո էությունը սկզբունքորեն անճանաչելի ու անմատչելի է, և մեր հետ հաղորդակցումն իրականացվում է աստվածային ճշմարտություններ արտացոլող խորհրդանշանների և խորհրդանշանների միջոցով: Ընդհանրական այս դրույթը հետագայում պետք է ընկներ խորհրդաբանական դատողությունների հիմքում:

Եղիշեի երկերում առկա թվերի, առարկաների, երևույթների խորհրդաբանական բացատրություններն իրենց տեսակի մեջ վաղագույններից են մեզանում: Անդրադարձնալով դրանցից մի քանիսին՝ խոսքը տալով մախ թվերի խորհրդաբանությանը:

Ըստ այդմանությանների, թիվը ընկած է «համաշխարհային ներդաշնակության ե հավերժական շրջապտույտի հիմքում, մախմատությունն ու ազատ գիտության առարկան է, այլն՝ իրերի էությունը», «Աստված անճանաչելի թիվ է»: Պյութագորասի այս միտքը «լուծության խոստում տված պյութագորականների» առաջնորդում էր դեպի թվերը, որպեսզի դրանցով կարողանային «հաղորդել անբարբառելի կերպարները»⁹: Թիվը խորհրդական բացատրիկ կարևորություն է ստանում Պլատոնի իմաստասիրության մեջ: Համաձայն վերջինիս, «թվերը նշաններ են», որոնք ստորին առարկաները հաղորդակցում են գերագույն էությանը: Լիներությունն իր գոյաբանական հիմքը ձեռք է բերում թվաչին անվանումով, «որ թույլ է տալիս Պլատոնին իր թվերը օժտել արարչական կարողունակությամբ: Թիվը տիեզերքի գոյաբանական սնուցիչը և կարգավորիչն է: Ըստ փիլիսոփայի, Աստված (Դեմիուրգ) աշխարհը կարգավորում է «կերպարների և թվերի օգնությամբ»¹⁰: Անտիկ այս տեսությունների վրա էր հենվում միջնադարյան թվաբանությունը, որն իր բնույթով խորհրդանշական էր:

Բայց այդ խորհրդանշաններն, ինչպես նկատում է Ա. Գուրևիչը, մախ էապես աստվածաբանական են, «քանզի և ինքը՝ մախեմատիկան, երկար ժամանակ իրենից ներկայացնում էր «սրբազան թվաբանություն», որ ծառայում էր աստվածային ճշմարտությունների խորհրդաբանական մեկ-

նությանը: Հետևաբար թվաբանության լեզուն ինքնուրույն չէր. մա քրիստոնեական մշակույթի համընդհանուր լեզվի մի «բարբառն էր»: «Թիվը գեղագիտական մտքի էական տարրերից էր: Այն սրբազան խորհրդանշան էր ու Աստծո միտքը»¹¹: Հայ մատենագրության մեջ խորհրդաբանական ամենալայն մեկնությունների է ենթարկվել հատկապես յոթ թիվը՝ իր բազմաշերտ սլաբաբանությամբ¹²: Այս տեսակետից բացառություն չեն կազմում մախ Եղիշեի երկերը: «Յեսուայ և Դատաւորաց» մեկնության մեջ, խոսելով Սամսոնի յոթնագիսակի (մազերի յոթ մախ բաժանված լիներու) մախն, հեղինակը մախ այն մախնեցնում է արարչագործման պաակ հանդիսացող յոթերորդ օրվան. «Թիւ եօթնեկին... զի մի է զօրութիւնն աւտուածային գրոց. վեց ի նոցանէ զվեցօրեայ արարածքս նշանակէ, որ ի սկզբանէ, իսկ եօթներորդն՝ սուրբ, փափուկ նուիրեալ Աստուծոյ օր, որ և անաշխատելի զօրութեան հանգիստ անուանեցաւ» (190—191): Այս միտքն իր հետևյալ պարզաբանումն է գտնում հեղինակի Արարածոց մեկնության մեջ. «Ջապականացուն արար ի վեցն և զանապականն՝ սկսալ յեթն: Զիմանայի աշխարհն ոչ առնելով, այլ տեսանելով զարդարէ զնա: Որք անցանկալի է մա, զոր միշտ առնէ զնա Աստուած երսնելեացն բնակութիւն և հանգիստ, զի ի ժամանակի եղեալքն ժամանակաւ ապականին երկոքին: Իսկ իմանային՝ անժամանակ, տեսեալն յԱրարչէն՝ ընդ Աստուծոյ անժամանակ էին՝ մնայ յաիտեան: Յեթներորդումն դադարեցուցանէ ի գործոցն և այլ իմն սկսանի աւտուածազանազոյնս զնախախնամութիւն յայտնէ, որ յետ առնելոց էր, որպէս ամենայն արուեստաւոր յետ կազմելոյն խնամելոյ սկսանին» (20բ): Ստեղծված լիներով ժամանակի ընթացքում, նյութեղեն արարածները պատկանում են ժամանակին ու ժամանակավորին, և այդու՝ ապականացու են: Ի տարբերություն ապականության ենթակա արարչագործման վեց օրերի, յոթերորդը, լիներով Աստծո հանգստյան, բայց մախ՝ աննյութական աշխարհի ու ոգեղեն արարածների ստեղծման օրը, անապական և անժամանակ է, այսինքն՝ բացառապես իմանալի և աւտուածային: Յոթերորդ օրվա այս բացատրիկ նշանակալիությամբ է պայմանավորված յոթի թվային խորհրդի մեկնաբանումը: Այն

⁹ О. Н. Ульянова, Число в истории эстетического опыта, «Философские науки», 1986, № 5, с. 147.

¹⁰ Անդ. с. 148.

¹¹ Ст'я А. Я. Гуревич, Категории средневековой культуры, М., 1984, с. 27—28:

¹² Յոթ թվի բազմաթիվ մեկնություններ տե՛ս «Յայմատորք», Կ. Պոլիս, 1706, Լջ 412—413:

հավիտենական, վերերկրային արժեքների թվային նշանակն է, գերբնական իրականությունների թվային դրսևորումը:

Երկրորդ. Սամսոնի յոթնագիսակը, իր խորհրդական թվով, հայտանշումն է Ս. Հոգու յոթ հատկանիշների: Ակնարկելով Եսայի ԺԱ, 2-ը՝ Եղիշեն գրում է. «Այս շքնորհք եօթնեկին առ իրաքանչիւր անձին տեսանի և եթէ մի յայցսւնէ պակաս իցէ յումէքէ, խեղ ասեն նմա և ոչ ողջանդամ, ապա թէ եօթնեքեան կտրիցին, մեռեալ է և ոչ կենդանի» (191): Ուրիշ խոսքով. յոթնագիսակի յուրաքանչյուր ճյուղը Ս. Հոգու «եօթնարփի» շնորհների խորհրդանիշն է. իմաստություն, բանականություն, խորհուրդ (խորհրդագգածություն), հզորություն, գիտություն, բարեպաշտություն, աստվածավախություն¹¹: Քանի դեռ այս շնորհները առկա են, մարդը կատարյալ է, սակայն երբ սրանցից որևէ մեկը բացակայում է, նա դիտվում է իբրև պակասավոր, խեղված, իսկ երբ բացակայում են բոլորը, վրա է հասնում հոգևոր մահը: Սրանից զատ, հետևելով Իրենեոսին, Եղիշեն յոթներակը գուգադրում է երկնքի յոթ ոլորտների հետ¹²: Սամսոնի յոթնագիսակը նման է արարչական շաքաթին, որ ժամանակի նախասկիզբն է. «Խորհուրդ եօթնօրեայ կենցաղոյս, որով թուով ժամանակս սկսանի,—գրում է Եղիշեն,—և անդր ի նա դարձական յոգնապիսութեամբ բազմանայ, և ի նոյն թիւ եօթներեկին կատարի. ի միակէն սկսեալ և ի մասնականսն բազմացեալ և ի նոյն ատարտումն բոլորեալ, և, ըստ շնորհի արարչութեան, միմեամբք զօրացեալք» (194): Արարչական յոթներակը ժամանակի նախասկզբնական միավոր է, որի բազմապատկումից կազմվում է ժամանակի տևական հոլովությունը: Սակայն յոթը ոչ միայն ժամանակի, այլև արարչագործման խորհրդանշանն է: Յոթերորդ օրով է ավարտվում արարման գործընթացը: Արձագանքելով Փիլոն Եբրայեցու Արարածոց մեկնության «Քանզի եօթներորդ... զօրութեամբ և առաջին է, վասն զի աշխարհի լինելութիւն ըստ այնմ եղև, վասն լին յամենայնի գոլ յայն-

ժամ»¹³ բառերին՝ «Յերեւումն Տեառն աշակերտաց» ճառում Եղիշեն գրում է. «Վասն որոյ ի միում ատուրն եւեթ հանգիստ սուրբ, որ անուանեալն է շաքաթ, և թուականաւ եօթներեակ, և եօթն թիւդ քերէ զնմանութիւն անձնի և անձինն՝ զանեղի, և անեղն ունի զարարչական զօրութիւն» (324): Ուրեմն յոթը ոչ միայն արարչագործման, այլև՝ բուն արարման ավարտն է խորհրդանշում: Ինչո՞ւ. որովհետև յոթն իր բնույթով համեմատելի է միակին. անձին է, անեղ, այսինքն՝ աննյութական, ոգեղեն իրողություն, որն ըստինքյան օծոված է ներուժ արարչական ունակությամբ: Յոթի հիմկտակարանային արարչական այս կարողությունը լիսլվում է նրա նորկտակարանային առաքելությամբ: «Արդ, ի վեց ատուրս տեսանի հազար ամն, յորում ամենայն աշխարհս անկեալ էր ընդ ապականութեամբ, կարդում ենք նոյն ճառում, մինչև եկն եհաս թիւ եօթներեկին, զոր ի վեր անդր շաքաթ անուանեաց, և հանգիստ զնա համարեցաւ, այս է՝ զալուստ Տեառն, որ եմուտ դրօքն փակելովք և սըրքեաց և մաքրեաց զաղտ վեց ատուրց առաջնոց և անուամբ եօթներեկին, որ է կոյս և անձին ի մահկանացու գոյացութեանցս...» (324): Առապիսով, յոթը խորհրդաբանորեն երկփեղկվում է. իբրև հիմկտակարանային իրողություն այն ունի արարչագործող ունակություն, իսկ իբրև նորկտակարանային իրողություն, այն օծոված է փրկագործող կարողությամբ: Ուրիշ խոսքով, հիմկտակարանային արարչագործումն ու նորկտակարանային փրկագործումն իրականացվում են տիեզերական հալոսությունն իր մեջ կրող յոթի միջոցով:

Յոթը կամ յոթերորդը ոչ միայն ընդհանրական, այլ նաև անձնական փրկության

¹¹ Տե՛ս «Փիլոնի Եբրայեցու Մնացորդք ի հայս», Վենետիկ, 1828, էջ 111—112: «Եօթն ատուրց թիւ, դարձյալ կարդում ենք Փիլոնի Արարածոց մեկնության մեջ, յիշատակ է աշխարհիս լինելութեան, որոյ ծննդականն տօն արարեալ լինի եօթներեակն՝ յայտնապէս ցուցանելով զՀօրն, իբրու թէ՛ Ես եմ և աշխարհի արարիչ և գոչսն ածելով ի գոյանալ...: Եւ արդարև, զեօթն ատուրսն, զի ի միտ առցեն թերախաւատքն և անխաւատքն զաշխարհիս լինելութիւն...»: Անդ, էջ 94—95:

¹² Յոթի, իբրև միակի, արարչագործող կարողության մասին Փիլոնի և Եղիշենի դատողությունները հետևավոր արձագանքն են վաղ պոլոթագորդան այն տեսակետի, որի համաձայն տիեզերքը ծնվել է նախասկզբնական «Միավոր-Միակից» տե՛ս II. Д. Рожанский, Развитие естествознания в эпоху античности. Ранняя греческая наука «О природе», М., 1979, с. 283,

¹¹ R. W. Thomson, Number symbolism and Patristic exegesis in some Early Armenian writers «Հանդէս ամսօրնայ», 1978, էջ 127 հմմտ. «Անուանիայի հայոց վարդապետի Սակս բացահայտութեան թուրոց»—Աշ. Արարհամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 245:

¹² Ի տարբերություն այս երկուսի, Ափրահատը խոսում է բացառապես Ս. Հոգու յոթ գործողությունների մասին. Thomson, նշվ. աշխ., էջ 127:

խորհրդանիշ է: Երիքովի պարիսպների խորտակումը նմանեցնելով սեփական մեղքերից ձերբազատվելուն՝ հեղինակը գրում է. «Վեց օր մի մի նուագ հարկանիցեք և յաւորն եօթներորդին եօթն անգամ եկեւ շիք առաջին օրինակօքն և յեօթներորդ աւորն յեօթն նուագին ուժգնագոյն քան զայլ աւորցն հարկանիցիք զփողսն, և ի գոչին բարբառոյ զօրացոյ... պարիսպքն անկեալ կործանեցին...» (171): Յոթի փրկագործող գործության այսօրինակ ընկալումը նրա հիմնկտակարանային արդեն հայտնի խորհրդաբանությունը կամրջում է նորկտակարանային խորհրդաբանությանը՝ կանխանը շեղվով նրա նոր կոչումն ու նշանակությունը:

Ծնորհիվ իր աստվածային բնույթի, յոթը նաև գեղեցկության նշանակ է. «Թիւղ ձեր գեղեցիկ է, կարդում ենք «Յերեսումն Տեառն առ Տիբերեայ ծովուն» ճառում, ահաւաղիկ եօթն էք, ի ձեզ տեսանի աշխարհս, միանգամայն և՛ Տէր աշխարհիս» (329): Սա նշանակում է, որ յոթով պայմանավորված աշխարհի գեղեցկությունը արտացոլումն է բացարձակ գեղեցկության: Յոթը Աստվածության հատկություններից մեկի՝ գերբնական գեղեցկության թվային արտահայտությունն է:

Սակայն յոթը խորհրդանիշն է ոչ միայն դրականի, այլև՝ երբեմն բացասականի: Իբրև այդպիսին է այն մեկնաբանվում Երիքովի պարիսպների նկարագրության մեջ. «Տիպք օրինակի էր նա (Երիքովը—Հ. Ք.) բազմադիմի մեղսաց առաջին մարդկային բնութեան, գրում է Եղիշեն, Երիքով եօթնեկին պարսպօք ամրացեալ փակեալ կայր՝ ոչ յԱստուած ապաւինեալ, այլ յորմոցն լայնութիւնն և ի բարձրութիւնն: Եւ ի մարդոյս բնութիւնն եօթն մասամբք պարսպեալ էր զարտաքին և զներքին շինուածս նորա. երկու աչօք և երկու ականջօք և երկու ողնգացն առուօք, և թերան նորա եօթն մեծամոր խորհրդոց» (170): Երիքովի յոթ պարիսպները խորհրդանշում են մարդկային մարմնի յոթ անդամները և համապատասխանաբար յոթ մեղավոր խորհուրդները¹⁵:

Նվազ ուշագրավ չէ տասի խորհրդաբանությունը: «Ի չարչարանսն Քրիստոսի» ճառում, խոսելով հրեից առաջին՝ Արեգ

¹⁵ Այս մասին տե՛ս А. Гуревич, *Աշխ.*, с. 300—301:

¹⁶ Հստ Անանիա վարդապետի «Ժ-երորդ թիւդ է կատարումն թուոց միակաց և ծնունդ Ե-եկին»։ Անանիա Ծիրակացու մատենագրությունը, էջ 248 հմմտ: «Բանք ի խորհուրդ կատարման Ժ թուին, որ է պատճառ կատարեալ և բարձրագոյն աստուածութեանն», Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 714, թ. 68ա—70ա:

ամսի տասներորդ օրը գառան պատարագը արգելելու մասին՝ հեղինակը հետևյալ կերպ է բացատրում այդ. «Ահա խորհուրդ յայտնի, յոր եթէ կամեսցի ոք, ամենայն իրօք կարասցէ հայել: Զի տասնեակն ունի զկատարումն թուականին¹⁶, և թուականն՝ զհիթական գոյութիւն աշխարհիս: Զի հիթականան ամարմնականս ւոցէ ուսումն կատարեալ վարդապետութեան» (244): Այս տողերը, որ արձագանքն են Փիլոն Երրայեցու Արարածոց մեկնության «Եւ տասներեակն լաւագոյն է քան զհինգեակն, քանզի սա է ամենակատար, լիագոյն և վերագոյն թիւ, առանձինն իւր իսկ աստուածային խորհրդոց...: Վասն որոյ և տասնեակն սուրբ խոստովանէ Մովսէս՝ բնատրապէս զհինգերեակն լինելութեան թողեալ և զտասնեակն՝ Աստուծոյ բանին...»¹⁷ տողերի, ցույց են տալիս, որ յոթի նման տասը ևս օժտված է արարչական կարողությամբ: Կազմվելով միավորների հանրագումարից և ներկայացնելով կատարելություն, այն ոչ այլ ինչ է քան Աստծո միտքը, որ անգոյությունից գոյություն է կոչում առարկաները¹⁸:

Խորհրդաբանական ամենալայն մեկնության է ենթարկվել նաև տասներկուսը: Անդրադառնալով դրանցից մեկին: «Յեսուայ եւ Դատաւորաց» մեկնության մեջ կարդում ենք. «Երկոտասան վեմքն, որ ելին ի գետոյ անտի. նման էր թիւն երկոտասան առաքելոց, և երկոտասան քարինքն, որ ի շին անդրէն ի գետն՝ երկոտասան ազգատոհմացն, որ ոչ կարացին ելանել ի ծովէ մեղաց» (168): Ինչպէս տեսնում ենք, տասներկուսի խորհուրդն այստեղ երկատված է. մի դեպքում գետից դուրս եկած տասներկու վեմերը նմանեցվում են տասներկու առաքյալներին¹⁹, իսկ մյուս դեպքում ջրում ընկղմված տասներկու վեմերը՝ հրեից տասներկու ազգատոհմերին, որոնք չկարողացան դուրս գալ մեղքի ծովից²⁰:

¹⁷ «Փիլոնի Երրայեցոյ Մնացորդք ի հայս», էջ 330—331:

¹⁸ Հմմտ. Thomson, *Աշխ.*, էջ 127:

¹⁹ Եկեղեցու ճարտարապետության խորհրդական իմաստը մեկնաբանելիս Հովհան Օձնեցին նրա տասներկու հիմնավմուրը նմանեցնում է տասներկու առաքյալներին, որոնց վրա է հաստատված հոգևոր եկեղեցին. «Յովհաննու Իմաստասիրի Անճնեցոյ մատենագրութիւնք», էջ 188:

²⁰ Եղիշեի երկերում հանդիպող վերոհիշյալ թվերի, ինչպէս նաև՝ երեսունի, հարյուր հիսուներեքի, վեց հազարի խորհրդանշական իմաստի մանրամասն քննությունը տե՛ս Thomson, *Աշխ.*, էջ 118—133:

Նույնքան հետաքրքրական են առարկաների, երևույթների խորհրդարանական մեկնությունները: Ուշագրավ է «Գիր—անգիր» հակոտնյայի բացատրությունը: Պայծառակերպության վայրը՝ Թաքոր լեռը մմանցնելով երկնքի արքայությանը, հեղինակը գրում է, թե լեռան վրա գտնվող աշակերտներից Քրիստոս «ուսույց... զանգիր օրենս երկնից. քանզի և մեր տեղին առաջին անգիր էր: Գիր գմարմնականացն խօսի, անգրություն գանձարմին էություն ցուցանե: Գիր գմահն Մովսեսի պատմե, իսկ անգրություն՝ զայտնություն Տեառն առ աշակերտսն: Գիրն ինքն անցական է և զանցաւոր աշխարհս արկանէ ընդ պատմութեամբ, անգիրն յինքեան գրէ զանցաւորս, զի անանցս արասցէ: Գիրն զվերանայն Եղիայի միության պատուականօքս ասէ, անգրություն՝ զերևումն Տեառն և զեղիայեանց» (228): «Գիր» և «Անգիր» իրականությունների այսօրինակ հակադրումը ներկայացնում է այդ երկուսն իբրև հասկացության լեզու ունեցող, խորհրդական միավորներ: «Գիր»-ն իր նշանակությամբ ստորադասվում է «Անգիր»-ին: «Գիր»-ով արձանացված մովսիսական օրենքները գործադրելի են միայն մյուսականի, կենցաղային սահմաններում: Սակայն «Գիր»-ը պատկանում է ոչ միայն օրենքներին, այլև՝ սպարաշխարհային պատմությանը, որ առաջնորդվում է նույն այդ օրենքի տիրական թելադրանքով: Սա նշանակում է, որ «Գիր»-ը լինելով ապականացու և անցողիկ, եմթակա է մահվան: Տրամագծորեն տարբեր է «Անգիր»-ը: Այն իր մեջ ներառված չէ անցողիկն ու ժամանակավորը, ապականացուն և սահմանավորը, դրանք դարձնում է հավերժի և անսահմանի սեփականությունը: Եթե «Գիր»-ը պատմության ընթացքում Աստծո և մարդու պայմանական հարաբերությունը կանոնակարգող, ապա «Անգիր»-ը բոլոր պայմանականությունները ի չիք դարձնող աստվածային իսկության հայտնութեան կանոնակարգող խորհրդանիշ է: Մի խոսքով. եթե «Գիր»-ը մյուսական առարկաների պատկերման միջոց է, ապա «Անգիր»-ը՝ հայտնութեան փաստերի (այստեղ՝ Պայծառակերպության), որոնք եմթակա չեն ձևական տրամաբանության թելադրած բանային (=գրավոր) պատկերման: Այս է պատճառը, որ «Անգիր»-ը անդրանցական գոյավիճակի (այստեղ՝ Արքայության հայտնության՝ Պայծառակերպության) խորհրդանիշ է:

Ինչպես հայտնի է, «միջնադարյան խորհրդանշանը երբեք չի եղել բարոյապես չեզոք: Խորհրդանշանների նվիրապետու-

թյունը միաժամանակ արժեքների նվիրապետություն էր²¹»: Այս տեսակետից հատկանշական են Աջ և Ձախ կողմերի խորհրդարանական մեկնությունները: «Յերեւումն Տեառն առ Տիբերեայ ծովուն» ճառում, խոսելով առաքելական գործունեության կոչված ձկնորսների և Քրիստոսի հարաբերության մասին, Եղիշեն մասնավոր մի անդրադարձով կանգ է առնում Քրիստոսի ցուցումով նավի աջակողմյան հատվածից առատ որս դուրս բերելու մասին պատմող ավետարանական դրվագի վրա: «Արդ, եկայք, ասէ, զգործիսդ յաջակողմն նաւիդ արկէք, ասում է հեղինակը, զի որ առանց իմ արկէք, գիշեր էր և ձախակողմ, իսկ գոր ինեղ արկանէք, տիւ է և աջակողմ, և եթե աջակողմ է, անդ գտանէք, և, իբրև գտանէք, մի զլանայք զգործիս Հոգւոյն Սրբոյ գիտութեանն» (331): Նույն ճառի մեկ այլ հատվածում կարդում ենք. «Եւ մի ի ձախ կողմ արկանէք զգործիս ձեր. քանզի որ որդիքն ձախոյ են և ծնունդք են խաւարային իշխանութեան և որպէս չիք նոցա մասն և բաժին յաջակողման, նոյնպէս ձեր մի՛ եղիցի մասն և բաժին ձախակողմանն» (334): Աջ և Ձախ կողմերի այսօրինակ բացատրությունը համերաշխվում է «Յեսուայ և Դատաւորաց» մեկնության հետևյալ հատվածին. Հեսու Նավեն «զԳարիգին եկեղեցացոյց և զԳեբաղ սարկաւազանոց շինեաց, զոր և անէծես կարդաց ի Գեբաղ և զօրհնութիւնս՝ ի Գարիգին: Եւ զի՛նչ իցեն այս երկու լեռինքս հուպ յիրեարս և բաժանեալ ի միմեանց: Նմանութիւն երկդիմի բնութեանս մերում...: Եղիցի աջակողմն մեր Գարիգին և ձախակողմն մեր՝ Գեբաղ...» (175): Այս միտքը հետապնդվում է հեղինակի Արարածոց մեկնության մեջ նմանապես. «...Ձախակողման երեանն Կայենի հակառակ վարուք, որ ի հասանել թուոյն յերեւել, ճեղքեցան յԱդդայն և ի Սելլայն, ուր և կըրկին սպանութիւն եղև: Իսկ ի յաջակողմն, բարին յաղթող եղեալ՝ առաւելու ևս Յենովք զօրացեալ լինի հաճոյ Աստուծոյ» (38 ա): Աջի և Ձախի այս խորհրդաբանությունը, որ հայտնի էր նաև բյուզանդական մատենագրության մեջ²², հիմնված է ավետարանական այն խոստովի վրա, ըստ ո-

²¹ Տե՛ս А. Гуревич, *Сдл.* աշխ., с. 303:

²² Տե՛ս Византийские легенды, изд. подготовила С. В. Полякова, М., 1972, с. 63, 281, прим. 42: Աջի և Ձախի, իբրև առասպելարանական հակադրությունների, խորհրդանշական իմաստի մասին հանգամանալից տե՛ս Мифы народов мира, т. 2, М., 1982, с. 43—44:

րի արդարանքը պետք է գրադեցնեն Աստծո աջ կողմը, իսկ չարերը ձախ (Մատթ. ԻԾ 31—46): Ակնարկելով Ավետարանի այս հատվածը, Եղիշեն գրում է. «Եւ ընդ այսմ Լօրն ստուցից զձեզ եւ զամենայն ինչ յաջողեցից ձեզ. չիք ի ձեզ մասն խաւարի, և ոչ կողմ ձախոյ: Մի որսալք գիշերի, զի հեռի է յոյս ի մնանէ և բազումք գայթակղին մոլաւ...» (334): Ինչպես տեսնում ենք, Աջի եւ Ձախի հակադրումը իր բնույթով վախճանաբանական է: Ձախակողմը չարի, բացասականի, իսկ Աջը բարու, դրականի մարմնավորումն է: Կողմերի այսօրինակ ընկալումների աւելումը ըստ երևույթին մասն Փիլոն Երրայեցու Արարածոց մեկնության այն հատվածն է, որ «Ընդէր յԱդին յարեւս կոյս տնկել ապի գորախսոն» հարցին հետևյալ պատասխանն է տրվում. «Այն, որ յարեւսից կողմանէն աջ գոլ ապի աշխարհիս մասունք, իսկ որ յարեւսոս կոյս՝ ահեակ: ... Յործամ աւէ, զի թէ յաջ կողմն գնացեն՝ ի տիւ և յարեգակնո, իսկ եթէ յահեակ, յերեկս կոյս ի խրթին...»: Ուրեմն Աջ եւ Ձախ կողմերի Եղիշեի քննողականությունը պայմանավորված են Աջի, իբրև արեւելյան կողմի՝ դրախտի և ձախի, իբրև արեւմտյան կողմի՝ դժոխքի գետեղարանի փիլոնյան ընկալմամբ: Ինչպես Փիլոնի, այսպես էլ Եղիշեի մոտ աջակողմը լույսի, իսկ ձախակողմը խավարի խորհրդանիշ է: Այս է պատճառը, որ Աջ և Ձախ կողմերի՝ Ավետարանում տրված վախճանաբանական բնութագրումները, անցնելով փիլոնյան մեկնության քովով, Եղիշեի մոտ, «Քրիստոս-Լույս-Աջակողմ», «սատանա-խավար-ձախակողմ» զուգահեռով, ձեռք են բերում մասն բարոյագեղագիտական հնչեղություն, և սահմանակցում լույսի գեղագիտությանը: Նվազ հետաքրքիր չէ երկնքի և երկրի (աշխարհի), որպես Աստծո արարչագործության մասին պատմող Գրքի, մեկնաբանումը. «Եւ երկին և երկիր, որ իբրև զպնակիտս առաջի կայ և ընթեռնումք զայնուսիկ. երկինք պատմեն զփառս Աստուծոյ և զարարածս ձեռաց մորա պատմէ հաստատու-

թիւն երկրի» (21 p): «Աշխարհ-Գիրք» զուգահեռը համահունչ է վաղորդագրական գրականության մեջ առկա այլաբանական մոյնաբանությամբ պատկերին²⁴: Աշխարհը մեկնաբանվում է, որպես աստվածային հայտնությունն իր մեջ անթեղած Ս. Գրոց այլակեցություն, որպես Ս. Գրոց նյութական կրկնապատկերը կամ հայելացումը: Այստեղից հետևում է, որ հայտնության խորհրդանշան Ս. Գրքի²⁵ հայելացումը հանդիսացող նյութական աշխարհը Աստծո արարչագործ գործության հայտնությունն է²⁶:

Տեսական-գեղագիտական մտքի ուսումնասիրությունից զատ խորհրդաբանական մեկնությունների քննությունը նպատակ ունի վեր հանել մասն խորհրդանշանի գործնական-գեղագիտական բնույթը: Այս տեսակետից ևս Եղիշեի երկերը պարունակում են ոչ անկարևոր իրողություններ: Ուշագրավ է Սամսոնի և առյուծի զուգարման դրվագը, որ լուսաբանելի է խորհրդաբանական հետևյալ զուգահեռը. «հին առյուծ (սատանա) = Նոր Առյուծ՝ «կորին առիծու»²⁷, Սամսոն (Քրիստոս)»: Ներկայացնենք զուգահեռի առաջին երկու հակադիր քաղաքիչների՝ Եղիշեի մեկնաբանությունը. «Եւ անդ էր շմապէս մի յառիծուց, գոչեաց և յարձակեցաւ ի վերայ մորա: Առիծ առիծոյ պատահեցաւ մինն հինաւորց՝ լի չարութեամբ, և մինն այն, ինչ կորին առիծու մատաղ աւորց և լի երկնաւոր զօրութեամբն: Հին առիծն գոչէր մեծածայն՝ ահ արկանելով մատաղ կորեանն, իսկ մա զօրութեամբ մոնչէ՝ քամահրելով զանոշ բանս և փափուկ մարմնով հեղձուցանէր: ... հազում գունդք դիւացն ընդ մմա եկեալ յօգնականութիւն եկին մտին յառիծն զազանացեալ մոնչեաց ընդդէմ եօթնագիսակ մանկանն: Իսկ մա, իբրև զոխտաւոր քահանայ, զաջն ձեռն դնէր ի վերայ գլխոյն և զահեակն արկանէր զներքին կզական, ի գիրկս իւր առեալ, հեղձուցանէր զերևակի սրտմտութիւնն և թմրեցուցեալ զանմահ չարութիւնն ընդ մմին և զշունչ զազանին քաղեալ հանէր... ոչ քրաւ ջախջախեալ և սրով հատեալ զգեղեցիկ բնութիւն առիծոյն ոչ ապա-

²⁴ Տե՛ս «Փիլոնի Երրայեցոյ Մնացորդք ի հայս», էջ 5: Այս կապակցությամբ Գրիգոր Լուսավորչի վարդապետության մեջ կարդում ենք. «Իսկ աջ անկինն ցուցանէ զօրութիւնն աշոյ բազկի. աշովն զուրախութիւն արդարոցն զուարթութեան՝ պարզեացն զպատրաստելոց պսակացն զարթուն ցուցանէ: Իսկ ահեակ անկինն՝ զտանջանսն մշտնեցուցանէ զմեղաւորացն». տե՛ս «Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց», աշխատ. Գ. Տեր-Մկրտչյան, Ստ. Կամայանց, Տփղիս, 1909, էջ 242 հմմտ. Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 498:

²⁵ Հմմտ. С. Аверинцев, Поэтика..., с. 207:

²⁶ С. Аверинцев, Мзл. աշխ., с. 202:

²⁷ Այս կապակցությամբ հատկանշական է Դիոնիսիոս Արիսպագացու այն միտքը, թե «այս աշխարհը իմ կեցությունը ստանալով նշմուրիտ Գեղեցկությունից, իր քոլոր համահամությունների մեջ արտացոլում է հոգևոր Գեղեցկությունը»: В. Бёчков, Мзл. աշխ., с. 88:

²⁸ Հմմտ. Եմմը. ԽԹ 9:

կաներ, որ էր խորհուրդ բոլոր աշխարհիս» (187—188): Վկայաբերված հատվածով բացահայտվում է առաջին քաղաքիչի բազմաշերտ ալյաքանությունը. դիվաքնակ առյուծը ոչ միայն չարիքը («զերևակի սրտմտություն») մարմնավորող սատանան է, այլև «խորհուրդը» «բոլոր աշխարհիս»: Եթե հին առյուծն, իբրև բացասական ռսկիզբ, չարիքի²⁸, ապա երկատված, բայց բնությանը չաղարտված Առյուծը տակավին ամբողջովին չապականված աշխարհի խորհրդանշն է: Այսպիսով, հին առյուծը ներկայանում է որպես երկիմաստ խորհրդանշան: Երկրորդ զուգահեռի (Նոր Առյուծ=Սամսոն=Քրիստոս) քաղաքիչները, մեկնաբանական հայտնի գուգորդամբ, նույնանում են: Սակայն արժեքաբանական աղ նույնացումը, ինչպես նախորդ դեպքում, լիակատար չէ: Ալյաքանական գուգորդամբ պայմանավորված աղ ընդհանրությունը իր տեղը զիջում է գոյաբանական տարբերությանը. «Անգեմ Սամսոն յաղթեաց և սպան զառիծն զազան: Ջեն ի ջուրց զգեցա երկրորդ Ադամ (Քրիստոս—Հ.Բ.), կապեաց ընկեաց զազս մարդկան: Սամսոն զմահ առիծուն ոչ յայտնեաց ծնողաց իւրոց. Տեր մեր յայտ յանդիման քարոզեաց զբեկումն անմահ առիծուն²⁹ և մեզ տուա իշխանություն տկար մարմնով կոխել դաժանություն նորա» (188): «Հին-կտակարանային Առյուծ՝ Սամսոն-Նորկրտակարանային Առյուծ՝ Քրիստոս—առյուծ՝ սատանա» զուգահեռը դրսևորում է խորհրդանշանի իմաստային բազմաշերտությունը: Մի դեպքում Առյուծը անկատար (Սամսոն) ու կատարյալ (Քրիստոս) բարոյ, մյուս դեպքում չարի (սատանա—աշխարհ-աշխարհային) խորհրդանշն է: Ըստ երևույթին խորհրդարանական այս ընկալումն է ընկած ինչպես Խաչելության պատկերագրության մեջ հանդիպող խաչյալ Քրիստոսի ոտքերի տակ, այնպես էլ վաղ քրիստոնեական դամբանաքարերի վրա առյուծի պատկերման հիմքում: Այն նոր Առյուծի՝ Քրիստոսի հին առյուծի՝ սատանայի նկատմամբ տարած հաղթանակի, ինչպես նաև՝ Հարության խորհրդանշն է³⁰:

²⁸ Հմմտ. Ա. Պետ. Ե 8:

²⁹ Այս տողերը արձագանք-մեկնաբանումն են Քրիստոսի «Հաջակրկացրուք, զի ես յաղթեցի աշխարհի» (Յովհ. ԺԶ 33) խոսքի, ուր «Աշխարհ»-ը (այստեղ՝ աշխարհայինը) խորհրդաբանորեն նույնանում է «հին առյուծ-սատանա» զուգահեռին: Ինչպես Սամսոնը հաղթեց առյուծին, այնպես էլ Քրիստոս՝ սատանային (որ անձնավորումն է «Աշխարհ—աշխարհային»):

³⁰ Տե՛ս Բառարան Սուրբ Գրոց, Կ. Պոլիս, 1881,

Իմացաբանական նույնության և գոյաբանական տարբերության համատեղումը ալյաքանական մեկնության կարևոր առանձնահատկությունն է: Այն արտահայտվում է, «Մեղուներ-Առաքյալներ» զուգահեռով դրսևորվող, հաջորդ պատկերում: Երկատված առյուծի մեջ մեղր պատրաստող մեղուները նմանվում են առաքյալներին: Սակայն այդ նմանությունը ամենևին էլ չի ենթադրում կատարյալ նույնություն. «Մեղուք արագաթեք զգաւառին վայրօք ևեթ կարեն շրջել, զառօրեայ փոշի ծաղկանցն ի նիւթ մեղուազործութեանց փութան մատուցանել: Առաքեալքն անթեք և թևաւորք, հեռաստանն իբրև մօտաւորս մեղրագործեցին: Ջինչ ծաղիկք պատուականք իցեն, զոր ոչ յԱռաքեալսն տեսանիցես. զհին աշխարհս նորոգեցին, որպէս մեղուքն զմեռեալ առիծն նոր ծաղկօք նորոգեցին» (189): Ինչպես մեղուներն են նորոգում առյուծին՝ նրա մեջ մեղր պատրաստելով, այնպես էլ առաքյալներն են Ս. Հոգու մեղրով նորոգում «զմեռեալ առիծն», որ, ինչպես տեսանք, մեղավոր աշխարհի խորհրդապատկերն է: Այսօրինակ նմանությունն իր գուգորդական բնույթով իմացաբանական է: Սակայն վերջինիս հավասար իրավունքով սահմանակցում է գոյաբանությունը. եթե մեղուները կարող են լոկ իրենց «զգաւառին վայրօք ևեթ... շրջել» և «զառօրեայ փոշի ծաղկանցն ի նիւթ» հավաքել, ապա առաքյալները, լինելով «անթեք և թևաւորք՝ զհեռաստանն իբրև մօտաւորս մեղրագործեցին», այսինքն՝ որևէ վայրով չսահմանափակվելով, աշխարհի չորս ծագերը գնացին և «պատուական» ծաղկանց (Ս. Հոգու) մեղրով «զհին աշխարհս նորոգեցին»³¹:

Էջ 49: А. Гуревич, *Мир и родос мира*, т. 2, с. 48: Средневековая Бесни-рун, текст под К. Муратова, М., 1984. с. 23, 75. Հմմտ. Լ. Ազարյան, Հայկական միջնադարյան պատկերագրության պատմությունից (վաղ շրջան)— «Հայկական արվեստ», 1, Հին և միջին դարեր, Երևան, 1974, էջ 89:

³¹ Ըստ երևույթին այս պատկերն է աչքի առջև ունեցել Համամ Արևելցին (Թ դ.) Առակաց մեկնության Ռևտկյալ տողերը շարադրելիս. «Աքանչևի մեղուս աստուածային Օրինացն փափագողք և բերող աստուածային ծաղկանց՝ աստուածախօս մարգարէք և առաքեալք: Արդ, առ այնպիսին յղէ ձեզ իմաստունս, ասելով. Եթե առ մեղուս գործասերսն, որք թշկնցին զհիւանդութիւն բնութեանս քաղցրախօս քարոզութեամբն». տե՛ս Ն. Եպս. Պողարյան, Հայ գրողներ, Ե—ԺԷ դար, Երուսաղեմ, 1971, էջ 129:

Այսպիսով մեկնողական մտակառուցման այս երկու սկզբունքները (իմացաբանություն և գոյաբանություն), սահմանակից լինելով իրար, տարբերվում են իրարից: Այստեղ իմացաբանությունը գոյաբանությանն ակատմամբ արտաքին, իսկ գոյաբանությունը իմացաբանությանն ակատմամբ խորքային իրողություն է: Էության ու երևույթի, տարբերության և մեանության այսօրինակ համատեղումը հնարավորություն է տալիս բացահայտել մասնավորաբար սուրբգրային մեկնություններին հատուկ հակադրամիասնական և հակօրինական (անտիմոսիկ) սկզբունքների բուն ակունքները: Այլաբանական իրողությունների խնդրո առարկա հակադրամիասնությունը մեկնողական հակօրինականության վաղագույն մոտիվներից է: Ի տարբերություն ավելի ուշ (գերազանցապես քաղաքական ակատառումներով) հանդես եկած դավանաբանական հակօրինակության, այն հայտանշում է միջնադարում լայնորեն կիրարկվող այլաբանական մտակառուցման «պարադոքսալ» բնույթը:

Միջնադարյան կերպարվեստի խորհրդանշական առանձնահատկությունների բացահայտման տեսակետից դարձյալ հետաքրքրական է Գոտտո, Գավազանի, Կոշիկի և Մրագի հետևյալ այլաբանությունը. «Դարձեալ ասելով գօտիք ընդ մէջ և կօշիկ յոտս, ցույլ ի ձեռին, ճրագունք լուցեալք. ամենեքեան այսք նշանակք են արութեան պնդութեան՝ առժամայն յեւս գաղթին փոթք, իսկ առ յապա՝ գաղութ լինել ի բնաւ աշխարհիս կենաց: Քանզի գօտիքն ուսուցանեն զարիական պատերազմն, և ցուպքն՝ զարքունեանն և զխրատականն, իսկ կօշիկքն՝ զաներկիւղութիւն ճանապարհին՝ անվնաս գնալով ի վերայ թիւնաքեր սողնոց և լուցեալ ճրագունքն զանշէջ մտաց մարդոյն լուսաւորութիւն, որ զՏէր խորհրդոյն ի հեռաստանէ իբրև ի մօտոյ տեսանէ...» (245—246): Գոտտո, Գավազանի, Կոշիկի և Մրագի այսօրինակ բացատրությունը մասամբ բխում է Աստվածաշնչից: Գոտին արիության, զգոնության, տոկունության, համբերության և ողջախոհության խորհրդանշ է³²: «Գոտի ընդ մեջ» արտահայտությունը նշանակում է նախապատրաստվել կատարելու կարևոր ու վեհ գործ³³: Գավազանը ոչ միայն իշխանության և խրատի խորհրդ-

դանիշ է³⁴, այլև «խորհուրդ կրկին ունի ցուցանել զճշմարտութիւնն. նախ՝ հովուական, և ապա՝ վարդապետական» ասված է Ներսէս Շնորհալու Բարձրացուցեքի մեկնության մեջ³⁵: Կոշիկները ապահով ընթանալու, չարը խափանելու³⁶, իսկ Մրագը աստվածային իմաստություններ ընկալող մարդկային մտքի խորհրդանշն է:

Մեկնաբանելով Տիրեբական ծովում ձուկ որսալու մանրամասները, Եղիշեն գրում է. «Եւ քանզի թուով են երկոտասանք, և երկու են լարք ուռկանին, և չորք ծագ լարսցըն, յորոց երեք-երեք զմի-մի ծագ առնուն, քանզի երեք կրկինդ է անվթար հաստատութիւն. մի կողմն ընդ արևմուտս, միսն՝ զոյգ միմն ընդ արևելս, և երկուսն՝ ընդ հիսիս և ընդ հարաւ: Եւ թողրալ պարտրաձև. զամենայն աշխարհս ի ներքս առեալ փուկեցին... ասացից քեզ և զուռկանն և զուռկանաւորսն, և զորս ձկանցն ի քէն ոչ թաքուցից... ծովն աշխարհս է, ուռկանն՝ քարոզութիւն Տեառն, ծագք ուռկանին՝ չորք աւետարանք, ուռկանաւորք՝ երկոտասան առաքեալքն, որսք ձկանցն՝ ամենայն ազգք հեթանոսաց, իսկ խանձոցն ի միջին՝ մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և միջոցք ամենայնի՝ հաւատք ճշմարիտք» (338): Այլաբանական այս բացատրությանը հետևում է Զկնորսության ընդհանրական խորհրդի մեկնությունը. Զրկնորսությունը Աստծո և մարդու մերձեցման խորհրդանշն է. մերձեցում, որ իրականացվում է մի կողմից Հոգու զորության, այն է՝ Աստծո «վերոյ ի վայր» խոնարհումով, այսինքն՝ մարմնացմամբ ու տնօրինական գործունեությամբ, և, մյուս կողմից, մարդկային հավատի «ներքոյ ի վեր» ուղղումով, որ «ըստ իմանալի խոհականութեանն, զերկրաւորս յերկնայինսն մերձեցոյց» (342—343): Վերին և ստորին իրականությունների մերձեցման նպատակը մարդու ոգեղինացումն ու փրկությունն է:

Եղիշեի վերոբերյալ մեկնաբանությունները օգնում են ճիշտ հասկանալ այլաբանական այն իմաստը, որ տրվել է հիշյալ առարկաների, ինչպես նաև՝ Պայծառակերպության և Զկնորսության պատկերագրությանը հայ միջնադարյան կերպարվեստում:

³² Անդ, էջ 109:

³³ «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», Բ. Ա, էջ 532:

³⁴ Բյուզանդական մատենագրության մեջ կոշիկները համարվել են դեպի Աստվածություն առաջնորդող ճանապարհների խորհրդանշ. տե՛ս Ա. Պ. К-ждан, Византийская культура, М., 1968, с. 165:

³² Տե՛ս Բառարան Սուրբ Գրոց, էջ 124: «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», Բ. Ա, Վեներիկ, 1836, էջ 589:

³³ Բառարան Սուրբ Գրոց, էջ 124:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АВГУСТ 1989 г.)

1. Посещение сенатора Роберта Дола в Первопрестольный Эчмпадзин, 23—24 августа 1989 г. Также помещены письма президента США Джорджа Буша (16 августа 1989 г.) и Роберта и Элизабет Долов (28 августа 1989 г.) — (стр. 3—6).

2. Встреча бывших армянских учеников Румынии со своим учителем—Католикосом всех армян Вазгеном I в Первопрестольном Эчмпадзине (стр. 7—11).

3. Священническое рукоположение в храме св. Рипсимэ, 1—2 июля 1989 г. и биография священника Мкртыча Товмасына (стр. 12—14).

4. Юрий Вартамян—Перезахоронение останков архиепископа Месропа Тер-Мовсисяна из городского кладбища гор. Еревана на монастырском кладбище храма св. Гаянэ (стр. 15—17).

5. Церковная хроника Первопрестольного Эчмпадзина за август месяц (стр. 18).

6. Аргам Довлатян—Посещение Католикоса Хримяна Айрика в 1905 г. в г. Ехегнадзор (стр. 19—21).

7. Ованнيس Такукян—Священнослужитель, патриот (биографический очерк архиепископа Мамбре Сируняна по случаю 100-летия со дня рождения) — (стр. 22—29).

8. Годовая сессия Центрального Комитета Всемирного Совета Церквей в г. Москве, 16—27 июля 1989 г. (стр. 30—31).

9. Вторая международная встреча мира в г. Риме, 26—29 октября 1988 г. (стр. 32).

10. Аветис Арутюнян—Съезд беженцев 1915 г. г. Эчмпадзина и его историческое значение (исследование)—(стр. 33—37).

11. П. А. Акопян—Незнакомый автограф Налбандяна (исследование)—(стр. 38—47).

12. Григор Хачатурович Аракелян—Заслуживающий внимания документ касательно спора «Давид-Дениэлян» (исследование)—(стр. 48—51).

13. Г. Г. Кеосеян—Символ Египта в комментаторском и описывающем сочинениях (исследование)—(стр. 52—60).



„ETCHMIADZIN“
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST 1989)

1. The visit of american senator Robert Dole to Holy Etchmiadzin, 23—24th August 1989. The letters of Mr. George Bush, the president of U. S. A. (16th August 1989) and of Mr. & Mrs. Robert and Elizabeth Doles addressed to His Holiness Vasken I (28th August 1989)—(pp. 3—6).
2. The visit of the former Roumanian—Armenian pupils to Holy Etchmiadzin, to their teacher Vasken I, the Catholicos of All Armenians (pp. 7—11).
3. Sacerdotal ordination in the monastery of Holy Hripsimeh, 1—2nd July 1989 and the biography of Father Mekrditch Thovmassian (pp. 12—14).
4. Yoori Vartanian—Transfer of the ashes of Archbishop Mesrob Der—Movsisian from the cemetery of Yerevan to the monastic cemetery of the Holy Qayneh church (pp. 15—17).
5. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of Church festivities in the Holy See during the month of August 1989 (p. 18).
6. Argam Dovlatian—The visit of Catholicos Mekertich to Yegheknadzor during 1905 (pp. 19—21).
7. Hovhannes Takookiau—„The clergyman and the patriot“ (biographical outlook on the occasion of the 100-th birth anniversary of Archbishop Mambreh Siroomian)—(pp. 22—29).
8. The annual session of the World Council of Churches' Central Committee in Moscow, 16—27th July 1989 (pp. 30—31).
9. The second international meeting of peace in Rome, 26—29th October 1988 (p. 32).
10. Avedis Harootiunian—The congress of the Armenian emigrants of Etchmiadzin in 1915 and its historical signification (study)—(pp. 33—37).
11. B. H. Hagobian—The unknown autograph of Mikael Nalbandian (study)—(pp. 38—47).
12. Grigor Arakelian—A remarkable document about the „David—Daniellian“ polemic (study)—(pp. 48—51).
13. H. H. Keuseyan—The symbol in the exegetical writings and the discourses of historian Yeghisheh (study)—(pp. 52—60).





"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIÈGE D'ETCHMIADZINE
(AOÛT 1989)

1. Visite du sénateur américain Robert Dole au Saint-Siège d'Etchmiadzine (23-24 août 1989). Traduction des textes de la lettre de George Bush, président des États Unis, et de celle des époux Robert et Elisabeth Dole adressées à Sa Sainteté Vasken Ler (pp. 3-6).

2. Rencontre de Sa Sainteté avec ses anciens élèves arméniens de Roumanie dans la résidence patriarcale, à Saint-Etchmiadzine (pp. 7-11).

3. Ordination sacerdotale au monastère de Ste. Hripsimée (1-2 juillet 1989). Biographie du Père Mekeritch Tovmassian (pp. 12-14).

4. Youri Vartanian--Transfert des cendres de l'archevêque Mesrop Ter-Movsisian du cimetière de la ville d'Erévan à celui du monastère de Ste. Gayanéc (pp. 15-17).

5. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois d'août 1989 (p. 18).

6. Argam Dovlatian--Visite du catholicos Me-

keritch Khrimian à Yégheknadzor en 1905 (pp. 19-21).

7. Hovhannès Takoukian--"Le religieux et le patriote" (aperçu biographique à l'occasion du centenaire de la naissance de l'archevêque Mambré Sirounian) (pp. 22-29).

8. Session annuelle du Comité central du Conseil Oecuménique des Eglises tenue à Moscou du 16 au 27 juillet 1989 (pp. 30-31).

9. Deuxième conférence internationale de la paix tenue à Rome du 26 au 29 octobre 1989 (p. 32).

10. Avétis Haroutiounian--"Le Congrès des émigrés arméniens tenu à Etchmiadzine en 1915 et sa signification historique (étude)" (pp. 33-37).

11. P. H. Hakooian--"L'autographe inconnu de Mikael Nalbandian" (étude) (pp. 38-47).

12. Grigor Arakélian--"Un document remarquable sur la polémique David-Dantélian" (étude) (pp. 48-51).

13. H. H. Keusseyan--"Le symbole dans les écrits exégétiques et les discours de l'historien Yéghiché (étude)" (pp. 52-60).